Ի՞ՆՉ ԱՆԵԼ

գիտագործնական խորհրդաժողով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿՆԱՐԵՍ

ԻՆՉ ԱՆԵԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

գիտագործնական խորհրդաժողով

Ակնարեն
Երևան
2018

ՀՏԴ 330.34(479.25):06
ԳՄԴ 65

**Հրատարակությունը երաշխավորել է
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
գիտական խորհուրդը**

**Գրքի հրատարակումը նախաձեռնել և տպագրությունը հովանավորել է
Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությունը**

Խմբագիր՝ **Լուսյա Մեհրաբյան**

Ինչ անել. Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները և ռազմավարական ուղղությունները: Գիտագործնական խորհրդաժողով / Խմբ.՝ Լուսյա Մեհրաբյան: Եր.: Անտարես, 2018.– 148 էջ:

Հոդվածների ժողովածուն հայ տնտեսագետների կողմից կատարված հետազոտական և գիտավերլուծական աշխատանքի արդյունքում առաջարկվող լուծումներ են տարաբնույթ այն խնդիրների վերաբերյալ, որոնք ՀՀ անկախության տարիներին ձևավորվել են նոր տնտեսական համակարգը կայացնելու և շարունակաբար բարեփոխելու գործընթացում: Խորհրդաժողովի քննարկմանը ներկայացվող տնտեսագիտական խոսքին կգումարվեն նաև անվանի գործարարների և պետական կառավարման համակարգի ներկայացուցիչների գործնական աշխատանքի փորձառությունն ու ակնկալիքները:

ISBN 978–9939–76–332–3

Անտարես

© ՀԱԳՄ, 2018
© ԵՊՀ տնտեսագիտության և
կառավարման ֆակուլտետ, 2018
© Անտարես, 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբանի փոխարեն **5**
Արսեն Ղազարյան, Հայկ Սարգսյան

ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ **7**

Իշխանության գերխնդիրը սահմանադրականության մակարդակի բարձրացումն է **9**
Հայկ Սարգսյան, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ տնտեսության պետական կառավարման համակարգի բարելավման հիմնական ուղիները **17**
Աշոտ Մարկոսյան, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Հասարակական նոր պայմանագրի հարցի շուրջ **28**
Վահագն Խաչատուրյան, տնտեսագետ

Ինստիտուցիոնալ վերափոխումների արդի առանձնահատկությունները ՀՀ-ում **37**
Ռուբեն Գևորգյան, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ տնտեսության արդի բնութագրերն ու զարգացման հիմնախնդիրները **43**
Բագրատ Ասատրյան, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՀՀ տնտեսական զարգացման հայեցակարգային հիմնախնդիրները **51**
Գագիկ Վարդանյան, ՀՊՏՀ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Երկրների բազմաբնույթ վերափոխումների համեմատական արդյունավետության գնահատումը և վերլուծությունը **60**
Սամսոն Դավոյան, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական և ֆինանսական իրավիճակի փոփոխման միտումները **71**
Վիլեն Խաչատրյան, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ 77

«Մեծ մետաքսե ճանապարհ» ծրագրին Հայաստանի ինտեգրման հնարավորությունները 79
Վարդան Բոստանջյան, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ուղղակի հարկերի արդիականացումը ՀՀ-ում..... 88
Էդուարդ Սանդոյան, Հայ-Ռուսական համալսարանի տնտեսագիտության և բիզնեսի ինստիտուտի տնօրեն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ազգային հարստությունը որպես տնտեսության կապիտալացման աստիճանի գնահատման հիմնական ցուցանիշ 95
Աշոտ Մարկոսյան, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Էլյանորա Մաթևոսյան, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ, տնտեսագիտության թեկնածու

Ավելացված արժեքի աճի ապահովման կայուն արտահանման գործոնը 107
Արամ Առաքելյան, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ վարկային շուկայի կառավարման արդի վիճակը. հիմնախնդիրներ և մարտահրավերներ 120
Խորեն Մխիթարյան, ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տնտեսագիտության դոկտոր

Ներդրումային միջավայրի բարելավման արդի խնդիրները ՀՀ-ում 127
Հայկ Մնացականյան, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Փոխադարձ ներդրումները ԵԱՏՄ երկրներում. հետահայաց վերլուծություն 132
Իրինա Պետրոսյան, Հայ-Ռուսական համալսարանի տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների ամբիոն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Արժութային փոխարժեքի ձևավորման հիմնական գործոնների գնահատումը Հայաստանում..... 139
Էդուարդ Սանդոյան, Հայ-Ռուսական համալսարանի տնտեսագիտության և բիզնեսի ինստիտուտի տնօրեն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Մարիամ Ոսկանյան, Հայ-Ռուսական համալսարանի էկոնոմիկայի և ֆինանսների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ,
Անի Գալստյան, Հայ-Ռուսական համալսարանի հայցորդ

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Մեր երկրի տնտեսության շեշտակի վերելքն առաջիկա տարիներին իրատեսական է, որի հասանելիությունը էապես պայմանավորված է լինելու վաղվա օրվա նկատմամբ վստահությամբ ու արդյունավետ տնտեսվարման մեր կարողունակությամբ:

Ինքնիշխանության պարագայում էլ այլ երկրների հետ խորը տնտեսական ինտեգրումը այլընտրանք չունի: Փոքր և բաց տնտեսությամբ մեր երկրին աշխարհաքաղաքական վերադասավորումների ներկա փուլում բնորոշ է տնտեսական փոխլրացման խորացող քաղաքականությունը: Ստեղծվել է աննախադեպ իրավիճակ, երբ Հայաստանի Հանրապետությունը կամրջող դերակատարում կարող է ստանձնել բարեշրջվող Եվրամիություն-Հայաստան-Եվրասիական տնտեսական միություն հարաբերություններում: Ավելին՝ այդ հարաբերությունները ինտենսիվորեն կարող են ծավալվել նաև մեզ բարեկամ-հարևան և այլ երկրների հետ:

Հաջորդ հիմնարար խնդիրն արդյունավետ տնտեսության կառուցումն է: Երկարատև կայուն տնտեսական աճին ուղղված քաղաքականությունը կարող է իրագործվել հասարակական ընտրության հիմքի վրա կառուցվող՝ մեր միաբան ու համահավաք կազմակերպվածությամբ, դրանով իսկ մեր տեղը ամրագրելով առաջավոր հասարակությունների ընտանիքում: Կառավարության, գործարար միջավայրի և ակադեմիական շրջանակների սերտ համագործակցությամբ է միայն հնարավոր երկրում իրագործել արդյունավետ վերափոխումներ:

Ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու և կազմակերպվելու մեր բացառիկ ունակությունները թույլ են տալիս հիշատակել իսլանդացի տնտեսագետ Թ. Էգերսթոնի այն ընդհանրացումը, ըստ որի «տնտեսական աճը և երկրի զարգացումը հիմնականում կախված չեն գոյություն ունեցող կառավարության տիպից, եթե գործարքային ծախսերը տնտեսական և քաղաքական ասպարեզում հավասար են զրոյի: Սակայն, եթե գործարքային ծախսերը դրական են, ապա իշխանության բաշխումը երկրի ներսում և նրա իրավաստեղծ կազմակերպությունների ինստիտուցիոնալ կառուցվածքը նրա զարգացման կարևորագույն գործոնն են»: Նշենք, որ գործարքային ծախսերը, որոնք ներառում են ծրագրերի ընդունման, որոշումների կայացման ու բանակցությունների վարման, փոփոխությունների ու գործարքի պայմանների վերանայման, վիճելի հարցերի լուծման, պայմանավորվածությունների պահպանման և այլ ծախսերը, առաջանում են շուկայում (շուկայական գործարքային ծախսեր), կազմակերպություններում (կառավարչական ծախսեր) և կառավարության մակարդակում: Օպտիմալ

կառավարման համար գործարքային կամ, այլ կերպ, «շփման ուժի հաղթահարման» ծախսերը պետք է կարողանալ առավելագույնս կրճատել տնտեսական ու քաղաքական բոլոր բաղադրիչներով՝ շուկայում, կազմակերպություններում և կառավարության մակարդակում (քաղաքական գործարքային ծախսեր): Տնտեսական քաղաքականություն իրականացնողների կողմից այս երաշխավորություններին հետևելը և դրանք կյանքում կենսագործելը, թերևս, ձեռքբերումների ու վերելքի գրավական է: Իսկ որքան առավել ու հետևողական լինի կենսագործումը, այնքան շեշտակի կլինի վերելքը:

«Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները և ռազմավարական ուղղությունները» վերտառությամբ խորհրդաժողովին ներկայացվող սույն ժողովածուն խնդիր ունի իշխանությանը ներկայացնելու (թեզերի տեսքով), թեկուզև ընտրովի ու հատվածային, սակայն, հեղինակների կարծիքով, խիստ կարևոր ու հանգուցային տեսակետներ, որոնք ուղղված են երկրում գործարար միջավայրի բարելավմանը, ստեղծագործ աշխատանքի խթանմանը և, վերջապես, որոշումների կայացման հիմնավորվածության աստիճանի բարձրացմանը:

Հարցադրումները կարող են օգտակար լինել կառավարության սոցիալ-տնտեսական ամբողջական ու ոլորտային զարգացման հայեցակարգերի ու ծրագրերի մշակման գործընթացում:

Հայաստանի արդյունաբերողների ու
գործարարների միության նախագահ
Արսեն Ղազարյան

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման
ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր
Հայկ Սարգսյան

ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԽՆԴԻՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄՆ Է

Հայկ Սարգսյան
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
sargsyan.ysu@gmail.com

ՀՀ իշխանությունների օրակարգային խնդիրների շրջանակը առաջիկա տարիներին մեզ պատկերվում է հետևյալ առաջնահերթ գործողություններով.

- արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո իշխանությունները ձեռնամուխ են լինում սահմանադրական անհրաժեշտ բարեփոխումներին,
- ամբողջացվում և համակարգվում են երկրում թռիչքաձև, երկարատև ու կայուն տնտեսական զարգացմանը միտված գործողությունները:

Համոզված ենք, որ վերոնշյալ նախապայմանների լիիրավ և հետևողական իրագործումը բավարար հիմքեր կստեղծեն բարեկեցիկ և հզոր Հայաստան ունենալու համար: Բարեկեցիկ ու հզոր Հայաստանի տեսլականը կյանքի կոչելուն ուղղված նպատակադրումները ենթադրում են որդեգրել *նորովի մոտեցումներ նաև տնտեսության կառավարման հայեցակարգերում և ծրագրերում*: Այսօր փոխվում ու վերաիմաստավորվում են պետական միջամտության ձևերի ու եղանակների, տնտեսաիրավական կարգավորումների վերաբերյալ գիտական ձեռքբերումները: Այդ մասին են վկայում տնտեսագիտության ոլորտում շնորհվող Նոբելյան մրցանակները: Կուտակված առաջատար փորձի հետ հաշվի նստելն անխուսափելի է: Հասարակության կազմակերպման առանձնահատուկ ինստիտուտի՝ պետության զինանոցի գործադրման հնարավորությունների համակողմանի բացահայտումն անհրաժեշտ է իրականացնել ուսումնասիրության միջգիտակարգային՝ իրավագիտական, քաղաքագիտական, տնտեսագիտական հատույթներով ամբողջացող տիրույթում: Առավել բարդ են հատկապես պետության կայացվածության աստիճանի գնահատմանն ուղղված ուսումնասիրությունները, որոնք նույնպես բազմասպեկտ են: Պետության կայացվածության բնութագրական ցուցանիշների վրա հենվող վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ *պետության կայացվածության և*

սահմանադրականության մակարդակը բնութագրող ցուցիչների միջև առկա է ուղիղ ֆունկցիոնալ կապ: Պետության կայացվածության աստիճանը և սահմանադրականության մակարդակը ինչ-որ տեղ հանդես են գալիս որպես համարժեք իրողություններ:

Տնտեսագետներն իրազեկ են, թե տարբեր ժամանակներում, տարբեր երկրներում ինչ եղանակներով ու գործիքակազմով են կառավարողները կարողանում պայմաններ ստեղծել հանրության, նրա տարբեր շերտերի անհատների պահանջմունքների բավարարման համար, ինչպես են, ըստ այդմ, գործել մարդու կողմից ստեղծված սահմանափակումները կամ, այլ կերպ՝ «խաղի կանոնները» թելադրող ինստիտուտները: Հայտնի է, որ այդ կանոններն ու նորմերը ամրագրվում են երկրների սահմանադրություններում ու մայր օրենքներում: *Ամրագրվում են, սակայն ոչ ամբողջությամբ իրացվում կյանքում:* Եթե երկրի սահմանադրության մեջ ամրագրված սկզբունքները, նորմերը պատշաճ ձևով կյանքի չեն կոչվում, ապա դրա արդյունքում ունենում ենք սահմանադրականության դեֆիցիտ, որը հանգեցնում է մարդկանց վստահության և լավատեսության կորստի, անտարբերության, քաղաքացիական և սոցիալական ակտիվության պակասի, հուսահատության, իսկ դեֆիցիտի վառ արտահայտվածությունն արդեն բերում է հասարակության ընդվզմանը, որի ականատեսները մենք եղանք 2018թ. ապրիլ-մայիս ամիսներին: Գիտակցելով խնդրի կարևորությունը՝ մի առիթով գրել եմ, որ կառավարության «ռադարային էկրանի» վրա պետք է լինեն սահմանադրականության վիճակի բնութագրիչները: Այդ գերխնդիրը մեր կողմից լայնորեն լուսաբանվել է նաև այլ հրապարակումներում[1]:

Մասնագիտական գրականության մեջ պետության կայացվածության առանձնացվող չափորոշիչներից են պաշտպանունակությունը, իրավունքի գերակայությունը, կայուն զարգացումը, մեկ այլ դեպքում համադրվում են ռազմական ուժը, քաղաքական ինստիտուտների կենսունակությունը, վարչարարական կարողությունները, արտադրողականությունը և այլն: Չենք սխալվի, եթե վերը թվարկված և բազմապիսի այլ չափորոշիչներով կանխորոշվող պետության կայացվածության ինտեգրալ գնահատականն ամփոփենք երկրի բարեկեցության ցուցիչով:

Դիտարկված անցումային երկրների ցուցչակազմում ժողովրդավարական զարգացումների և ինստիտուցիոնալ զարգացման ցուցիչների

[1] Հիմնախնդրին առնչվող հարցադրումները արծարծվել են նաև զանգվածային լրատվամիջոցներում՝ «**Տնտեսական աճի գաղտնիքը թաքնված է Սահմանադրականության մեջ**», http://b4b.am/archives/news, 28.07.2017, «**Մեկնարկից տնտեսական վերելք տանող ճանապարհները**», http://armtimes.com/hy/article/139508, 19.06.2018, «**Հայաստանում պատշաճ կենսամակարդակ կլինի, եթե լավ ընտրություններ և լավ Աժ ունենանք**», https://www.1in.am/2252897.html, 28.11.2017, «**Սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համադարմանը սահմանադրականության մակարդակի բարձրացման ապահովումն է,** http://gortsq.am2018:

կարևորության փաստը վկայում է այն մասին, որ զարգացման տվյալ փուլում անցումային երկրների միջև հիմնական տարբերությունները պայմանավորված չեն սոցիալ-տնտեսական զարգացումներով: Իսկ թե ինչպես է բազում հայտանիշերով որոշվում երկրի բարեկեցության ցուցիչ-սահմանադրականության մակարդակը բնութագրող ինդիկատորը, մանրամասն ներկայացված է Մեթոդիկայում[2] (էջ 189-206):

Սահմանադրականության մակարդակի բնութագրիչները դիտարկվող երկրներում 2014թ. տվյալներով







Սահմանադրականության <u>բարձր</u> մակարդակով քլաստերի միջինի համեմատ առավել մեծ տարբերություններ առկա են ինստիտուցիոնալ զարգացումների և քաղաքական կայունության ցուցիչների մասով: Դրանք համեմատական քլաստերային վերլուծության օգնությամբ որոշված հենց այն ցուցիչներն են, որոնց պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել քաղաքականության գերակայությունների մշակման ժամանակ:

Սահմանադրականության <u>միջին</u> մակարդակ ունեցող երկրների քլաստերում, որտեղ «տեղավորվել է» Հայաստանը, ունի ժողովրդավարական զարգացումների ինդիկատորի համար տվյալ քլաստերի միջինից բավական ցածր ցուցիչ: Նկատենք, որ այս գնահատումները վերաբերում են 2014թ.-ին, որում ներառված չէ 2018թ. ապրիլ-մայիսը՝ ՀՀ քաղաքացիական հասարակության ընդվզումը: Կարևորության առավել <u>*ցածր*</u> մակարդակ ունեն սոցիալ-տնտեսական ցուցիչները՝ աղքատության մակարդակ և Ջինի գործակից: Քլաստերային վերլուծությունը

[2] Տես, Գ. Հարությունյան, Հ. Սարգսյան, Ռ. Գևորգյան, Սահմանադրականություն. ինստիտուտների ընկալումը և երկրների բարեկեցությունը: - Եր.: Զանգակ հրատ., 2018, 208 էջ:

թույլ է տալիս հետազոտել սահմանադրականության համեմատական մակարդակն առանձին երկրի համար և հետևություններ անել, թե տվյալ քլաստերը որ գործոններն է ընդգրկում, որոնք պետք է հատկապես կարևորվեն սահմանադրական կարգավորման ոլորտում քաղաքականության մշակման պատասխանատուների կողմից: Օգտվելով տեղեկատվական մի շարք աղբյուրներից[3]՝ վերը հիշատակված Մեթոդիկայով սահմանադրականության մակարդակի ախտորոշումը փորձարկվել է նախկին ԽՍՀՄ-ի և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի անցումային 29 երկրների կտրվածքով և իրականացվել է նշված երկրների քլաստերացում: Հիշատակված քլաստերացման համատեքստում առավել մեծ կարևորություն են ստացել ժողովրդավարական և ինստիտուցիոնալ զարգացումների[4], այնուհետև՝ մարդկային կապիտալի զարգացման և քաղաքական կայունության գործոնները: Գրեթե համանման հետևություններ մեր կողմից արվել են մեկ այլ ուսումնասիրության մեջ[5], որտեղ օգտագործվել է բացատրող փոփոխականների այլ համախումբ: Սա խոսում է բացատրող փոփոխականների համախմբի փոփոխման դեպքում ստացված արդյունքների հավաստիության մասին:

Գործոնների վարկանիշային գնահատականները



Սոցիալ-տնտեսական ցուցիչների բարելավման նպատակադրումը, ինչպես նաև իրագործումը, մեծ մասամբ սահմանափակված է ինստիտուտների, ժողովրդավարական գործընթացների անբավարար զարգացվածությամբ: Այս հետևությունը

[3] Համաշխարհային բանկի World Development Indicators, Անցումային տնտեսությունների համար Ֆրիդմ Հաուսի Nations in Transit, Կառավարման որակի World Governence Indicators, Թրանսփերենսի ինթերնեյշնլի Corruption Perseption Index, ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի Human Development Index և այլ շտեմարաններ:

[4] Ժողովրդավարական և ինստիտուցիոնալ զարգացումների բնութագրիչները, որոնք «զտվել են» ավելի ընդգրկուն ցուցչակազմից, հետևյալն են՝ քաղաքացիական հասարակություն, քաղաքական բազմակարծություն, խոսքի ազատություն, կազմակերպությունների իրավունք, ընտրական գործընթացներ, դավանանքի ազատություն, անհատական ինքնավարություն, անկախ մեդիա, կառավարության գործունեության արդյունավետություն, ունեցվածքի իրավունք, կոռուպցիայի ընկալման համաթիվ, իրավունքի գերակայություն և կարգավորման որակ:

[5] Տե՛ս, Գ. Հարությունյան, Հ. Սարգսյան, Ռ. Գևորգյան, Սահմանադրականություն. ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման խնդիրներ:– Եր.: Զանգակ հրատ., 2017, 139 էջ:

տվյալ հետազոտության առավել կարևոր արդյունքներից է՝ երկրում սահմանադրականության մակարդակի բարելավման ուղղությամբ քաղաքականություն վարելու առաջարկների տեսանկյունից: Որպես վարկած կարելի է ենթադրել, որ անցումային երկրներում տնտեսության հետագա վերելքը, որն այլևս «վերականգնվող» չէ, մեծապես պետք է կանխորոշվի ժողովրդավարական և ինստիտուցիոնալ բարելավումներով:

Այն պնդումը, որ ժողովրդավարական և ինստիտուցիոնալ գործոնների թերզարգացվածությունը վերաճում է սոցիալ-տնտեսական զարգացման վճռորոշ խոչընդոտի, միշտ չէ, որ միանշանակ է ընդունվում: Հակադարձվում է, որ ակներև է՝ մինչև չվերացվի կոռուպցիան, չլավացվի մրցակցությունը, չբարելավվի դատաիրավական համակարգը, կշարունակենք դոփել տեղում: Այդ ամենը ճշմարիտ է, սակայն խնդիրը այն է, թե իրավիճակ փոխելու առումով ի՞նչ են հուշում գիտական հետազոտությունները տվյալ ոլորտում: Ինչի՞ց պետք է սկսել և ի՞նչ ու ինչպե՞ս անել: Պատասխանը՝ մեկ պարզ օրինակով: Խնձորի՝ ծառից վայր ընկնելու պատճառը հայտնի է, բայց երբ այդ նույն խնձորը տեղադրում են օդապարիկում, այն վեր է բարձրանում: Երկու դեպքում էլ կա գիտական բացատրություն: Մասնավորաբար, ինչ անել, որ գործընթացը կառավարվի: Երկրներում սահմանադրականացման գործընթացները պահանջում են փոխկապակցված բազմաբնույթ խնդիրների համատեղ (ցանցային) լուծումներ: Դրանք անհրաժեշտ է դիտարկել որոշակի ցուցիչների (ինդիկատորների) համախմբով, համաշխարհային զարգացման օրինաչափությունների վերադրմամբ: Առանց պատշաճ գիտական սպասարկման ու հիմնավորման՝ չի կարելի ակնկալել լուրջ արդյունքներ: Ի վերջո, պատճառահետևանքային կապերի հանգույցում պետք է բացահայտվեն առաջընթացի խոչընդոտներն ու խթանիչները, դրանց դիրքավորումները և մշակվեն իրավատնտեսական կարգավորումների գործուն մեխանիզմներ:

Ընդունված տեսակետ է, որ երկրների բարեկեցությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, ինչպիսիք են աշխարհագրական դիրքը, կլիման, բնական և մարդկային ռեսուրսները, կրոնը, պատմականորեն ձևավորված փոխհարաբերությունները հարևան երկրների հետ և այլն: Սակայն Դ. Աճեմօղլին և Ջ. Ռոբինսոնն ապացուցել են, որ երկրների բարեկեցության մակարդակը ոչ միշտ է բացատրվում միայն այդ գործոններով: Նրանք ցույց տվեցին, որ երկրների ծաղկումն ու անկումը առնվազն պայմանավորված են նաև ձևակարգված քաղաքական և տնտեսական ինստիտուտների որակով և կարողունակությամբ: Մեր կողմից իրականացված էմպիրիկ վերլուծությունների արդյունքում

ցույց է տրվել նաև, որ կարևոր նշանակություն կարող են ունենալ մարդկանց վարքագծային նախադրյալները, ինստիտուտների ընկալումը, սահմանադրական ավանդույթներն ու սահմանադրական կայունությունը:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ սոցիալական և տնտեսական առաջընթաց կարող ենք երաշխավորել միայն սահմանադրականության դեֆիցիտի հնարավորինս կրճատմանը համընթաց: Պատրանքներից զերծ մնանք, որ իրավունքի գերակայության ու կայուն զարգացման, հակակշիռների ու զսպող մեխանիզմների ցուցիչների բարելավումը կընթանա շատ արագ և կփոխվի մեր մտածողությունը: Հետևողական ու անշրջելի բարեփոխումները կնպաստեն արդարության հասնելուն և կոռուպցիան իսպառ արմատախիլ անելուն:

Վերը շարադրված հայեցակարգային ու ռազմավարական հարցադրումների համատեքստում նախանշենք երկարատև կայուն տնտեսական զարգացումն ապահովող որոշ առաջնահերթություններ, որոնք, անշուշտ, կնպաստեն սահմանադրականության մակարդակի բարձրացմանը:

1. Միաժամանակյա և փոխկապակցված բարեփոխումների իրագործում քաղաքական ու տնտեսական ինստիտուտների կտրվածքով՝ սկսելով քաղաքացիների ամենօրյա շահերը սպասարկելուն միտված պետական ծառայությունների ոլորտից: Այդ բարեփոխումների ներկապնակը ընդգրկուն է: Այն վերաբերելու է տնտեսությունում կառուցվածքային փոփոխություններին (հատկապես իրական հատվածում), դատական համակարգին և այլն:

2. Անցում հաստատված տնտեսակարգից իրական ազատական տնտեսակարգին: Որոնք են ակնկալիքներն այդ ասպարեզում: Նախ, հիմնովին պետք է փոխվեն իրական ազատական տնտեսական հարաբերությունների մասին մեր ընկալումները: Այսօր առկա են այն բոլոր արատավոր սահմանափակումները, որոնց մասին ավելի քան երկու տասնամյակ բարձրաձայնվել է: Իրական ազատական տնտեսակարգի մասին կառավարող էլիտայի պատկերացումներն ու ընկալումները պետք է խարսխվեն կատարյալին մոտ մրցակցության ձևավորման, ինչպես նաև մտածողության այնպիսի համակարգերի վրա, որոնց պարագայում խորթ կլինի օրինազանցության որևէ դրսևորում և երկրի բյուջեից գողանալու՝ կոռուպցիայի երևույթը: Բոլորին պետք է հասու լինի, որ կոռուպցիան նույնն է, ինչ ծնողներից ու երեխաներից գողանալու անբացատրելի ու արգահատելի երևույթը:

3. Տնտեսության արդյունավետ կառավարման հաջորդ գերակայությունը որոշումների կայացման ու լուծումների կենսագործման

վերակազմակերպումն է բոլոր մակարդակներում ու ոլորտներում: Նորովի մոտեցումները պետք է նպատակաուղղվեն կոռուպցիայի հնարավորության չեզոքացմանը: Եթե դրան ուղղված մտածողության համակարգի փոփոխությունը երկարատև պրոցես է, կարևոր է առաջին քայլերի հարցում ճիշտ կողմնորոշումը, որը հետագա բարեհաջող ընթացքի նախապայման է: Մի բան պետք է հստակ ընդունենք, որ կարճաժամկետ էֆեկտները երբեմն վերաճում են երկարաժամկետ կորուստների: Զարգացման տեսլականը պետք է կառուցվի հարաճուն ներդրումային հոսքերի վրա: Արդյունավետ տնտեսություն ունենալուն միտված որոշումների կայացման բոլոր ճանապարհները տանում են տարեկան մոտավորապես 2 մլրդ դոլարին համարժեք ներդրումային հոսքերի փնտրտուքին: Գիտելիքահենք կառավարումը նախևառաջ ուղղորդված պետք է լինի հանրային միջոցների յուրացման ամենատարբեր սողանցքների վերացմանը: Դրանցից ամենաէականը օրենքներում տեղ գտած տարընթերցման հնարավորությունների բացառումն է: Ոչ արդյունավետ բաշխման ու վերաբաշխման, անհարկի թույլտվությունների վրա կառուցված կառուցակարգերն ու ընթացակարգերը պարարտ հող են ստեղծում միջոցների փոշիացման ու արդյունքների յուրացման հարցում, որը, միով բանիվ, հանգեցնում է անարդյունավետ տնտեսվարման:

4. Կրթություն ստանալուց մինչև ձեռնարկատիրությամբ զբաղվելու տնտեսական հնարավորությունների վերաբաշխում: Սոցիալ-տնտեսական քաղաքականության ասպարեզում գոյություն ունեցող մոտեցումների վերաիմաստավորումն ու զարգացման ծրագրերում տնտեսական հնարավորությունների ամրագրումը վերաբերում է ***պայմանագրային էկոնոմիկային***: Դժվար չէ տեսնել, որ տնտեսությունն, ի վերջո, տնտեսվարող սուբյեկտների միջև պայմանագրերով ներկայացվող մի ամբողջական ցանց է, պայմանագրերի մի մեծ համախումբ: Շուկան, տվյալ պարագայում, ներկայացնում է մի իրավիճակ, որտեղ պայմանավորվում են: Ընդ որում, պայմանավորվում են ինչպես արդյունքի ստեղծման, այնպես էլ դրա բաշխման, վերաբաշխման (հարկման) տեղաբաշխման (այդ թվում՝ արտահանման), արտադրության ընդլայնման և ամենատարբեր հարցերում:

Տնտեսագետ կառավարողները (այդ թվում՝ մակրոմակարդակում) ուսումնասիրելով այդ պայմանավորվածությունները, ձգտում են, որ առավել բարենպաստ պայմաններ ստեղծվեն այդ գործընթացի իրագործման համար: Դրա համար ստեղծվում են բավարար տնտեսահիրավական կարգավորումներ ձեռնարկությունների միջև, գործատու-աշխատող հարաբերություններում և այլն:

Առաջադրված խնդրի համատեքստում կարևորվում է պայմանագրերի լուծման կամ վիճարկման դատաիրավական ինստիտուտի, մասնավորաբար, 2019թ. հունվարի 1-ից սնանկացման գործերով դատարանների կայացումը: Իսկ խնդիրը գերարդիական է: 2016թ. ՀՀ խոշոր և միջին առևտրային կազմակերպությունների պարտավորությունները գերազանցում են 3 տրիլիոն դրամը: Փաստենք, որ 2017թ. դատարան դիմած սնանկության գործերի թիվը շուրջ 10 հազար է, որոնցից սնանկ է ճանաչվել 3171-ը:

5. Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների շարքում է անցումը թվային էկոնոմիկային: Համաշխարհային զարգացման միտումները վկայում են, որ տեղեկատվական ու հեռահաղորդակցության ծառայությունների արտադրությունը կազմում է աշխարհի ՀՆԱ-ի շուրջ 7%-ը: Թվայնացումը միանգամայն բարձրացնում է ընկերությունների մրցունակությունը, օգնում է օպտիմալացնել ծախսերը, մեծացնել ակտիվների եկամտաբերությունը, օգնում՝ լավագույնս գնահատել սպառողների պահանջարկը: Տնտեսական բարեփոխումներին միտված վերոնշյալ հիմնաուղիները բնավ չեն ծածկում կառուցվածքային ու ինստիտուցիոնալ անհրաժեշտ փոփոխությունների ողջ տիրույթը: Եվ, ընդհանրապես, համակարգը հիմնովին փոխելու հնարավորությունները, որտեղ կա դրա անհրաժեշտությունը, միաժամանակ իրականացնելը ռիսկային է: Վերջինիս մեղմման ռիսկը ինստիտուցիոնալ տեսության մեջ հայտնի մոտեցմամբ՝ միջանկյալ ինստիտուտների կառուցումն է: Կարելի է բերել օրինակներ, որոնք ինքնուրույն քննարկման առարկա են:

Այսպիսով, արտաքին ուժերի շահերի սպասարկումից ձերբազատված քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալ բարեփոխումները և, վերջապես, տնտեսահիրավական կարգավորման ողջ զինանոցի գործադրումը, որն ուղղված է սահմանադրականության մակարդակի բարձրացմանը, կարող է իրական երաշխիք հանդիսանալ բարեկեցիկ ու հզոր Հայաստանի կերտման գործում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Աշոտ Մարկոսյան
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
կառավարման և գործարարության ամբիոն
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ashotmarkos@rambler.ru

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման արդի փուլում, և, հատկապես, 2018թ.-ի ապրիլ-մայիսին տեղի ունեցած խաղաղ, ոչ բռնի, ժողովրդական հեղափոխությունից հետո խիստ արդիական են դարձել տնտեսական վերափոխումները: Դրանց շարքում կարևորվում է պետական կառավարման համակարգի բարելավումը, ելնելով այն փաստից, որ ներկայում գործող համակարգը խիստ ծախսատար և անարդյունավետ է: Նման եզրահանգման հիմնական փաստարկն այն է, որ թեև ՀՀ-ում թողարկված ՀՆԱ-ի 80%-ը ստեղծվում է մասնավոր հատվածում, սակայն վերջին տարիներին նկատվում է պետական կառավարման ապարատի ուռճացում՝ ինչպես այդ մարմինների թվաքանակի, այնպես էլ դրանց պահպանման համար կատարվող ծախսերի տեսանկյունից:

Տնտեսական գործունեությունը վերահսկելու հատկանիշից ելնելով՝ հանրապետության տնտեսության ամբողջական պատկերն ստանալու համար համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ), կարելի է ներկայացնել հետևյալ 3 մասերով՝ պետական, ազգային մասնավոր և օտարերկրյա վերահսկողության տակ գտնվող:

Այսպես, «Պետական կառավարման մարմինների» կառուցվածքային հատվածի ՀՆԱ-ն դասվում է պետական մասին, «Տնային տնտեսություններն սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների» և «Տնային տնտեսությունների» կառուցվածքային հատվածների ՀՆԱ-ը՝ ազգային մասնավոր մասին: «Ոչ ֆինանսական կազմակերպությունների» և «Ֆինանսական կազմակերպությունների» կառուցվածքային հատվածների ՀՆԱ-ը բաշխվում է դրանց ենթահատվածներին համապատասխան:

Հանրապետության ՀՆԱ-ի (հիմնական գներով), ըստ կառուցվածքային հատվածների, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Պետական կառավարման մարմիններ» կառուցվածքային հատվածի ՀՆԱ-ն տնտեսության ՀՆԱ-ի նկատմամբ 2000-2014թթ.-ին ունեցել է 176.8% առաջանցիկ աճ

(այսինքն՝ տնտեսության ՀՆԱ-ի 1% աճին բաժին է ընկել 1.77%-ով աճ), իսկ «Ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների)» կառուցվածքային հատվածի համեմատ այդ առաջանցիկ աճը կազմել է 167.7%, ինչն էլ հանգեցրել է կառուցվածքային այդ հատվածի տեսակարար կշռի ավելացմանը 2000-2014թթ.-ին 2.0 տոկոսային կետով:

Տնտեսության կառուցվածքային հատվածների նման զարգացումներն անցանկալի են (առավել ևս այդ միտումների պահպանումը առաջիկայում), քանի որ, ինչպես հայտնի է, պետական կառավարման մարմիններում նյութական բարիքներ չեն ստեղծվում, այս ոլորտում մատուցվում են միայն հանրային նշանակություն ունեցող ծառայություններ: Իսկ, դասական տնտեսագիտության տեսանկյունից, բարիքներ ստեղծելու փոխարեն այստեղ տեղի է ունենում բարիքների սպառում:

Հետևաբար, առաջացել է անհրաժեշտություն «Պետական կառավարման մարմիններ» կառուցվածքային հատվածում իրականացնել այնպիսի բարեփոխումներ, որոնք կապահովեն՝

ա) առաջիկայում տնտեսության և նրա մյուս կառուցվածքային հատվածների (և, հատկապես «Ոչ ֆինանսական կազմակերպությունների (կորպորացիաների)» կառուցվածքային հատվածի) համեմատությամբ աճի ավելի ցածր տեմպեր,

բ) վերը նշված նպատակին հասնելու համար «Պետական կառավարման մարմիններ» կառուցվածքային հատվածի ծախսերի նվազեցում, մրցակցային և այլընտրանքային աղբյուրներից դրանց իրականացում՝ ոլորտի ծառայությունների օպտիմալացման և մասնավոր հատվածի ներուժի լայնորեն օգտագործմամբ, առանձնապես, օժանդակ կառավարչական ծառայությունների ձեռքբերման գործում:

Մեր կարծիքով, ՀՀ-ում պետական կառավարման համակարգի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է՝

- Նվազեցնել (օպտիմալացնել) ՀՀ կառավարության կազմի մեջ մտնող նախարարությունների քանակը,
- բացառել կառավարչական գործառույթների կրկնությունները, ինչպես նաև, հատկապես սպասարկման և օժանդակ կառավարչական ծառայությունները իրականացնել մասնավոր կազմակերպությունների միջոցով և մրցութային եղանակով՝ օգտագործելով արտապատվիրման (աութսորսինգի) գործիքը: Այսպիսի մոտեցումը հիմնված է այն դիտարկումների և վերլուծությունների վրա, ըստ որոնց, պետական կառավարման մարմինների ծախսերի զգալի մասը, ինչպես նաև այդ մարմինների աշխատակազմերի առյուծի բաժինը, ձևավորում են սպասարկող և օժանդակ ծառայությունները: Հաճախ պետական կառավարման

մարմինների հիմնական գործառույթներին բաժին ընկնող ծախսերին և աշխատակազմին նշված ծառայությունները գերազանցում են երկու-երեք անգամ:

Առաջադրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է լայնորեն օգտագործել ՀՀ-ում ձևավորված մասնավոր հատվածի ներուժը և դրանով իսկ հասնել պետություն – մասնավոր հատված գործընկերության ընդլայնմանը և արդյունավետության բարձրացմանը: Նշված ոլորտում աշխատանքները համակարգված իրականացնելու համար անհրաժեշտ է առաջնահերթ կարգով նախաձեռնել հետևյալ միջոցառումները.

- ՀՀ արտաքին գործերի նախարարությունը պետք է ներկայացնի միջազգային փորձի ուսումնասիրության վերաբերյալ առաջարկություններ ՀՀ-ին համանման երկրներում[6] 1-2 տիպային նախարարությունների կողմից մասնավոր հատվածից կամ այլ աղբյուրներից գնվող ծառայությունների տեսակի և ծավալի վերաբերյալ (outsourcing),
- բոլոր պետական մարմինները՝ յուրաքանչյուրն իր գործառույթների շրջանակներում, ներկայացնի միջազգային փորձի ուսումնասիրության վերաբերյալ իր առաջարկությունները համանման երկրներում համադրելի գործընկեր նախարարության կողմից մասնավոր հատվածից կամ այլ աղբյուրներից գնվող ծառայությունների տեսակի և ծավալի վերաբերյալ,
- ՀՀ արդարադատության նախարարությունը՝ հաշվի առնելով նոր սահմանադրական լուծումները, պետք է ուսումնասիրի ներկայիս ՀՀ կառավարության որոշումների թվաքանակի կրճատման հնարավորությունն՝ ի հաշիվ գերատեսչական իրավական ակտերի ընդունման,
- բոլոր պետական մարմինները, յուրաքանչյուրն իր մասով, 10 խոշորագույն ծախսային ծրագրերի մասով, հաշվի առնելով նոր սահմանադրական լուծումները, պետք է ուսումնասիրի ներկայիս ՀՀ կառավարության որոշումների թվաքանակի կրճատման հնարավորությունն՝ ի հաշիվ գերատեսչական իրավական ակտերի ընդունման:

Պետական կառավարման ոլորտում օժանդակ և սպասարկող ծառայությունների մատուցման արտապատվիրման (աութսորսինգի) վերաբերյալ միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ աութսորսինգի մեխանիզմն ակտիվորեն օգտագործվում է հանրային հատվածում: Արտասահմանյան երկրներում պետական կառավարչական համակարգի

---

[6] Վերլուծության՝ համանման (համեմատության համար համադրելի) երկրների շարքում հնարավոր է դիտարկել Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների խումբն ըստ Համաշխարհային բանկի տարածաշրջանային դասակարգման՝ հիմնվելով բնակչության ընդհանուր թվաքանակի և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի (PPP, ընթացիկ միջազգային դոլար) ցուցանիշների վրա: Այդ երկրներն են՝ Վրաստանը, Բոսնիան և Հերցեգովինան, Մակեդոնիան, Սերբիան, Ռումինիան, Լատվիան, Հունգարիան, Լեհաստանը, Հունաստանը, Լիտվան, Սլովակիան, Պորտուգալիան, Սլովենիան, Չեխիան:

աութսորսինգի ակտիվ զարգացման գործընթացն սկսվել է դեռևս 1990-ական թվականներին: Հիմնականում աութսորսինգի զարգացումը կապված է պետական կառավարման համակարգի բարեփոխումների, այսպես կոչված, նոր հանրային կառավարման (New Public Management) հասկացության զարգացման հետ: Աութսորսինգի ակտիվ զարգացումը համահունչ է «նոր հանրային կառավարման» գրեթե բոլոր հիմնարար սկզբունքներին (հանրային կառավարման համակարգում շուկայական մեխանիզմների ներդրում, հանրային կառավարման գործունեության նկատմամբ կառավարման արդյունավետություն, թափանցիկության պահանջների ավելացում, կառավարման ապակենտրոնացում), այդ իսկ պատճառով զարմանալի չէ, որ պետական գործառույթների որոշակի մասի փոխանցումը աութսորսինգի դարձել է հանրային կառավարման հատվածի բարեփոխումների առանցքային բաղադրիչներից, որոնք իրականացվել են երկրների մեծ մասում՝ դեռևս 1990-2010 թվականներին և այժմ էլ շարունակվում են:

Հանրային բարիքը (public good) հանրային կամ պետական հատվածի այն ապրանքը կամ ծառայությունն է, որի տրամադրմամբ որևէ անհատի դրանք դառնում են մատչելի, իսկ մյուսին կամ մյուսներին այն տրվում է առանց լրացուցիչ ծախսերի, որն էլ դրանք տարբերում է մասնավոր բարիքից, որի համար սպառումը որևէ անհատի կողմից բացառում է այդ նույն միավոր բարիքի սպառումը մյուսի կամ մյուսների կողմից: Այդպիսով, կարելի է ասել, որ հանրային բարիքների համար բնորոշ է ոչ մրցակցային սպառումը (nonrival consamption), այսինքն, որևէ անհատի կողմից բարիքի սպառումը չի նվազեցնում դրա մատչելիությունը մյուսների համար: Ծայրահեղ կամ «բևեռային» դեպք է եղել «զուտ» հանրային բարիքի սահմանումը Պոլ Սամուելսոնի կողմից, որը սահմանել է, որ այդպիսի բարիքը պետք է.

1) սպառման տեսանկյունից լինի ոչ մրցակցային,

2) ունենա ոչ բացառիկության հատկանիշ (non-excludability), այսինքն, եթե բարիքն արտադրվել է, ապա արտադրողը չի կարող խոչընդոտել դրա սպառումը որևէ մեկ ուրիշի կողմից:

Վերջին պայմանը բացառում է շուկայի գործառնությունը, քանի որ վաճառողին չի երաշխավորվում, որ բարիքը կունենա միայն նա, ով վճարել է դրա համար: Քանի որ բարիքը կարելի է ստանալ չվճարելով դրա համար, ուստի ոչ ոք չի ցանկանա վճարել դրա համար: Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ եթե բացառումը հնարավոր է, ապա բարիքը կարող է մնալ հանրային նույնիսկ այն դեպքում, երբ այն առաջարկվում է շուկայում: Երբ հնարավոր է բարիքի բացառումը

կամ սպառումը, այն բացարձակ ոչ մրցութային է և ունի խառը (կամ ոչ զուտ հանրային) բնույթ, ինչը այնպիսի երևույթ է, որ հանդիպում է ավելի հաճախ, քան զուտ հանրային բարիքը:

Երբ սպառումը մրցակցային չէ, Պարետոյի սկզբունքի տեսանկյունից՝ ապրանքի կամ ծառայության գնի նշանակումը անարդյունավետ է, քանի որ սպառման լրացուցիչ միավորի ավելացումը սպառողին օգուտ է բերում առանց որևէ ծախս կատարելու, այն դեպքում, երբ գնի նշանակումը կրճատում է սպառումը, դրանով իսկ առաջ բերելով բավարարվածության կամ օգտակարության զուտ կորուստ: Ասվածից հետևում է, որ նույնիսկ այն ժամանակ, երբ հնարավոր է հանրային բարիքի առաջարկը շուկայի միջոցով, դա չի կարող հանգեցնել արտադրության լավագույն կամ օպտիմալ մակարդակի արտադրության ձեռքբերումների ապահովման: Ինչպես դա արդեն ասվել է ավելի վաղ՝ ոչ բացառիկության դեպքում շուկան ընդհանրապես չի կարող աշխատել:

Հանրային բարիքի առաջարկը կոլեկտիվ ընտրության առարկա է: Սովորաբար ենթադրվում է, որ հանրային բարիքները մատակարարվում են պետության կողմից և վճարվում են պարտադիր հարկագանձման հաշվին: Մեկ ուրիշ այլընտրանք է որոշակի համագործակցություն իրականացնող մարդկանց կամավոր համաձայնությունը ապրանքի մատակարարման և վճարման վերաբերյալ: Այդ տարբերակի դժվարությունն այն է, որ անհատները կարող են թաքցնել ապրանքի իրենց իրական գնահատականը՝ նպատակ ունենալով շեղվելու վճարումից, այսինքն, նրանք կարող են ձգտել «երթևեկել առանց տոմսի»: Հանրային բարիքի ներկայացման հիմնախնդիրը կամավոր համաձայնության արդյունքում վերլուծվում է կամավոր փոխանակության մոդելում: Հանրային բարիքի նկատմամբ ընդհանուր պահանջարկը կարող է գնահատվել գումարելով հասարակության բոլոր անդամների անհատական պահանջարկները: Սակայն, զուտ բարիքների շուկայի պահանջարկի կորը ստացվում է անհատական կորերի հորիզոնական գումարմամբ (այսինքն, յուրաքանչյուր գնի համար գումարվում են յուրաքանչյուր անհատի պահանջարկի ծավալները), ապա հանրային բարիքի համար ընդհանուր պահանջարկի կորը ստացվում է անհատական կորերի ուղղահայաց գումարման միջոցով[7]:

ՏՀԶԿ-ի անդամ երկրներից աութսորսինգի զարգացման հիմնական առաջատարներ են անգլո-սաքսոնական երկրները (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Նոր Զելանդիա), սկանդինավյան երկրները (Շվեդիա, Դանիա, Ֆինլանդիա) և Հեռավոր Արևելքի երկրները (Սինգապուր, Հոնկոնգ, Հարավային Կորեա): ՏՀԶԿ-ն պարբերաբար

[7] Словарь современной экономической теории Макмиллана. Перевод с английского М.: ИНФРА-М. 2013, էջ 409-410:

իրականացնում է պետական հատվածի աութսորինգի ընդհանուր ծավալների գնահատում, ընդ որում, կիրառվում է աութսորսինգի սահմանման ընդլայնված մեթոդիկան, որպես պետական հատվածի կողմից ծառայությունների և ապրանքների ընդհանուր ծավալի ձեռք բերում (ներառյալ բյուջետային համակարգի բոլոր մակարդակները) ոչ պետական հատվածից: Համաձայն ՏՀԶԿ գնահատականի, նշված մեթոդաբանությամբ 2009թ.-ին ՏՀԶԿ անդամ երկրների պետական հատվածում իրականացվող աութսորսինգի միջին մեծությունը կազմել է ՀՆԱ-ի մոտ 10%-ը: Միաժամանակ, աութսորսինգի մասնաբաժինը տարբեր է ՏՀԶԿ անդամ երկրներում՝ Մեքսիկայում ՀՆԱ-ի 2.7%-ից մինչև Նիդերլանդներում 19.4%: 2000-2009թթ.-ին ՀՆԱ-ում աութսորսինգի մասնաբաժինը ՏՀԶԿ անդամ երկրներում աճել է տարեկան միջին հաշվով 1.5%-ով: Առավելագույն աճը նկատվել է Նիդերլանդներում և Ֆրանսիայում: Փորձագետների կարծիքով պետական մարմիններին տրամադրվող աութսորսինգի գործառույթները կարելի է բաժանել 3 խմբի: Առաջին խումբն ընդգրկում է սպասարկման գործառույթները, օրինակ՝ տարածքի մաքրման աշխատանքներ, աղբահանություն, հասարակական սնունդ, պահպանության ծառայություններ: Այս խմբի գործառույթները չեն մտնում կառավարման մարմինների գործունեության խնդիրների և առաքելությունների մեջ: Նշված գործառույթների իրականացումը շատ հեշտ է ստանդարտացվում և չի պահանջում կատարողների կրթական և որակական մակարդակի բարձր չափանիշներ: Որպես կանոն, այս խմբի գործառույթները շատ հեշտ կարելի է փոխանցել աութսորսինգին:

Երկրորդ խմբի գործառույթները ներառում են ապահովման գործառույթներ, որոնք պահանջում են կատարողների բավականաչափ բարձր մասնագիտական որակավորում: Այս խմբին են վերաբերում նաև տեղեկատվական տեխնոլոգիաների, ֆինանսների և հաշվապահության, անձնակազմի կառավարման, իրավաբանական աջակցության, փաստաթղթաշրջանառության հետ կապված գործառնական գործառույթները: Վերջին 20 տարիներին պետական հատվածում աութսորսինգի կիրառումը կապված է առաջին հերթին հենց տվյալ խմբի գործառույթների հետ: Երրորդ խումբը պետական կառավարման հատվածի առանցքային գործառույթների աութսորսինգն է: Տվյալ խմբի գործառույթների աութսորսինգի միջոցով կիրարկումը շատ հազվադեպ է հանդիպում, անգամ առաջատար երկրներում տվյալ հարցը փորձագետների և քաղաքագետների ակտիվ քննարկումների վեճերի առարկա է դարձել:

Այս կամ այն գործառույթների աութսորսինգի փոխանցման նպատակահարմարության գնահատման մեթոդները տարբեր են, այնուամենայնիվ,

դրանք բոլորն էլ հիմնվում են փորձագիտական գնահատականների վրա: Բոլոր մեթոդների հիմնական դրույթները գնահատվում են հետևյալ գործոններով.

- արդյոք աութսորսինգը կբերի բյուջետային միջոցների խնայողության,
- կնպաստի՞ արդյոք գործառույթների իրականացման որակի բարձրացմանը,
- առկա՞ է արդյոք շուկայում համապատասխան առաջարկ,
- հնարավո՞ր է արդյոք ձևակերպել հստակ պահանջներ գործառույթների իրականացման համար[8]:

Ներկայիս միջազգային փորձը ցույց է տալիս, որ աութսորսինգը կարող է կիրառվել ոչ միայն զարգացած, այլ նաև զարգացող երկրներում: Հիմնական վտանգը կապված է կոնկրետ գործընթացների և գործառույթների սահմանման, ճիշտ մեթոդաբանության ընտրության հետ:

Աղյուսակ 1-ում բերված են ՀՀ կառավարության համակարգում օժանդակ կառավարչական ծառայությունների խոշորացման, կենտրոնացման և արտաքին աղբյուրից ձեռք բերման (outsourcing) հնարավորությունները: Պետական կառավարչական ծախսերի կրճատման հիմնական ճանապարհը այդ ծախսերի նվազեցումն է այն հաշվով, որ դրա հետևանքով չտուժեն այդ ծառայության օգտատերերը: Բացի այդ, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, կառավարման ծախսերի արդյունավետության բարձրացման կարելի է հասնել նաև, երբ մեծ թվով օժանդակ կառավարչական ծառայություններ կարող են խոշորացվել, կենտրոնացվել կամ էլ դրանք ձեռք բերել մասնավոր հատվածից: Սրանք, ըստ էության, պետական կառավարչական ծախսերի խնայման հիմնական ձևերն են: Այս դեպքում գործում է ինչպես մասշտաբի էֆեկտը (խոշորացման կամ կենտրոնացման դեպքերում), այնպես էլ այդ ծառայությունների մատուցման գործում մրցակցային միջավայրի ստեղծման հանգամանքը (երբ «պետական» ծառայությունը մատուցում է մասնավոր հատվածի տնտեսավարող սուբյեկտը կամ անհատը): Սա այն դեպքերում, երբ կառավարչական ծառայությունը մատուցում է մասնավորը:

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, շատ հաճախ դրանք կարող են լինել այլընտրանքներ պետական կառավարման մարմինների համար, ինչը լայն հնարավորություններ է բացում դրանք «էժանացնելու» և որակով ծառայություն մատուցելու կամ ստանալու գործում: Կարևոր է նկատել նաև, որ ներկայիս մասնավոր հատվածը հագեցած է բազմաթիվ բարձրորակ մասնագետներով և հնարավորություններով

[8] http://www.oecd-ilibrary.org և https://www.iaop.org/Content/19/165/1793/Default.aspx.

(տեխնիկական և համակարգչային տեխնիկայով, համակարգչային ծրագրերով և այլն), համապատասխան մասնագիտական փորձով և հմտություններով, որակական այլ բարձր հատկանիշներով, որոնք թույլ են տալիս մասնավոր հատվածի տնտեսավարող սուբյեկտների մեծ մասին ակտիվորեն մասնակցել օժանդակ կառավարչական ծառայությունների մատուցման գործին և հաջողությամբ մրցակցել պետական հատվածի ներկայացուցիչների հետ: Այսպիսով, ներկայումս բոլոր հիմքերը կան պնդելու, որ ՀՀ-ում օժանդակ կառավարչական ծառայությունների մեծ մասը կարող է իրականացվել մասնավոր հատվածի կողմից, ինչը մի կողմից, կակտիվացնի մասնավոր հատվածի գործունեությունը, իսկ մյուս կողմից ՀՀ կառավարությանը հնարավորություն կտա էժանացնելու այդ ծառայությունները՝ օգտագործելով մասնավոր հատվածի մրցակցային ներուժը:

Աղյուսակ 1

ՀՀ կառավարության համակարգում օժանդակ կառավարչական ծառայությունների խոշորացման, կենտրոնացման և արտաքին աղբյուրից ձեռք բերման (արտապատվիրման) հնարավորությունները

Օժանդակ կառավարչական ծառայությունների տեսակները	Առաջարկվում է				Հիմնավորում
	Խոշորացնել (օրինակ՝ միավորել նույնաբնույթ կամ նմանատիպ գործառույթներ ունեցող մեկ տեղում)	Կենտրոնացնել (բոլորը մեկ տեղում)	Ձեռք բերել մասնավոր հատվածից	Թողնել ամփոփող	
Ներքին աուդիտ		+	+		Ներքին աուդիտի գործառույթների կենտրոնացումը մեկ պետական մարմնում կարող է նպաստել ծախսերի կրճատմանը և աշխատանքների որակի բարձրացմանը: Առաջարկվում է նաև հետագայում գործառույթների իրականացումն ապահովել մասնավոր հատվածի ներգրավմամբ:
Լրատվական ստորաբաժանում/ մամուլի քարտուղար		+			Այն նախարարությունները և գերատեսչությունները, որոնց լրատվական գործառույթները իրականացվում են առանձին ստորաբաժանումների (բաժին կամ վարչություն, մամլո ծառայություն և այլն) կողմից դրանք պետք է կենտրոնացնել մեկ տեղում: Այն նախարարությունները և գերատեսչությունները, որոնց աշխատակազմերը լրատվական ստորաբաժանում չունեն և ունեն միայն մամլո քարտուղար, ով կազմապերպում և լուսաբանում է կառավարության այդ օղակի աշխատակազմի գործառույթները և դրանցից բխող գործընթացները, նույնպես պետք է կենտրոնացնել:

Հասարակական հիմունքներով խորհրդականների ներգրավելը առկա վճարովի հաստիքների փոխարեն			+		Այն նախարարություններում և գերատեսչություններում, որտեղ գործում են պետական կառավարման մարմնի ղեկավարի խորհրդականների վճարովի ծառայությունները, դրանք պետք է փոխարինել հասարակական հիմունքներով մասնավոր հատվածից հրավիրված մասնագետներով:
Անձնակազմի կառավարման ստորաբաժանում	+	+			Այս ստորաբաժանումներն իրականացնում են այնպիսի աշխատանքներ, որոնց նախ խոշորացումը և ապա կենտրոնացումը (բոլորը մեկ տեղում) կարող է նվազեցնել կատարված աշխատանքների ծախսերը: Նման առաջարկության համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ անձնակազմերի կառավարման ստորաբաժանումներն իրականացնում են համանման (միօրինակ) աշխատանքներ:
Տեղեկատվական տեխնոլոգիաների ստորաբաժանում		+	+		Պետական կառավարման մարմիններում օգտագործվող տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորություններն օգտագործվում են 3-7%-ի չափով, դրանց պահպանման և շահագործման ծախսերի տնտեսման համար անհրաժեշտ է այդ ծառայությունները կենտրոնացնել մեկ տեղում կամ դրանք ձեռք բերել մասնավորից:
Իրավաբանական ծառայություն	+	+			Այս ծառայությունների ստորաբաժանումները կազմակերպում են պետական կառավարման մարմինների գործառույթների իրականացման հետ կապված, ինչպես նաև պետության շահերի պաշտպանության բնագավառի հետևյալ աշխատանքները: Որպես կանոն պետական կառավարման մարմիններում իրավաբանական ծառայությունները մեծաթիվ են և այդ կադրային ներուժը լիարժեք ու արդյունավետ չի օգտագործվում, այդ պատճառով դրանք պետք է խոշորացվեն կամ էլ կենտրոնացվեն:
Հաշվապահություն/ ֆինանսական հսկողություն/ բյուջեի պլանավորում			+		Պետական կառավարման մարմիններում հաշվապահական գործառույթներն իրականացվում են աշխատակազմի ֆինանսատնտեսական ծառայությունների (բաժինների կամ ծառայությունների) կողմից: Աշխատակազմերի ֆինանսատնտեսական բաժինը կամ վարչությունն իրականացնում է պետական կառավարման մարմինների հիմնական գործառույթների բնորոշ մաս կազմող աշխատանքները: Սակայն, նկատի ունենալով հաշվապահական և մյուս աշխատանքների ավտոմատացման և համակարգչային ծրագրերի, ինչպես նաև ՀՀ ծառայությունների ոլորտում հաշվապահական և խորհրդատվական, ինչպես նաև աուդիտորական լայն ցանցի առկայությունը և դրանց մրցակցային բնույթը, այդ ծառայությունները կարելի է ձեռք բերել մասնավորից:

Արտաքին կապեր	+	+			Պետական կառավարման մարմինների աշխատակազմերի արտաքին կապերի բաժինները կամ վարչությունները իրականացնում են միաժամանակ ինչպես օտարալեզու գրագրության, միջազգային փորձի ոլորտային ուսումնասիրման, պետական կառավարման մարմինների և միջազգային կառույցների ներկայացուցչությունների միջև կնքվող պայմանագրերի թարգմանության ապահովման աշխատանքներն, այնպես էլ ապահովում են պետական կառավարման մարմիններում շահագործվող տեղեկատվական համակարգերի, «Մալբերի» փաստաթղթաշրջանառության համակարգի, թվային ստորագրության ծրագրերի, ինտերնետային կապի և ներքին համակարգչային ցանցի անխափան աշխատանքը: Նկատի ունենալով համացանցի լայն տարածվածությունը և պետական կառավարման յուրաքանչյուր մարմնում ցանկացած աշխատակցի հնարավորությունը օգտվելու համացանցից, առաջարկվում է այդ աշխատանքները խոշորացնել կամ կենտրոնացնել:
Ընդհանուր բաժին	+	+			Պետական կառավարման բազմաթիվ մարմինների աշխատակազմերի մեծ մասը բաժիններ չունեն, և այդ ծառայությունների գործառույթուններն իրականացվում են քարտուղարությունների կողմից: Շատ հաճախ դրանք բազմամարդ ծառայություններն են, որոնց աշխատանքները ծրագրավորված և համակարգչավորված են, ուստի առաջարկվում է դրանց կամ խոշորացնել կամ էլ կենտրոնացնել:
Տրանսպորտային ծառայություններ		+			Պետական կառավարման մարմինների տրանսպորտային ծառայությունները պետք է կենտրոնացնել մեկ տեղում, ինչը զգալի միջոցներ կխնայի:
Մաքրության ապահովման ծառայություններ					Որպես կանոն, պետական կառավարման մարմինների մեծ մասի աշխատակազմերում մաքրության ապահովման հետ կապված ծառայությունները կատարվում են ֆինանսատնտեսական վարչության տնտեսական բաժիններում ընդգրկված հավաքարարների միջոցով: Հավաքարարների ծառայություններն անհրաժեշտ է ձեռք բերել մասնավոր հատվածից մրցութային եղանակով, ինչը կհանգեցնի ներկայումս գործող հավաքարարների թվաքանակի զգալի նվազեցման և նրանց մատուցած ծառայությունների որակի բարձրացման: Կարևոր է, որ եթե որևէ շենքում կան պետական կառավարման մի քանի մարմիններ, հավաքարարները ընտրվեն ոչ թե նրանցից յուրաքանչյուրի համար, այլ ամբողջ շենքի կամ նրա առանձին մասերի համար:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Վահագն Խաչատուրյան
տնտեսագետ
khachatryanvahagn@gmail.com

27 տարվա փնտրտուքներից հետո Հայաստանի Հանրապետությունը այդպես էլ չգտավ զարգացման իր ուրույն ուղին: Իհարկե, այդ տարիների ընթացքում երկիրն առաջնորդվել է տարբեր բովանդակության ու ժամկետների ընդգրկման ծրագրերով, որոնք բոլորն էլ բնութագրվել են «պատմական», «աննախադեպ»: Սակայն, փաստ է, որ այդ ծրագրերի չկենսագործման պայմաններում ՀՀ քաղաքացիների մեծ մասի կյանքում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել, և արդյունքում ունենք տնտեսություն, որի բնորոշիչներից են՝ մեկ շնչին ընկնող շատ ցածր ՀՆԱ-ն, նեղ կառուցվածքային արտահանմանը մի քանի անգամ գերազանցող ներմուծումը, աղքատության պայմաններում ապրող ազգաբնակչության մեկ երրորդը, 17-18%-ի հասնող գործազրկությունը, արտաքին տրանսֆերտներից մեծ կախվածությունը, մենաշնորհները և տեխնոլոգիական հետամնացությունը, արտաքին պարտքը, որը կազմում է ՀՆԱ-ի ավելի քան կեսը: Սա դեռևս ամբողջական նկարագիրը չէ, սակայն ասվածից էլ կարելի է եզրակացնել, որ վիճակը բարվոք չէ: Ճիշտ է, շատերն, այդ թվում, ցավոք սրտի, նաև միջազգային մի շարք կազմակերպություններ, շարունակելով տարիներ ի վեր իրենց վարած քաղաքականությունը, երկրի վիճակը գնահատում են կայուն, կառավարելի և ֆինանսական միջոցներ են հատկացնում առանձին ծրագրերի իրականացման համար, սակայն, այդ ամենով հանդերձ, երկրի սոցիալ-տնտեսական վիճակը գնալով վատանում էր: Եվ այն, ինչ տեղի ունեցավ այս տարվա ապրիլին, պատահական չէր և տրամաբանական էր:

Տարիներ շարունակ զբաղված և կենտրոնացած լինելով մեր սեփական խնդիրների լուծման հաղթահարման վրա՝ մենք ավելի ու ավելի ենք հեռացել համաշխարհային պրակտիկայում նմանատիպ խնդիրների լուծման ժամանակակից մեթոդների կիրառումից: Հին մոտեցումները, որոնք կիրառելի էին տասը, առավել ևս տասնհինգ տարի առաջ, այսօր կիրառելի չեն, աճ չեն ապահովում: Գիտության ձեռքբերումները, նոր տեխնոլոգիաները նոր մարտահրավերներ են մարդկանց կյանքն ավելի բարեկեցիկ դարձնելու նոր ուղիներ, ձևեր գտնելու առումով: Այսպես, եթե տարիներ առաջ տնտեսության կառավարման մակրո մակարդակում վերաֆինանսավորման տոկոսադրույքի կամ դրամական էմիսիայի

կարգավորմամբ հնարավոր էր աճի մեխանիզմի գործարկում, ապա այսօր դա արդեն բավարար չէ: **Արձանագրենք, որ տնտեսության մակրոքաղաքականության միջոցները կարող են կանգնեցնել աղետը, սակայն միշտ չէ, որ կարող են աճ խրախուսել**: Սա շատ կարևոր եզրահանգում է, որը հուշում է տնտեսագետներին, քաղաքական գործիչներին, միջազգային դոնոր կազմակերպություններին, որ չկան հեշտ մակրոքաղաքական լուծումներ, և ընդհանրապես, աճի խրախուսումը շատ դժվար, կառուցվածքային աշխատանք է: Ցավոք, մեզ մոտ մինչ օրս ձևակերպված չեն աճի ապահովման, խրախուսման համար անհրաժեշտ պայմանները, առաջնահերթությունները: Տարբեր մակարդակներում շարունակվող քննարկումները տարիների ընթացքում այդպես էլ միասնական տեսակետի չեն հանգեցրել: Արդյունքում, այն, ինչ արդիական էր երեկ, այսօր կորցրել է իր կարևորությունը, այսօր էլ մինչ հիմա չունենք ոչ մի ձևակերպված ամբողջական հայեցակարգ աճի, զարգացման առաջնահերթությունների մասին, բացի այն ընդհանուր ձևակերպումներից, որ ամեն օր ասվում են տարբեր ամբիոններից – գիտելիքահենք, բարձր տեխնոլոգիաներ խրախուսող տնտեսություն, դեմքով դեպի քաղաքացուն ուղղված քաղաքականություն, և այլն, որոնցից շատերը հայաստանյան իրականության հետ աղերս չունեն:

Այս ամենը հաշվի առնելով, ըստ մեզ, այսօր Հայաստանի Հանրապետությունում առաջնահերթ է գոյություն ունեցող խնդիրների հստակ ձևակերպումը, որին, հասկանալի է, պետք է հաջորդի դրանց լուծման ուղիների փնտրտունքը, և եթե հաջողվի՝ «Հայկական թռիչքային աճի մոդելի» մշակումը:

Հայաստանի Հանրապետությունում դեռևս չեն հաղթահարվել արդեն երկու տասնամյակի անցումային շեմը բոլորած վերափոխումային գործընթացներին ներհատուկ այնպիսի մարտահրավերներ, ինչպիսիք են՝

ա/ բնակչության ցածր կենսամակարդակն ու եկամուտների գերբևեռացումը,

բ/ գործազրկությունը,

գ/ մենաշնորհն ու կլանայնությունը,

դ/ տնտեսության ճյուղային կառուցվածքը,

ե/ կոռուպցիոն ռիսկերը,

զ/ բնակչության աղքատությունը, միգրացիան,

է/ տնտեսության ստվերայնության բարձր աստիճանը և սրանցից ածանցվող բազմաթիվ բացասական այլ դրսևորումներ:

Օրինակ, տարիներ շարունակ աղքատության կրճատման համար պայքարը այդպես էլ չհասավ իր հիմնական նպատակին՝ չձևավորվեց

ավելի մեծ միջին խավ, փոխարենը՝ աճեց չափավոր աղքատ և խոցելի խավը: Սա պատահականության հետևանք չէ: Ընդհակառակը, տարիներ շարունակ երկրում հետևողականորեն իրականացվող քաղաքականության հիմնական նպատակն եղել է քամող, ոչ ներառական համակարգ ստեղծելը, որը, պետք է արձանագրել, հաջողությամբ իրականացվել է:

Միաժամանակ, մեր տնտեսության մեջ առկա են իրական սահմանափակումներ՝ կապված աճի ներուժի հետ: Այսպես, պարզ է, որ աճը պետք է մի տեղից ֆինանսավորվի. կա՛մ պետք է լինեն բանկային վարկեր, կա՛մ ֆինանսավորում կորպորատիվ հատվածից, կա՛մ պետական միջոցներ, որ ներգրավվում են դրսից, կա՛մ սեփական կապիտալի միջոցներ՝ ի դեմս օտարերկրյա ներդրումների, կա՛մ ներքին տնտեսության մեջ գեներացվող սեփական միջոցներ: Եթե դիտարկում ենք այս բոլոր աղբյուրները, տեսնում ենք դրանցում որոշակի բացասական միտումներ: Մասնավորապես, օտարերկրյա ուղղակի ներդրումների մասով 2014-17թթ. էական անկում է արձանագրվել. 404 մլն և 250 մլն դոլար՝ խոսքը վերաբերում է զուտ ներհոսքին, իսկ 2018թ. առաջին եռամսյակի տվյալներով՝ 91 մլն դոլար, իսկ երկրորդ եռամսյակի տվյալներով՝ 9 մլն դոլար[9]: Սա, իրականում, շատ կարևոր ազդակ է, որովհետև Հայաստանի տնտեսության համար սա աճի ֆինանսավորման շատ կարևոր աղբյուր է:

Մյուս կողմից՝ բանկային վարկերի ֆինանսավորման ներուժը ևս սահմանագծին է հասնում, ինչն արդեն խնդիրներ է հարուցում կորպորատիվ հատվածում՝ պարտքով բեռնվածության աստիճանի բարձրացման տեսանկյունից: Արդեն սկսում են ֆինանսական հանրության խնդիրներ ի հայտ գալ կորպորատիվ հատվածում. մասնավորապես՝ չաշխատող վարկերը հունիսի դրությամբ հասել են 5,97%-ի: Փորձագիտական գնահատականներով՝ սա իրականում շատ ավելի է, քան արտացոլված է պաշտոնական վիճակագրության մեջ: Ուրեմն՝ զուտ բանկային վարկերի միջոցով հետագա աճի ֆինանսավորման բավական սահմանափակ հնարավորություններ կան: Պետական պարտքի մասով էլ մենք հասնում ենք մի մակարդակի՝ պարտք/ՀՆԱ հարաբերակցության 60%-ին, որ դրա էական մեծացումը բավական դժվարանում է: Ուստի, սա ևս չի կարող լինել հետագա աճի ֆինանսավորման մեծ աղբյուր:

Հաջորդ սահմանափակումը կապված է արտադրողականության հետ: Հաշվարկների համաձայն[10], որպեսզի հնարավոր լինի պահպանել երկրի մրցունակության այսօրվա դիրքը և այն էականորեն բարելավել, անհրաժեշտ է աշխատանքի արտադրողականության տարեկան շուրջ 3-4%

[9] Աղբյուր՝ ՀՀ ԿԲ:

[10] Տես՝ «Կա տնտեսական աճի 4 հիմնական սահմանափակում», armef.com /hy/news/verlutsutyun/ka-tntesakan-achi-4-himnakan-sahmanapakum/:

բարձրացում, որպեսզի միաժամանակ հնարավոր լինի պահպանել գործող հարաբերակցությունը մրցակից երկրների հետ: Արտադրողականության նման աճի պայմաններում գործազրկության կրճատումը և արտագաղթի կասեցումը կամ նվազեցումը ևս պահանջում են տարեկան 4–5 տոկոսային կետ աճ: Սա նշանակում է՝ որպեսզի հնարավոր լինի պահպանել երկրի մրցունակությունը և լուծել սոցիալ-տնտեսական հիմնական խնդիրները, երկրին անհրաժեշտ է նվազագույնը 7–8% շարունակական տնտեսական աճ:

Որպեսզի հասկանալի լինի, թե ինչպես կարելի է ապահովել այդ տնտեսական աճը, պետք է հստակեցնել տնտեսական աճի առանցքային սահմանափակումները: Դրանցից առանձնացնենք 4 հիմնական սահմանափակումներ.

- ոչ հավասար կամ անկատար մրցակցային միջավայրը,
- նոր բիզնես հնարավորությունների բացահայտման պակասը,
- մարդկային կապիտալի ոչ բավարար որակը[11],
- միաչափ կամ ոչ դիվերսիֆիկացված ֆինանսական համակարգը:

Մի կարևոր սահմանափակմանը անդրադառնանք ավելի հանգամանորեն: Երկրում ստեղծված վիճակը պայմանավորված է հիմնականում պետական կառավարման գործող համակարգով: Ըստ որոշ մասնագետների, այսօր երկրները սկսում են մրցակցել պետական կառավարման մոդելներով, և ոչ թե աշխատուժի գնով, հարկային քաղաքականությամբ[12]: Պատահական չէ, որ հայտնի տնտեսագետ Դարոն Աճեմօղլուն իր հայտնի գրքում «Ինչու են Ազգերը ձախողվում»[13] կարևորում է ինստիտուտների դերը: Եթե կարճ վերապատմելու լինենք ամբողջ գիրքը, ապա այն կարող ենք անել չորս բառերով՝ «Ինստիտուտներն են որոշում ամեն ինչ»: Ոչ մի այլ բացատրություններ զարգացման կամ հետամնացության (կապված կլիմայի, աշխարհագրության, մշակույթի և այլ տեսանկյունից) պարզապես չկա:

Սրա ապացույցն է նաև Հայաստանի մասին Աճեմօղլու ասածը. «Ես, իհարկե, Հայաստանի հարցերով մասնագետ չեմ, բայց կարող եմ ասել, որ խնդիրը, որ Հայաստանն ունի, աշխարհագրական չէ, մշակութային չէ, աշխարհաքաղաքական չէ, այլ քաղաքական է: Խնդիրը քաղաքականությունը սեփական քաղաքացիների պահանջներին ավելի համահունչ դարձնելն է: Այնպես, որ քաղաքական այդ գործընթացի միջոցով Հայաստանը դադարի լինել օլիգարխիա, այլ դառնա հասարակություն, որը շատ ավելի մեծ

[11] Տես՝ Բաբկեն Թունյան. «Մարդկային կապիտալի տխուր պատկերը Հայաստանում» https://168.am/2018/10/18/1027212.html.

[12] Տես՝ Владимир Мау: «Людям нужен не рост ВВП, а рост благосостояния», www.bfm.ru/news/356210

[13] Why Nations Fail: The Origins of Power, Prosperity, and Poverty (Crown Business, New York, 2012).

խթաններ կապահովի իր քաղաքացիների մեծամասնության համար, որ-պեսզի այն կարողանա համախմբել այն նշանակալից ներուժը, որն ունի»[14]:

Որպեսզի կառավարման խնդրի կարևորությունն ավելի ամբողջական ու ընկալելի լինի, անդրադառնանք Համաշխարհային Բանկի կողմից երկու տարին մեկ հրապարակվող Համաշխարհային կառավարման համաթվին՝ տես *գծապատկերներ 1, 2, 3,*-ին: *Գծապատկեր 1-ը* վկայում է այն մասին, որ ՀՀ-ում քսան տարիների ընթացքում՝ 1996-2016թթ., կառավարման որակն ընկել է կոռուպցիայի մակարդակի աճի, ժողովրդավարության մակարդակի, քաղաքական կայունության անկման պատճառով:

Հաջորդ գծապատկերները վկայում են, որ նշված տարիների ընթացքում Հարավային Կովկասի երեք հանրապետություններում նմանատիպ խնդիրներ եղել են 1996թ.-ին, ընդ որում, Հայաստանն այդ ժամանակ կոռուպցիայի մակարդակով եղել է ավելի բարենպաստ վիճակում: 2016թ.-ին Վրաստանը, շնորհիվ իրականացված բարեփոխումների, որոնք հիմնականում ուղղված էին նոր ինստիտուտների ձևավորմանը, դարձել է առաջատար ընդհանրապես կառավարման արդյունավետության առումով և հատկապես կոռուպցիայի ցածր մակարդակի, ժողովրդավարական ինստիտուտների գործունեության առումով:

Անդրադառնալով 1996-2018թթ.-ի ժամանակաշրջանին, նշենք, որ երկրում իրականացվող բարեփոխումներն աստիճանաբար դանդա-ղեցին և մի որոշակի պահից սկսեցին հակառակ ուղղությամբ շարժվել: Արդյունքում, տնտեսական աճի արդյունքներն սկսեցին բաշխվել ոչ հավասարաչափ, և ազգաբնակչության մի զգալի մասը՝ գնահատելով իր անձնական բարեկեցության մակարդակը, չէր կարող գոհ լինել իրա-կանացված բարեփոխումների ընթացքից: Ստեղծված բարիքների բաշ-խումը արդար անվանել չէր կարելի, ձևավորվեց համոզմունք, որ վեր-նախավը հարստանում է և հարստացել է ոչ արդար եղանակներով: Դա ավելի արմատավորվեց, երբ նշված տարիների ընթացքում սկսեցին ձևավորվել ազատ շուկայական տնտեսության գաղափարախոսությանը հակասող ինստիտուտներ՝ օլիգարխիա, մենաշնորհ, ոչ ազատ դատական համակարգ, անսահման հովանավորչություն:

Այսօր «կլանային կապիտալիզմի» գոյությունը դարձել է Հայաստան պետության առջև կանգնած կարևորագույն մարտահրավերը, իսկ դրա կազմաքանդումը այսօրվա հայաստանյան նոր իշխանության հիմնական նպատակը պետք է լինի:

Ինչ պետք է արվի վիճակը փոխելու, և ոչ միայն փոխելու, այլ առավելագույնս արագ փոխելու և նոր հարաբերություններ հաստատելու

[14] Տես՝ Սիվիլնեթ, 19 հոկտեմբեր, 2013, «Խնդիրը, որ Հայաստանն ունի, քաղաքական է. Դարոն Աճեմօղլու»:

համար: Խոսքը հատկապես վերաբերում է հասարակական նոր ստեղծված արդյունքի բաշխմանը, որը խնդիր է ոչ միայն մեր երկրում, այլ դարձել է համաշխարհային մակարդակի խնդիր: Պատճառն աշխարհում մեծացող անհավասարությունն է, խոսքը վերաբերում է ոչ այնքան եկամուտների և գույքի անհավասարությանը, այլ մարդկանց, քաղաքացիների հնարավորությունների հավասարությանը: Խոսքը գնում է ներառական զարգացման անհրաժեշտության մասին, որը մեր երկրում բացակայել է, և բացակայել է բացառապես քաղաքական դրդապատճառներով՝ հիշենք նորից Աճեմօղլուն:

Ընդամենը մեկ ամիս առաջ Համաշխարհային Բանկը ներկայացրեց մի նոր ուսումնասիրություն-զեկույց «Դեպի հասարակական նոր պայմանագիր» (Toward a New Social Contract)[15] վերնագրով, որտեղ մասնավորապես ասվում է՝

ա/ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների աշխատանքի, հարկման և սոցիալական ապահովության քաղաքականությունը պետք է տեղափոխել 21-րդ դար՝ խմբերի միջև անհավասարության աճը հաղթահարելու և անորոշության ավելացմանը դիմակայելու հարցում աշխատողներին օգնելու համար,

բ/ կոչ է արվում հիմնովին վերաիմաստավորել քաղաքականությունները՝ տնտեսական նոր հնարավորություններից օգտվողների և ավելի ու ավելի ճկուն տնտեսության մեջ անտեսվածների միջև մեծացող խզումը փոքրացնելու համար,

գ/ չնայած Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանը համաշխարհային համադրումների ժամանակ առավել հավասար տարածաշրջաններից մեկն է, քաղաքացիներից շատերը դեռևս վերընթաց տեղաշարժ չեն ունենում, զգում են, որ խրված են անհավասարության թակարդում և ավելի խոցելի են, քան նախորդ սերունդները: Ավելին, ֆինանսական և աշխատանքի երաշխիքի նվազումը նշանակում է, որ աղքատության մեջ հայտնվելու առումով միջին խավի ավելի մեծ մասը խոցելի է, ինչն ամբողջությամբ հանգեցրել է ընկերությունների նկատմամբ վստահության նվազման, ավելի մեծ բևեռացման և հասարակության ներսում պոպուլիզիմի ավելացման:

Սրանից բացի զեկույցում կան այլ գնահատականներ տարածաշրջանի և, մասնավորապես, Հայաստանի վերաբերյալ, բայց ամենակարևոր միտքը, գաղափարը այս զեկույցի այն է, որ **բոլոր երկրներում առկա խնդիրների բանալին հասարակական նոր պայմանագրի անհրաժեշտությունն է՝ ռիսկերի ու հնարավորությունների ավելի արդար բաժանմամբ**՝ վերջին

[15] Տես՝ worldbank.org/hy/news/press-release/2018/09/25/labor-taxation-and-social-policies-must-be-upgraded-to-addressrising-inequality-in-armenia-says-world-bank.

տասնամյակներում տարածաշրջանում գրանցված տնտեսական ձեռքբերումները պահպանելու և ընդլայնելու համար:

Հայաստանում տեղի ունեցած վերջին զարգացումները նոր խթան են աղքատության կրճատման և բարիքների ու հնարավորությունների հավասար բաշխման ուղղությամբ գործադրվող ջանքերին: Նոր կառավարությունը հայտարարել է, որ մտադիր է առավել ինտենսիվորեն հաղթահարել Հայաստանի աճը սահմանափակող որոշ գործոններ, այդ թվում մրցակցության, իրավունքի գերակայության բարելավման և անձնական շահերից բխող չարաշահումների վերացման միջոցով[16]: Շրջահայաց մակրոտնտեսական քաղաքականության հետ առավել արդյունավետ սոցիալական ծրագրերի իրականացման պայմաններում սա կարող է ազդարարել երկրի տնտեսության, ինչպես նաև աղքատության հաղթահարման, կրթության և առողջապահության, արդարադատության հավասար հնարավորությունների լավ հեռանկարների մասին:

Վերջին զարգացումների համատեքստում առաջնային է դառնում այն կառուցակարգերի ստեղծումն ու հետևողական գործադրումը, որն ուղղված կլինի երկարատև ու կայուն զարգացմանը:

[16] Հայաստանի առջև ծառացած զարգացման մարտահրավերների առավել ամբողջական նկարագրությունը տե՛ս Armenia Systematic Country Diagnostic հետևյալ կայքում՝ http://documents.worldbank.org/curated/en/716961524493794871/pdf/Armenia-SCD-in-Eng-final04192018.pdf:

Գծապատկեր 1. **Հանրային կառավարման համաշխարհային համաթվի բաղադրիչների փոփոխությունը Հայաստանի Հանրապետությունում 1996-2016 թվականներին**[17]



Գծապատկեր 2. **Հանրային կառավարման համաշխարհային համաթվի բաղադրիչները Հարավկովկասյան երկրներում 1996 թվականին**[18]



[17] Աղբյուրը. կազմվել է՝ Worldwide Governance Indicators, http://info.worldbank.org/governance/wgi/#home տվյալների բազայի հիման վրա:

[18] Աղբյուրը. կազմվել է՝ Worldwide Governance Indicators, http://info.worldbank.org/governance/wgi/#home տվյալների բազայի հիման վրա:

Գծապատկեր 3. **Հանրային կառավարման համաշխարհային համաթվի բաղադրիչները Հարավկովկասյան երկրներում 2016 թվականին**[19]



[19] Աղբյուրը. կազմվել է՝ Worldwide Governance Indicators, http://info.worldbank.org/governance/wgi/#home վյալների բազայի հիման վրա:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՐԴԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ռուբեն Գևորգյան, FRM
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ
ֆ.մ.գ.թ, տ.գ.դ., պրոֆեսոր
rubengevorgyan@ysu.am

Նախաբան

Վերջին տասնամյակների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կայացված ինստիտուտները որոշիչ դեր ունեն[20] տնտեսական զարգացման համար: Միևնույն ժամանակ, վերջին տարիների հետազոտությունները (այդ թվում նաև ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում իրականացված[21]) ցույց են տալիս, որ տնտեսական զարգացումն ուսումնասիրելիս ինստիտուտների կայացվածության հետ միաժամանակ անհրաժեշտ է դիտարկել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են մարդկանց վարքագծային նախադրյալները և ինստիտուտների ընկալումը: Ընդ որում, հասկանալի է, որ ինստիտուտների ընկալումը կախված է դրանց որակից, իսկ մարդկանց վարքագծային նախադրյալները կարող են ազդել ինչպես ինստիտուտների որակի, այնպես էլ դրանց ընկալման վրա: Միևնույն ժամանակ, առկա է նաև հակադարձ կապ, այն է՝ ինստիտուտների որակը կարող է ազդել մարդկանց վարքագծային նախադրյալների վրա:

Ցանկացած հեղափոխություն ակնթարթային կարող է փոխել միայն ինստիտուտների ընկալումը: Ինստիտուտների որակը և, առավել ևս, մարդկանց վարքագծային նախադրյալները փոխելու համար ավելի երկարատև և քրտնաջան աշխատանք է անհրաժեշտ: Նշենք նաև, որ օրենքների փոփոխությունները, որոնք կարելի է համեմատաբար արագ իրականացնել, դեռ չի նշանակում ֆորմալ ինստիտուտների որակի փոփոխություն և, առավել ևս, ոչ ֆորմալ ինստիտուտների և մարդկանց ընդունված վարքագծի փոփոխություն:

Միաժամանակ, ֆորմալ ինստիտուտների նկատմամբ հանրության վերաբերմունքի փոփոխությունը, որը հեղափոխությունների անմիջական հետևանքն է, հնարավորություն է տալիս իրականացնել ինստիտուտների և նույնիսկ մարդկանց վարքագծային նախադրյալների բարեփոխումներ:

[20] North, D. C. Institutions, Institutional Change, and Economic Performance. Cambridge University Press, New York. 1990.

[21] Саргсян Г. Л., Геворгян Р.А. Конституционные традиции, институты, поведенческие предпосылки и благополучие стран, Вестник Московского университета. Серия 6. Экономика, N1, 2019 (ընդունված է հրատարակման):

«Նախագծային», թե ինստիտուցիոնալ վերափոխումներ

Գոյություն ունի վերափոխումների իրականացման երկու հիմնական ճանապարհ՝ այսպես կոչված՝ նախագծային և ինստիտուցիոնալ: Նախագծային վերափոխումներ ասելով հասկանում են պետության կողմից հովանավորվող մի քանի նախագծեր (տեխնոպարկեր, ազատ տնտեսական գոտիներ, գերակա ուղղություններ ու ոլորտներ և այլն), որոնք ենթադրաբար կարող են դառնալ տնտեսության առաջնթացի լոկոմոտիվներ և կարող են փոխել ամբողջ տնտեսության զարգացման որակը: Անհրաժեշտ է պարզապես հայտնաբերել այդ ուղղությունները, հովանավորել, ստեղծել նպաստավոր պայմաններ, ներգրավել ներդրումներ, և խնդիրը կարելի է համարել լուծված: Հայաստանում այդպիսի բազմաթիվ նախագծերի օրինակներ կարելի է բերել: Այսպիսի վերափոխումների դեպքերում միշտ հայտնվում են տնտեսագետներ և մենեջերներ, ովքեր հստակ գիտեն ոլորտները, նախագծերը և անհրաժեշտ ներդրումների չափը:

Այս մոտեցման առնվազն միակ թերությունն այն է, որ սա բացառապես հակաշուկայական մոտեցում է: Իսկ առավելությունն այն է, որ «ինչ անել» հարցի պատասխանն ակնհայտ է դառնում նախագծերը սահմանելուց հետո: Բացի այդ, վերափոխումների «հաջողությունը» կարելի է չափել ներգրավված գումարներով (նույնիսկ, եթե դրանք անձնական կապերի միջոցով ներգրավված գումարներ են), ինչը հեշտացնում է վերափոխումների հաջողության գովազդի գործընթացը: Այսպիսի վերափոխումների հիմնական նպատակը արագ և ժամանակավոր արդյունքների գրանցումն է:

Իրական վերափոխումներ կարող են լինել միայն ինստիտուցիոնալ, հատկապես Հայաստանի նման երկրում: Այսպիսի վերափոխումների ժամանակ «ինչ անել» հարցի պատասխանը շատ ավելի ոչ տրիվիալ է, և պահանջում է բոլոր քայլերի խորը վերլուծություն, ինչը եբթադրում է գոյություն ունեցող ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների, ինչպես նաև մարդկանց վարքագծային նախադրյալների ու ընկալումների խորը վերլուծություն: Այս վերափոխումների դեպքում դժվար է ակնկալել արագ արդյունքներ: Այնուհանդերձ, տնտեսական զարգացման նոր որակի դուրս գալու համար այլընտրանք գոյություն չունի:

Մեր հոդվածի նպատակն է հակիրճ նկարագրել այն ինստիտուցիոնալ խնդիրները, որոնք կանգնած են Հայաստանի տնտեսության առաջ, ինչպես նաև նշել մի քանի դրույթներ, որ պետք է պարունակի (կամ օբյեկտիվորեն չի կարող պարունակել, որքան էլ դրանք գայթակղիչ լինեն) ինստիտուցիոնալ վերափոխումների համապարփակ ծրագիրը:

«Բռնագրավված պետություն»

Արդյունավետ վերափոխումներ իրականացնելու համար ամենակարևոր նախադրյալը ներկա իրավիճակի ճիշտ ախտորոշումն է: **Հայաստանի Հանրապետության զարգացման գլխավոր պրոբլեմը «բռնագրավված պետություն» կամ «բռնագրավված դեմոկրատիա» երևույթն է:** Այս եզրույթները համեմատաբար նոր են և ավելի հաճախակի օգտագործում են ստացել 2000-ական թվականներից սկսած: Այս երևույթի նկարագրությանը կարելի է հանդիպել Դարոն Աճեմօղլու և Ջեյմս Ռոբինսոնի[22] աշխատություններում:

Ցանկացած տնտեսական ռեֆորմ սկսելուց առաջ պետք է արձանագրել, որ Հայաստանի բոլոր տնտեսական խնդիրները ածանցվում են այս հիմնական խնդրից: Հետևաբար, առանց այս խնդիրը լուծելու, բոլոր տնտեսական փոփոխությունները կարող են հանգեցնել հիմնական խնդրի ավելի խորացմանը (օրինակ՝ ներդրումների հոսքի ավելացումը կարող է բերել «բռնագրավողների» էլ ավելի հզորացմանը):

«Բռնագրավված պետություն» եզրույթը համեմատաբար նոր լինելով՝ չունի միանշանակ ընդունված սահմանում: Ամենաընդհանուր տեսքով այն կարելի է սահմանել հետևյալ կերպ՝ այն բնութագրում է այնպիսի իրավիճակ, երբ պետության ինստիտուտները գործում են մի խումբ անձանց շահերի համար: «Բռնագրավված դեմոկրատիա» ասելով հասկանում ենք, որ այդպիսի իրավիճակ կարող է գոյություն ունենալ նույնիսկ ֆորմալ ժողովրդավարական ինստիտուտների գոյության դեպքում:

Այս երևույթը այնքան էլ խորը ուսումնասիրված չէ գիտական գրականությունում: Այդ երևույթի հիմնական դրսևորումները ներկայացված են վերը նշված Դարոն Աճեմօղլու և Ջեյմս Ռոբինսոնի[3] հոդվածում: Հակիրճ թվարկենք դրանք՝

- Ինստիտուտների ազդեցությունը երկրի տնտեսական արդյունքների (economic outcome) վրա կախված է de jure և de facto քաղաքական իշխանությունների փոխհարաբերություններից:
- De facto քաղաքական իշխանությունը հաճախ ավելի կարևոր դեր ունի տնտեսական քաղաքականության և ռեսուրսների բաշխումը սահմանելու հարցում, քան ինստիտուտները:
- De facto քաղաքական իշխանությունը պատկանում է որոշակի խմբերին՝ որպես «զոռբայության» արդյունք (possessed by groups as a result of their wealth, weapons, or ability to solve the collective action problem):

[22] Robinson, James A, and Daron Acemoglu. 2008. “Persistence of Power, Elites and Institutions.” American Economic Review 98 (1).

- De jure քաղաքական իշխանության փոփոխությունը կամ վերափոխումները բերում են de facto քաղաքական իշխանության բաշխման վերադասավորմանը, այնպես, որ չեզոքացնի ռեֆորմների ազդեցությունը:
- Էլիտաներից կարող է ավելի շատ ներդրումներ պահանջվել de facto քաղաքական իշխանություն ունենալու համար «դեմոկրատիայի առկայության», քան «դեմոկրատիայի բացակայության» պայմաններում:
- Որոշակի պայմանների դեպքում էլիտայի ներդրումները կարող են այնպիսին լինել, որ ամբողջությամբ չեզոքացնեն տնտեսական բարիքների ստեղծման տարբերությունը «դեմոկրատիայի առկայության» և «դեմոկրատիայի բացակայության» պայմաններում: Հաճախ այսպիսի իրավիճակն անվանում են «ինվարիանտ»:
- Որոշակի պայմանների դեպքում քաղաքական ինստիտուտները կարող են ակտիվորեն փոփոխվել, մինչդեռ տնտեսական ինստիտուտները կարող են գոյատևել երկար ժամանակ;
- «Դեմոկրատիան» կարող է կայուն լինել և երկար ժամանակ գոյություն ունենալ, սակայն գոյություն ունեցող տնտեսական ինստիտուտները գործեն էլիտայի համար: Ավելին, էլիտաներին աջակցող ինստիտուտների գոյության հավանականությունն ավելի մեծ է «դեմոկրատիայի», քան «ոչ դեմոկրատիայի» դեպքում: Այս իրավիճակն անվանվում է «բռնագրավված դեմոկրատիա» (Captured Democracy): Այսպիսի կայուն հավասարակշիռ վիճակի գոյությունը կարող է բացատրել այն հանգամանքը, որ էմպիրիկ հետազոտություններում ստացվում են հակասող արդյունքներ՝ մի դեպքում «դեմոկրատիայի» գոյությունն աջակցում է տնտեսական արդյունքներին, մյուս կողմից «բռնագրավված դեմոկրատիայի» դեպքում այն կարող է խոչընդոտ հանդիսանալ:

Մի բան ակնհայտ է, որ այս երևույթը կարող է ունենալ տարբեր դրսևորումներ՝ կախված անցումային գործընթացների առանձնահատկություններից:

Նշենք Հայաստանի առանձնահատկություններից մի քանիսը.

1. ֆորմալ ինստիտուտների բռնագրավման չափազանց բարձր աստիճան, այնպես, որ ցանկացած «ճիշտ» քաղաքական և տնտեսական վերափոխում, որն ուղղված է հենց բռնագրավման աստիճանը նվազեցնելուն, իրականում օգտագործվում է հակառակ արդյունք ստանալու համար,

2. «բռնագրավողների» ոչ ֆորմալ ինստիտուտների բարձր կազմակերպվածությունը (իրադարձությունները ցույց են տվել, որ նրանք 1-2

ժամվա ընթացքում կարող են հավաքագրել բավականին լուրջ զինված խմբեր),

3. փոքր տնտեսության հետևանքով տնտեսության գրեթե բոլոր ոլորտների «բռնագրավումը»,

4. օլիգարխիկ էլիտայի «ցածր որակը», չնայած ինստիտուտների բռնագրավմանը, խնդիրները ֆորմալ ինստիտուտներից դուրս լուծելու հակումը (տղայավարի, զոռբայությամբ և այլն),

5. «բռնագրավված պետության» մթնոլորտի ազդեցությունը քաղաքացիների առօրյա պահվածքի վրա, ձևավորվում է մեծ հակում դեպի «փոքր խախտումների» մարտավարությունը և օպորտունիստական վարքագիծը,

6. «բռնագրավողների» աշխարհագրական և ոլորտային «մասնագիտացումը»՝ օլիգարխների ոչ ֆորմալ տարածքային սահմանների և ոլորտների հստակ տարանջատումը:

Վերափոխումների նախապայմաններ

Այս իրավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է երկու նախապայման՝

1. Ինչպես արդեն նշել էինք՝ խնդրի ճիշտ արձանագրում: Այնպիսի կարևոր տնտեսական խնդիրներ, ինչպիսիք են աղքատությունը, եկամուտների անհավասարությունը, միգրացիան, մոնոպոլիաները և այլն, բոլորը պայմանավորված են և կարող են լուծվել միայն վերը նշված խնդիրը լուծելով: Հակառակ դեպքում դրանք կարող են միայն մեղմացվել, իսկ երկարաժամկետ կտրվածքով՝ ավելի խորանալ:

2. Նոր քաղաքական էլիտայի առկայություն, որն ունի այս վիճակից դուրս գալու քաղաքական կամք:

3. Հասարակության լայն խավերի աջակցություն:

Ինչ անել և ինչ չանել

Այստեղ պարզապես ներկայացվում են մի քանի առաջարկներ, որոնք չեն հավակնում ծրագրային բնույթ ունենալուն: Ինչպես արդեն նշել ենք, ինստիտուցիոնալ ռեֆորմների իրականացման համար շատ ավելի լուրջ և ծավալուն վերլուծություններ են անհրաժեշտ:

Սկսենք ընդհանուր առաջարկներից, որոնք տեղ են գտել Դ. Աճեմօղլու և Ջ. Ռոբինսոնի “Persistence of Power, Elites, and Institutions» հոդվածում՝

1. Կառուցել այնպիսի ժողովրդավարական ինստիտուտներ, որոնք առավելություն են տալիս հասարակության լայն շերտերին (օրինակ՝ ընտրություններ և կուսակցություններ):

2. Քաղաքական և տնտեսական ինստիտուտների բարեփոխումներն իրականացնել միաժամանակ և փոխկապակցված:

Այս կարևոր ընդհանուր առաջարկների ներքո և զուգահեռ քննարկենք մի շարք գործողությունների անհրաժեշտությունը կամ անթույլատրելիությունը:

1. Անհրաժեշտ է իրականացնել խորը ինստիտուցիոնալ և կառուցվածքային վերափոխումներ: Այս վերափոխումները պետք է իրականացնել՝ հաշվի առնելով վերը նշված իրողությունները: Անհրաժեշտ է մշակել այդ բարեփոխումների մանրամասն ծրագիրը:

2. Համակարգը ամբողջությամբ փոխելու հնարավորություններն իրենց մեջ պարունակում են զգալի տնտեսական ռիսկեր, քանի որ, ինչպես արդեն նշել էինք, համակարգն ընդգրկում է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը և, հետևաբար, այսպիսի մոտեցումը կարող է բերել տնտեսական կտրուկ անկման: Անհրաժեշտ են միջոցառումներ այդ ռիսկերը մեղմելու համար: Դրանցից ամենակարևորը փոփոխությունների փուլային բնույթն է: Ինստիտուցիոնալ վերափոխումների տեսությունում դա անվանում են միջանկյալ ինստիտուտների կառուցում:

3. Խորը ինստիտուցիոնալ և կառուցվածքային փոփոխություններ իրականացնելու համար անհրաժեշտ է հասարակության լայն շերտերի աջակցությունը: Այս առումով, անհրաժեշտ է իրականացնել արագ բարեփոխումներ այն ոլորտներում, որոնք առնչվում են յուրաքանչյուր քաղաքացու առօրյա կյանքին՝ պետական ծառայությունների ոլորտ, ճանապարհային ոստիկանություն և այլն:

4. Որևէ գործողություն ուղղված որևէ կոնկրետ օլիգարխի գործունեության սահմանափակմանը, արդյունավետ չի լինի, ծնելով նոր օլիգարխներ (հնարավոր է նույնիսկ սահմանափակողների շարքերից): Բոլոր գործողությունները պետք է լինեն համակարգային: Հակառակ դեպքում կստեղծվի նոր էլիտա, որը կգործի «պետության» բռնագրավման նույն սկզբունքով:

5. Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել իրական քաղաքացիական հասարակության ինստիտուտների ձևավորման ուղղությամբ, որոնք ազատ են արտաքին ուժերի շահերը կրելուց: Իրական քաղաքացիական հասարակությունը ինստիտուցիոնալ բարեփոխումների կարևոր գործոնն է:

6. Անհրաժեշտ է արձանագրել, որ փոքր բաց տնտեսությունում, ինչպիսին Հայաստանն է, բացի բնական մենաշնորհներից, կարող են գոյություն ունենալ նաև այլ մենաշնորհներ: Խնդիրը այդպիսի մենաշնորհների կարգավորման և վերահսկման մեխանիզմներն են, և, ինչն ավելի կարևոր է, դրանց ներքին կառավարման ինստիտուտների ձևավորումը:

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Բագրատ Ասատրյան
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
b_asatryan@yahoo.com

ՀՀ-ում ձևավորված նոր իրավիճակը հնարավորություն է տալիս քննության առնել մեր երկրի կյանքի բոլոր ոլորտները ու, մասնավորապես, առավել որոշիչ՝ տնտեսական հատվածը: Խոսքը գնում է տնտեսական կյանքի բոլոր բաղադրիչների մասին՝ տնտեսական քաղաքականության ու նրա առանձին հատվածների արդյունավետությունից մինչև պետական կառույցների ու հասարակական հաստատությունների գործելաոճի ու ձեռնարկված ու ձեռնարկվող միջոցառումների նպատակահարմարության ու արդյունավետության խնդիրները: Ընդ որում, հեղափոխությունը, դրա արդյունքում ձևավորված նոր իրավիճակը բացառիկ հնարավորություն են ստեղծում վերանայել երկարատև ժամանակահատվածում ձևավորված կառավարման համակարգը, սթափ գնահատել ու բծախնդրորեն անդրադառնալ երկրում առկա վիճակին ու զարգացումներին: Սա առավել կարևոր է, քանզի երրորդ հազարամյակում մեր միջավայրում ձևավորվեց արատավոր մի մոտեցում, որ առկա խնդիրներն անգամ քննարկման առարկա չէին դառնում, քաղաքական դաշտում իշխող տգիտությունը ներթափանցում էր մեր կյանքի բոլոր ոլորտները՝ բացառելով քննարկումն ու արդյունքում դուրս մղելով միտքը, տեղ բացելով պարզունակ մոտեցումների, կուտակվող խնդիրները աչքաթող անելու և միայն թվացյալ կամ իրական հաջողությունները արձանագրելու ու գովերգելու մոտեցման համար: Ու, թեև երրորդ հազարամյակի սկիզբը Հայաստանի տնտեսության համար դրական տեղաշարժերի ժամանակահատված էր՝ արձանագրվեց երկնիշ տնտեսական աճ, կայունացավ սոցիալ-տնտեսական վիճակը, աճեց կենսամակարդակը, էապես նվազեց արտագաղթը, սակայն դրական տեղաշարժերը չընդգրկեցին խորքային, համակարգային նշանակություն ունեցող երևույթները, չապահովվեց դրանց վերարտադրությունը: Արդյունքում, կարճ ժամանակ հետո ի հայտ եկան երկրի տնտեսության զարգացման շեղումները: Փաստորեն, տնտեսական աշխուժացման հիմնական պատճառները երեքն էին՝ նախորդ շրջանի բարեփոխումներն, արտաքին դրական կոնյուկտուրան ու դեպի Հայաստան ֆինանսական հոսքերի աշխուժացումը: Հարկ է միայն ավելացնել նաև, որ տնտեսական

աշխուժացման միտումներն այս կամ այն չափով հատուկ էին թե ԽՍՀՄ նախկին հանրապետություններին ու թե Արևելյան Եվրոպայի երկրներին: Սակայն իրականացվող այն քաղաքականության ներքո, երբ ֆինանսական հոսքերը առավելապես ուղղվում էին կարճ ժամանակահատվածում միջոցների վերադարձն ապահովող, մասնավորապես բնակարանային շինարարության, առևտրի ու սպասարկման ոլորտները, առաջին իսկ արտաքին ցնցման ներքո վերափոխվեց տնտեսական խոր անկման իր բոլոր հնարավոր հետևանքներով: Հայաստանի տնտեսությունն ապրեց խորը՝14.2%-ոց անկում, որն ամենաբարձրերից էր ամբողջ աշխարհում, իսկ Արևելյան Եվրոպայի ու նախկին ԽՍՀՄ հանրապետությունների թվում զիջում էր միայն Ուկրաինային: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը բացահայտեց ՀՀ տնտեսական զարգացման կուտակվող խնդիրները և Հայաստանում առկա քաղաքական ճգնաժամի ու ետընտրական ողբերգական զարգացումների ներքո հանգեցրեց տնտեսական խոր անկման՝ իր բազմաբնույթ բացասական դրսևորումներով: Առանցքային միջոցը, որին դիմեցին իշխանությունները, փորձն էր պետության տնտեսավարման դերի կտրուկ փոփոխություն իրականացնելը, հիմնականում պետական երաշխիքներով արտաքին շուկաներից ֆինանսական միջոցների ներգրավման ու տնտեսությունում տեղաբաշխման միջոցով՝ մոռացության մատնելով խիստ անհրաժեշտ դարձած համակարգային բարեփոխումները: Այստեղ տեղին է հիշատակել մեր հարևան Վրաստանում տեղի ունեցած զարգացումները: Վարդերի հեղափոխությունը ու դրան հետևած համակարգային փոփոխություններն ապահովեցին կայուն տնտեսական աճը, իսկ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը նախ պայմանավորեց ՀՆԱ-ի աճի տեմպերի անկումը, իսկ 2009թ.-ին նաև տնտեսական անկումը միայն 3,8%-ով, ինչը հաջորդ տարվա ընթացքում արդեն վերափոխվեց էական տնտեսական աճի: Արդյունքում, վերջին տասնամյակում Հայաստանյան տնտեսության զարգացումների հիմնական բնութագրիչները դարձան տնտեսական աճի տեմպերի անկումը ետճգնաժամային ամբողջ շրջանում և դրանց մեծ տատանումները, ինչի հետևանքով դոլարային արտահայտությամբ ՀՆԱ-ի ծավալների աճի բացակայությունը՝ 2008թ. արդյունքներով ՀՀ ՀՆԱ-ն կազմեց 11 մլրդ 662 մլն ԱՄՆ դոլար, և 2017թ. միայն հասավ 11.6 մլրդ: Դրան զուգահեռ երկրում խորանում էր կոռուպցիան, որոշիչ դեր էին ստանում երկրի տնտեսությունում դեռևս նախորդ շրջանում իշխող դիրք ստացած տնտեսվարողները, այլասերվում ազատական տնտեսության հիմնարար տարրերը՝ ազատ մրցակցությունը, ձեռներեցության ազատությունը, սեփականության իրավունքի պաշտպանվածությունը և

այլն: Փաստորեն, ելակետային միանգամայն համադրելի սոցիալ տնտեսական բնութագրերով երրորդ հազարամյակ մտած երկու երկրներ արդեն ոչ լրիվ երկու տասնամյակ հետո առանձնանում են սոցիալ տնտեսական բնութագրերի էական տարբերություններով՝ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ով, աղքատության մակարդակով, անգամ ժողովրդագրական ցուցանիշներով:

Մինչդեռ Հայաստանում ձևավորված օլիգարխիկ համակարգը ետճգնաժամային հատվածում բերվեց կատարյալ տեսքի՝ տնտեսության մեջ որոշիչ դիրք ունեցողները իշխող դերակատարություն ստացան նաև քաղաքական մարմիններում ու կառավարման համակարգում: Բիզնեսի ու իշխանության սերտաճման ներքո, տնտեսական քաղաքականությունը վերածվեց առանձին միջոցառումների, որոնց շարքում տեսանելի էին առանձին բիզնես-խմբերի շահերի պաշտպանությանն ուղղվող տարրերը: Ուշագրավ է, որ մեր երկրի օլիգարխիայի նշանակալից մասը առանձին տեսակի ապրանքներ ներմուծողներն են կամ դրանց իրացումը կազմակերպողները: Նշվածի ներքո տնտեսությունը վերածվեց փակ համակարգի, որն անգամ չուներ ներդրումների պահանջ, ինչը, իր հերթին, հանգեցրեց օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալի շարունակական նվազմանը: Փաստորեն, հայաստանյան տնտեսական համակարգի առավել եկամտաբեր հատվածը, բացի հումքի արտահանումից, կազմեց ներմուծում-առևտուր շղթան, որի կենսունակությունը ապահովվում էր մասնավոր տրանսֆերտների հոսքը: Մրցակցության բացակայության կամ առանձնահատուկ կարգավորման ռեժիմների առկայության պարագայում, որի էությունը պետական ամենաբարձր մակարդակով քվոտավորումն էր, ապահովում էր տվյալ հատվածների գործունեության երաշխավորված եկամտաբերությունը: Ստացված եկամուտների մի մասն ուղղվում էր համակարգի վերարտադրության ապահովմանը՝ ընտրակաշառքների, անգամ քաղաքական մարմինների ու պետական կառավարման համակարգի գործունեության համար լրացուցիչ խրախուսումների ու պարգևավճարների տեսքով: Իսկ այդ օղակների գործունեության արդյունքում իրենց տնօրինության տակ մնացող եկամուտների մի զգալի մասը պարբերաբար դուրս էր բերվում երկրից, պայմանավորելով կապիտալի արտահոսքը, որը ժամանակի ընթացքում ավելի ծավալուն էր դառնում: Ուշագրավ է նաև, որ մասնավոր արտաքին ներդրումների ծավալների կրճատումը հանգեցրեց ՀՆԱ-ի կառուցվածքում կուտակման բաժնի զգալի կրճատման, շինարարության ոլորտի շարունակական անկման, որը կանխվեց միայն 2017թ.-ին, (որոնց ազդեցությունը տնտեսական զարգացումների վրա կդրսևորվի առաջիկա միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում):

Իհարկե, երկրի տնտեսական կյանքում կատարվում էին նաև որոշ դրական տեղաշարժեր, որոնց թվում կարելի է առանձնացնել՝

- արտահանման առաջանցիկ աճը ներմուծման նկատմամբ (2008-2018թթ. ընթացքում ներմուծման ծավալների շուրջ 5.5%-ով կրճատվելու պարագայում արտահանման ծավալներն աճել են ավելի քան 2.1 անգամ),
- արտահանման կառուցվածքում հանքաքարի, սև և գունավոր մետաղների տեսակարար կշռի նվազում 42%-ից մինչ 37%, ինչը, սակայն, ուղեկցվեց արտահանման ընդհանուր ծավալում հանքաքարի տեսակարար կշռի մոտ կրկնապատիկ աճով,
- արդյունաբերության աճի տեմպերի գերազանցումը ՀՆԱ-ի աճի տեմպերի նկատմամբ (անվանական ՀՆԱ-ն նույն ժամանակահատվածում աճել է մոտ 56%-ով, մինչդեռ արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ 2,2 անգամ), ՀՆԱ-ի կառուցվածքում արդյունաբերության տեսակարար կշռի աճը:

***Գծապատկեր 1.* ՀՀ արտահանումն ու ներմուծումը, ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով տարեկան փոխանցումները, մլն ԱՄՆ դոլար**



Դրական զարգացումների թվում կարելի է առանձնացնել ֆինանսական հատվածի, մասնավորապես, բանկային համակարգի արդյունավետ գործունեությունը, ֆինանսական միջնորդության մակարդակի աճը: Այսպես, ՀՀ բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցության 2008-2017թթ. աճեց 28.7%-ից մինչ 78.2%, իսկ վարկ/ՀՆԱ հարաբերակցությունը 17.8-ից 45.1%-ի:

Գծապատկեր 2. **Տնտեսական աճի տեմպերը և գնաճը ՀՀ-ում 2007-2017թթ.**



Անառարկելի դրական դրսևորումներից է գնաճի կառավարելի մակարդակը՝ թեև նշված ժամանակահատվածի առանձին տարիներին այն շեղվում էր տարեկան ծրագրային ցուցանիշներից, ինչը բնական էր տնտեսական աճի տեմպերի բարձր տատանողականության պայման-ներում, սակայն միջինժամկետ և ամբողջ ժամանակահատվածում ապա-հովվել էր գնաճի ոչ բարձր մակարդակը:

Սակայն, ընդհանուր առմամբ ակնհայտ է այն նահանջը, որ ապրել է ՀՀ 2008-2017թթ.-ին և որի կարևորագույն բնութագրերն էին՝

- սոցիալական չշտկվող իրավիճակ և աղքատության մակարդակի աճ 27.9%-ից մինչ 29.4% 2016թ.-ին (վերջին հրապարակված տվյալ) և դրա խորացումը 2017-ին;
- գործազրկության բարձր և աճող մակարդակ՝ պաշտոնական տվյալների համաձայն, որոնք, իհարկե, չեն արտացոլում ամբող-ջական պատկերը, 2008թթ.-ին գործազուրկ էին աշխատանքային ռեսուրսների 10.5%, 2016թ.-ին 10.9%-ը,
- արտաքին պարտքի շուրջ քառապատիկ աճը նշված ժամանա-կահատվածում և դրա սպասարկման ծախսերի կտրուկ աճը (վերջինս ներկայումս և առաջիկա տարիներին կկազմի պետական բյուջեի եկամուտների շուրջ 10%-ը):

Նշվածի հետևանքով և տնտեսական աճի ըստ էության բացակայության պայմաններում կտրուկ փոփոխվում է երկրի ժողովրդագրական վիճակը՝ փաստորեն նշված ժամանակահատվածի առավել ցավալի ու ծանր

հետևանքը բնակչության արտագաղթն էր և երկրի ժողովրդագրական պատկերի փոփոխությունները, որոնց թվում հարկ է առանձնացնել՝

- ժողովրդագրական իրավիճակի վատթարացումը, բնակչության շարունակական արտագաղթը (վերջին տասնամյակում Հայաստանից մեկնած և ժամանած ՀՀ քաղաքացիների բացասական տարբերությունը գերազանցում է 430.0 հազարը),
- ծնելիության մակարդակի անկում 41.2 հազ. 2008թ. 37.7-ի 2017թ.,
- մահացության մակարդակի աճ բացարձակ թվի անփոփոխ մնալու պարագայում՝ 27.4 հազ. 2017թ.-ին,
- ամուսնությունների թվի նվազում 18.5-ից մինչ 15.2 հազ.,
- ամուսնալուծությունների թվի աճ 3.0-ից մինչ 3.94 հազ.,
- վերջին տասնամյակում Հայաստանի բոլոր մարզերի բնակչության թվաքանակի նվազում (բացի Երևան քաղաքից),
- բնակչության բնական աճի բացակայություն Լոռվա, Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում:

Այս առումով, իբրև ժողովրդագրական նշված զարգացումների հետևանք, առաջիկայում, արդեն հինգ-վեց տարի հետո Հայաստանը բախվելու է դեպոպուլյացիայի երևույթի հետ, այսինքն, չի ունենա բնական աճ, մի բան, որը չի եղել հայաբնակ որևէ տարածքում ամբողջ պատմության ընթացքում:

Փաստորեն, Հայաստանում նշված ժամանակահատվածում ձևավորվեց առանձնահատուկ իրավիճակ, երբ զարգացումները մատնվել էին ինքնահոսի և միայն 2016թ.-ից փորձ արվեց ինչ-ինչ փոփոխությունների ենթարկել իրականացվող տնտեսական քաղաքականությունը, որոշ չափով աշխուժացնել այն: Սակայն դա վերաբերվում էր տնտեսական քաղաքականության միայն առանձին հատվածներին, օրինակ, բյուջեի եկամուտների հավաքագրման ծախսային հատվածներին, այն էլ խիստ սահմանափակ ձևաչափով, ինչը, բնականաբար, չէր կարող ունենալ էական արդյունք: Մինչդեռ, ակնհայտ էր, որ Հայաստանը հայտնվել էր խոր համակարգային ճգնաժամային վիճակում ու անհրաժեշտ էին վերափոխումներ թե քաղաքական ու հասարակական, թե տնտեսական և սոցիալական և, ընդհանրապես, մեր կյանքի բոլոր ոլորտներում ու, նախևառաջ, մեր մտածելակերպում:

Առկա իրավիճակը պահանջում է երկարատև, միջնաժամկետ և կարճաժամկետ միջոցառումների ամբողջական ծրագրի իրականացում տնտեսական քաղաքականության թերևս բոլոր հատվածներում՝ հարկային ու բյուջետային, դրամավարկային ու համակարգային, կառուցվածքային բարեփոխումների, պետական գույքի կառավարման ու

պետության կողմից տնտեսվարման գործառույթի իրականացման, որի հիմքը պետք է կազմեն՝

• հասարակության հետ բաց, ազատ, ազնիվ խոսակցություն, առկա խնդիրների ու ծրագրերի հրապարակային քննարկում,

• քաղաքական մրցակցության հնարավորությունների վերականգնում, ներքաղաքական մրցակցային իրավիճակի զարգացում,

• օրինականության ու սահմանադրական կարգի վերականգնում,

• իշխանության ու բիզնեսի տարանջատում,

• համակարգային բարեփոխումների խորացում, դատական համակարգի կատարելագործում,

Նշված վերափոխումների հիման վրա պետք է՝

• վերափոխվեն սոցիալ տնտեսական զարգացման հիմնական համամասնությունները և մակրոտնտեսական միջինժամկետ հիմնական ցուցանիշները,

• սահմանվեն հստակ նպատակներ յուրաքանչյուր ծրագրի համար, նշված նպատակին հասնելու հիմնական միջոցառումները և անհրաժեշտ ռեսուրսները,

• վերանայվեն պետական բյուջեի հիմնական համամասնությունները, պետք է ձևավորվեն եկամուտների և ծախսերի ոչ թե իրավիճակային, այլ նպատակային երկարաժամկետ ծրագրեր, որոնց հիման վրա և ձևավորվեն տարեկան բյուջեներն ու միջինժամկետ զարգացման ծրագրերը,

• նվազեցվեն տնտեսական ու սոցիալական ցածր արդյունավետությամբ առանձին ծրագրերի ֆինանսավորման ծավալները:

Երկրի բնականոն զարգացման առումով խիստ արդիական ու հրատապ են դարձել՝

• պետական կառավարման համակարգի բարեփոխումները, պետական ապարատի ու նախարարությունների թվի կրճատումը, պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը,

• պետական ապարատի պահպանման ծախսերի սառեցումը,

• տարածքային կառավարման համակարգի վերափոխումը, տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության բարձրացումը,

• տնտեսական քաղաքականության դերի աշխուժացում, ֆինանսական համակարգի և սոցիալական հատվածի բարեփոխումների աշխուժացում, նպատակային սոցիալական քաղաքականության իրականացում,

• հակամենաշնորհային միջոցառումների հրատապ մշակում ու իրականացում,

• առևտրի և սպասարկման ոլորտներում նոր խոշոր օբյեկտների հիմնադրման ժամանակավոր սառեցում,

• հակակոռուպցիոն միջոցառումների ամբողջական ծրագրերի մշակում և իրականացում հասարակության ներկայացուցիչների լայն ներգրավման ու պետական կառույցների ներկայացուցիչների մասնակցության կրճատման կամ մասնակցության բացառման միջոցով,

• հարկային բարեփոխումների ծրագրի մշակում և իրականացում՝ հարկային բեռի տեղափոխում հասարակության ունևոր հատվածի վրա, սպառողից դեպի եկամուտ ստացողը, ցածր եկամուտ ստացողից դեպի բարձր եկամուտ ստացողը,

• ԿԲ անկախության վերականգնում, դրամավարկային քաղաքականության նպատակաուղղումը կայուն տնտեսական աճի նախադրյալների ապահովմանը, հարկաբյուջետային ու դրամավարկային քաղաքականությունների ներդաշնակեցման մակարդակի խորացում, փոխարժեքի ազատ լողացող քաղաքականության հետևողական իրականացում,

• բանկային համակարգի կայունության և զարգացման, վատորակ ակտիվների առողջացման հատուկ ծրագրերի մշակում և իրագործում, ավանդների հատուցման երաշխավորված շեմի բարձրացում,

• զբաղվածության ընդլայնման, նոր աշխատատեղերի ստեղծման, այդ թվում, օր., «սնունդ աշխատանքի դիմաց», միջգյուղական և ներգյուղական ճանապարհների վերականգնման, այդ թվում նաև համայնքի և նրա ներկայացուցիչների միջոցների ներգրավմամբ, հասարակական բնույթի աշխատանքների իրականացման ծրագրերի մշակում և իրականացում, բնակչության ժամանակավոր զբաղվածության ծրագրերի մշակում և դրանց իրականացման համար բյուջեում համապատասխան հոդվածների նախատեսում,

• ըստ առանձին մարզերի և մարզերի առանձին հատվածների սոցիալական իրավիճակային նպատակային ծրագրերի մշակում և իրականացում:

Նշված միջոցառումների շարքում առանձնահատուկ է տնտեսության մեջ պետության դերի վերափոխումը, մասնավոր հատվածի հետ համագործակցության նոր մոտեցումների մշակումն ու նոր գործիքների կիրառումը, որի հիմնական նպատակը պետք է լինի բնակչության ներգաղթի և արտագաղթածների վերադարձի համար կայուն նախադրյալների ձևավորումը:

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գագիկ Վարդանյան
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
gagik.v@yahoo.com

Տնտեսական աճի ինովացիոն բնույթը և մեխանիզմները, ժամանակակից գիտելիքահենք տնտեսության նպատակները, բովանդակությունը և գործիքները, ի վերջո՝ տնտեսական զարգացման ֆենոմենը հասկանալու բանալին Յոզեֆ Շումպետերի դասական աշխատությունն է՝ «Տնտեսական զարգացման տեսությունը»: Բազմաթիվ առումներով՝ այն նաև ժամանակակից տնտեսական ճգնաժամի խոր ըմբռնման բանալին է:

«Ֆենոմեն» (հուն. φαινόμενον — «երևացող», «երևույթ») բառեզրն ընդհանուր իմաստով նշանակում է երևույթ: Ֆենոմենը նաև անսովոր երևույթ է, հազվագյուտ փաստ, այն ինչը դժվար է ըմբռնել: Թերևս դա է պատճառը, որ Յոզեֆ Շումպետերը, առաջինն այդ բառեզրն օգտագործելով տնտեսական զարգացման երևույթի առնչությամբ, իր վերոնշյալ գրքի «Տնտեսական զարգացման հիմնական ֆենոմենը» գլխում գրում է. «…մենք պետք է լինենք շրջահայաց ընդհանրապես զարգացման ֆենոմենի նկատմամբ, որը մենք ուսումնասիրում ենք, ավելի շրջահայաց այն հասկացության նկատմամբ, որի միջոցով արտահայտում ենք այն, էլ ավելի շրջահայաց այն բառի նկատմամբ, որով մենք բնութագրում ենք այդ հասկացությունը»[23]: Շումպետերի մոտեցումը տալիս է տնտեսական զարգացման շարժիչ ուժերի տեսլականը, որտեղ առանցքային հայեցակարգային տեղ է զբաղեցնում ինովացիաների կատեգորիան: Շնորհիվ դրանց՝ փոխվում է տնտեսական շրջապտույտի հետագիծը, ինչը բնորոշ է զարգացմանը, այլ ոչ աճին: Հետևաբար, տնտեսական զարգացումը հենց դրանով էլ տարբերվում է տնտեսական աճից:

Թեպետ դեռևս 1911թ. հրատարակված իր վերոնշյալ աշխատությունում Շումպետերը տարբերակել է տնտեսական աճն ու տնտեսական զարգացումը, իսկ հետագայում ի հայտ են եկել այդ մոտեցման բազմաթիվ կողմնակիցներ, այդուհանդերձ, այժմ էլ չեն դադարել այդ թեմայի շուրջ քննարկումները: Զարգացող երկրների տնտեսական զարգացման վերաբերյալ քննարկումները հաճախ հանգեցվում են տնտեսական աճի

[23] Шумпетер Й. А. Теория экономического развития. М.: Прогресс, 1982, с. 148.

վերաբերյալ դատողություններին: Մինդեռ երկրի տնտեսական զարգացման մակարդակի չափման համար, բացի տնտեսական աճից կամ ՀՆԱ-ի աճից, կիրառվում են նաև այնպիսի ցուցանիշներ, ինչիսին են ազգային տնտեսության ճյուղային կառուցվածքը, բնակչության մեկ շնչի հաշվով հիմնական արտադրատեսակների արտադրությունը, բնակչության կենսամակարդակը և կյանքի որակը, տնտեսական արդյունավետության ցուցանիշները: Ընդ որում, բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն տնտեսական զարգացման որոշիչ ցուցանիշ է, քանի որ հատկապես դա է պայմանավորում, թե որ երկրներն են համարվում զարգացած:

Բնակչության աճող եկամուտների և կենսամակարդակի մշտական աճի հիմնական միջոցն աճող և մրցունակ տնտեսությունն է: Առաջավոր երկրներում մարդկանց բարձր կենսամակարդակը և կյանքի որակն ապահովվում է ոչ այնքան բարձր տնտեսական աճով, որքան դրա ինովացիոն բնույթով:

Թեպետ տնտեսական աճին նպաստում է զբաղվածության մակարդակի բարձրացումը, այդուհանդերձ, այդ ազդեցությունը սահմանափակ է, քանի որ չի կարող ապահովել որակական տեղաշարժեր տնտեսությունում: Բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտների աճի մեծ մասը, սովորաբար, ապահովվում է աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ:

Աշխատանքի արտադրողականության աճը բխում է կապիտալի կուտակումից եւ ինովացիայից, այսինքն, նոր, բարձր արժեք ունեցող արտադրանքի և գործընթացների ստեղծումից, տարածումից և օգտագործումից: Ինովացիան հանգեցնում է տնտեսության կառուցվածքի փոփոխությանը:

Անկախության հռչակումից երեք տասնամյակ անց մենք կարող ենք ասել, որ պատասխան չի տրվել հետևյալ հարցին. «Ինչո՞ւ Հայաստանում (ինչպես նաև հետխորհրդային մյուս երկրներում) իրականացված շուկայական վերափոխումները հանգեցրել են երկրի ապաարդյունաբերականացմանը, անարդյունավետ և անմրցունակ տնտեսության ձևավորմանը, բնակչության՝ դեպի լավը փոփոխությունների նկատմամբ սոցիալական հոռետեսական ճնշվածությանը»: Նշված հարցի պատասխանները, որոնք առաջարկում են ազգային և արտասահմանյան փորձագետները, զարմանք են առաջացնում իրենց անիրագործելիությամբ: Նրանց երաշխավորություններն ամբողջ անցումային շրջանում մնացին անփոփոխ, մինչդեռ իրավիճակը չփոխվեց: Այդ փորձագետները եղել են «շոկային թերապիայի» կողմնակիցներ, ինչը ներառել է հետևյալ հիմնական տարրերը. գների ազատականացում, արտաքին առևտրի և արտարժույթի կուրսի ազատականացում, ապապետականացում և պետական ձեռնարկությունների մասնավորեցում, գնաճից զերծ մակրոտնտեսական քաղաքականության իրականացում: Այդ ամենը, ինչպես

ենթադրվում էր, բավարար կլինի մինչև համաշխարհային մակարդակը գների համահավասարեցման և շուկայական հաստատությունների ստեղծման համար, իսկ այնուհետև շուկան ինքը (կամ Ադամ Սմիթի «անտեսանելի ձեռքը») կկարգավորի տնտեսական գործընթացները: Մասնավորեցման, ազատականացման և ապակարգավորման քաղաքականությունների այս հավաքածուն հստակ ցուցադրեց զարգացող աշխարհում աճի կայունացում ապահովելու իր սահմանափակումները:

Հայաստանում վերոնշյալ քաղաքականությունների իրագործմամբ ստեղծվել են շուկայական հաստատություններ, ձևավորվել է նշանակալի մասնավոր հատված, այդուհանդերձ, սոցիալ-տնտեսական բազմաթիվ հիմնախնդիրներ մնում են չլուծված: Դրանց շարքում ամենագլխավորը տնտեսական զարգացման հիմնախնդիրն է, որը չի հաջողվել լուծել, որովհետև ՀՀ տնտեսական քաղաքականությունը, անկախ իշխանական դեմքերի փոփոխությունից, տևական ժամանակ մնացել է անփոփոխ. շեշտադրումն արվել է տնտեսական աճի, այլ ոչ զարգացման վրա:

Հիմնականում դրանով կարելի է բացատրել այն, որ գրեթե երկու տասնամյակ տևած, ՏՀԶԿ անդամ երկրների միջինից բարձր աճի տեմպերը (*գծապատկեր 1*), մասնավորապես, անդրկովկասյան երկրներում և Ռուսաստանում, չեն ապահովել նշանակալի առաջընթաց տնտեսությունների կառուցվածքների փոփոխության, բնակչության համընդհանուր բարեկեցության բնագավառներում:

***Գծապատկեր 1.* ՏՀԶԿ անդամ երկրների և Անդրկովկասի երկրների ՀՆԱ-ի աճի տեմպերը 1961-2017թթ. (%)**[24]



[24] Աղբյուր՝ World Bank national accounts data, and OECD National Accounts data files.(հասնելի է https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?end=2017&locations=AM-AZ-GE-RU-OE&start=1961&view=chart).

Ինչպես երևում է *գծապատկեր 1*-ից, հետխորհրդային չորս երկրների աճի ցուցանիշները նշանակալի բարձր են եղել ՏՀԶԿ-ի միջինից, բայցև 2008թ. տնտեսական ճգնաժամով պայմանավորված՝ անկումները գերազանցել են ՏՀԶԿ տնտեսական անկման միջին ցուցանիշը: Ըստ էության, Հայաստանի և մյուս երկրների տնտեսական աճը ինովացիոն բնույթ չի ունեցել: Մինչդեռ զարգացած երկրների տնտեսական աճը հիմնականում ինովացիոն բնույթի է, ինչով էլ պայմանավորված՝ 2008թ. ֆինանսական և տնտեսական ճգնաժամով հարուցված անկումն այդ երկրներում այդքան խոր դրսևորումներ չի ունեցել:

Հարկ է նշել, որ տնտեսական վերափոխումներ ձեռնարկած մի շարք երկրների, հատկապես Արևելյան Ասիայի, առաջընթացը կարելի է բացատրել տնտեսական զարգացման ֆենոմենով: Այդ երկրներին՝ Ճապոնիային, ասիական «վագրերին», այդ թվում՝ Հարավային Կորեային, իսկ այժմ նաև Չինաստանին, հաջողվեց համեմատաբար կարճ ժամանակահատվածում հասնելու տպավորիչ տնտեսական առաջընթացի: Այդ հաջողված փորձերը կարող են լինել օգտակար նաև Հայաստանի համար:

Չինաստանի տնտեսության ֆենոմենալ աճին նպաստել է մի շարք գործոնների արդյունավետ համադրումը[25]: Առաջին գործոնը, պետության արդյունավետ դերն է տնտեսությունում, ինչն ազդել և ազդում է տնտեսական վերափոխումների բոլոր փուլերում ընթացող գործընթացների վրա: Ընդ որում, երկնիշ տնտեսական աճ է նկատվել նաև նախքան վերափոխումների սկիզբը (1979թ.): Վերափոխումների ընթացքում տեսության մեջ պետության դերը նշելու համար կիրառվում է «մակրոտնտեսական վերահսկողության համալիր համակարգ, որն իրականացվում է տնտեսական լծակների միջոցով» արտահայտությունը: Ի տարբերություն այն երկրների, որտեղ կիրառվեց «շոկային թերապիան», Չինաստանի ղեկավարներն աստիճանաբար, անհրաժեշտության առաջացմանը զուգընթաց, կառուցում էին շուկան (հաստատություններ, մրցակցություն, մասնավոր սեփականություն) և զուգահեռաբար աջակցում պետական ձեռնարկությունների արդիականացմանը: Հատկապես ուշագրավ է այն, որ Չինաստանում նպատակահարմար չի համարվել պետական ձեռնարկությունների մասնավորեցումը վերափոխումների առաջին փուլում, իսկ մասնավոր սեփականությունը զարգացվել է ոչ թե պետականի փոխարեն, այլ դրան զուգահեռ: Բացի դրանից, դրամավարկային քաղաքականությունը եղել է երկրին անհրաժեշտ արտադրություններին աջակցող, այլ ոչ կոշտ, ինչպես դա արվեց Հայաստանում: Երկրորդ, աշխատուժի նշանակալի ռեսուրսներ՝ դրանց որակի մշտական բարձրացմամբ

[25] Жуджунь Дин, Ковалев М. М., Новик В. В. Феномен экономического развития Китая: Научное издание. Мн.: Издательский центр БГУ, 2008, сс. 10–12.

և ոչ բարձր աշխատավարձով: Երրորդ գործոնը խնայողությունների բարձր բաժնեմասն է (ՀՆԱ-ի 30%-ից բարձր)՝ օտարերկրյա ներդրումների ներգրավման (առաջին հերթին բարձր տեխնոլոգիական ոլորտներ) արդյունավետ ռազմավարությամբ հանդերձ: Համեմատության համար՝ ՀՀ-ում ՕՈՒՆ-ների նկատմամբ չի կիրառվել ընտրանքային մոտեցում, ինչի պատճառով ներդրումների մեծ մասը ներհոսել է ցածր ավելացված արժեք ստեղծող ոլորտներ, ինչը չի նպաստել ՀՀ արտահանման մեջ ավելացված արժեքի բաժնեմասի մեծացմանը: Փաստորեն, Չինաստանը կիրառել է վարչահրամայական մոտեցումներ ՕՈՒՆ-ների նկատմամբ, ինչն ընդունված է բազմաթիվ երկրներում՝ ավելցուկ արտասահմանյան ազդեցությունից կամ անթույլատրելի կորուստներից խուսափելու նկատառումներով[26]: Չորրորդ, տնտեսության բացությունը՝ հիմնված արտահանման կողմնորոշմամբ զարգացման մոդելի վրա, ինչը ենթադրել է արտարժութային եկամուտների հաշվին տնտեսության տեխնոլոգիատարության և գիտատարության բարձրացում, նորագույն ՏՀՏ-ների յուրացում, արդյունաբերական լոգիստիկայի ժամանակակից սխեմաների ներդրում: Հինգերորդ գործոնը շահավետ տարածքային-աշխարհագրական տեղաբաշխվածությունն է. աշխարհում ըստ տարածքի երրորդը լինելը և ծովային ելք ունենալը:

Հարավային Կորեայի զարգացման ֆենոմենն առաջացել է մի քանի փուլերով: Առաջին փուլում (1950-ական թթ. երկրորդ կես), նախքան արմատական վերափոխումներին անցնելը, երկրում իրականացվել են մի շարք կարևոր նախապատրաստական միջոցառումներ. ագրարային ռեֆորմ (հողի մասնավորեցում) և անգրագիտության վերացում: Տնտեսության մեջ առանձնակի հաջողություններ չեն նկատվել: Այդ փուլում գերիշխել է զարգացման ներմուծման փոխարինման մոդելը՝ ներքին շուկային կողմնորոշմամբ, ինչն իրեն չարդարացրեց շուկայի չափից ավելի փոքր լինելու պատճառով: Այդ փուլում Հարավային Կորեան ստացել է նաև նշանակալի օգնություն ԱՄՆ-ից: Երկրորդ փուլում (1960-ական թթ.) իրականացվել են արդյունաբերականացման քաղաքականություն, սկսելով թեթև արդյունաբերությունից: Զարգացել է նաև սննդի արդյունաբերությունը: Կողմնորոշումն այդ աշխատատար արտադրությունները հետապնդել է ավելցուկ աշխատուժը կլանելու նպատակ: Սակայն գլխավոր նորույթն այն էր, որ անցում կատարվեց ներմուծման փոխարինումից արտահանմանը կողմնորոշված տնտեսական զարգացման մոդելին: Երրորդ փուլում (1970-ական թթ.) կատարվեց անցում արդյունաբերականացման հաջորդ մակարդակ, որը նախատեսում էր ծանր արդյունաբերության

[26] Линдерт П. Экономика миро – хозяйственных связей. М.: «Прогресс», 1992, с. 461.

(հատկապես մետաղագործական, մեքենաշինական, քիմիական) զարգացմանը: Չորրորդ փուլում (1980-ական թթ.) շարունակվող արդյունաբերականացման ժամանակ հատուկ ուշադրություն էր դարձվում ատոմային էներգետիկային, ավտոմոբիլաշինությանը, նավաշինությանը: Այդուհանդերձ, տնտեսական քաղաքականության գլխավոր ուղղությունն անցումն էր արդյունաբերականացման էլ ավելի բարձր մակարդակի՝ կապված առավելապես գիտատար և բարձր տեխնոլոգիական ոլորտների զարգացման հետ: Հարավային Կորեայի տնտեսական մոդելի փոփոխությունն իր հերթին խթանեց ներդրումները գիտահետազոտական աշխատանքներում, որոնք կազմեցին ՀՆԱ-ի 2%-ը (2016թ.՝ 4.25% կամ բնակչության մեկ շնչի հաշվով՝ 4-րդն աշխարհում)[27]: Այստեղ տեղին է նշել, որ այդ ցուցանիշով Հայաստանը համեմատության եզրեր չունի ոչ Հարավային Կորեայի և ոչ էլ ՏՀԶԿ անդամ երկրների հետ *(գծապատկեր 2)*: Միաժամանակ խիստ խրախուսվում էր առաջավոր արտասահմանյան տեխնոլոգիաների ներմուծումը, ինչն սկսվել էր կիրառվել հենց արդյունաբերականացման սկզբում: Ստեղծվեցին արտադրական և տեխնոլոգիական պարկեր, որտեղ մշակվում էին նորագույն տեխնոլոգիաներ: Այդ փուլում ազատականացվեց նաև արտաքին առևտուրը: Հինգերորդ փուլում Հարավային Կորեան վերջնականապես դարձավ տնտեսապես զարգացած պետություն՝ հետարդյունաբերական զարգացման շոշափելի տարրերով հանդերձ: Ընդհանուր առմամբ՝ տնտեսական զարգացման կորեական ֆենոմենի առանձնահատկություններն են անհավանական աշխատասիրությունը, հզոր կոնգլոմերատները, համեմատաբար թույլ փոքր ընկերությունները և բարձր սոցիալական համախմբվածությունը:

Ինչպես երևում է *գծապատկեր 2*-ից, ՀՀ-ում, անցած 20 տարիների ընթացքում առանձնապես էական տեղաշարժեր չեն եղել: Կատարված ներդրումները հիմնականում ուղղված են եղել գիտական սակավ ներուժի ինչ որ կերպ պահպանելուն, քան տեխնոլոգիական ինովացիաներին ու դրանց տարածմանը տնտեսությունում:

Տնտեսական զարգացման չինական մոդելն ամբողջությամբ չի կարող ընդունելի լինել Հայաստանի համար, որովհետև հիմնված է մատչելի և զանգվածային էժան աշխատուժի, սոցիալական ցածր մակարդակի երաշխիքների վրա: Հարավային Կորեայի մոդելն ավելի իրատեսական է Հայաստանի համար, եթե ստեղծվեն որոշ նախադրյալներ: Ընդ որում, հարկ է նկատել, որ Հայաստանի պարագայում, ինչպես տարածաշրջանային բախումների, այնպես էլ երկրի ապագայի տեսանկյունից՝ օրհասական է Հայաստանի տնտեսական զարգացման (իր բուն իմաստով)

[27] Gross domestic spending on R&D (https://data.oecd.org/rd/gross-domestic-spending-on-r-d.htm).

խնդիրը տնտեսական քաղաքականության օրակարգի գլխավոր հարց դարձնելը:

Գծապատկեր 2. **ՀՀ-ում, Հարավային Կորեայում և ՏՀԶԿ անդամ երկրներում գիտական հետազոտություններում կատարված ներդրումների դինամիկան (ՀՆԱ նկատմամբ, %)**



Որքանով է իրատեսական Հայաստանի տնտեսական զարգացման ֆենոմենը: Այնքանով, որքանով կդրսևորվի քաղաքական կամք ու կձևավորվեն առաջընթացի համընդհանուր արժեքներ, և հատկապես հասարակական պահանջ: Այդ տեսակետից՝ միանգամայն իրավացի է ճապոնացի տնտեսագետ Յոշիհարա Կյունիոն, ով նկատել է, որ Ճապոնիայի հաջող զարգացման հիմքերից մեկը մշակույթն է. հատկապես այն, որ ճապոնացիները մեծ նշանակություն են տվել նյութական դատողություններին, աշխատասիրությանը, ապագայի համար կուտակմանը, կրթությանն ու կոլեկտիվիզմին[28]:

Հայաստանում հիմնականում ավարտվել է կապիտալի նախնական կուտակումը: Խնդիրը ներկայում հանգում է դրա արդյունավետ գործադրելուն:

Առաջին քայլերից մեկը կարող է լինել, մի կողմից, հասարակության մեջ օլիգարխների նկատմամբ վերաբերմունքը փոխելը, իսկ մյուս կողմից՝ օլիգարխների վարքագծի փոփոխությունը: Ապրիլյան իրադարձություններից հետո ընկած ժամանակահատվածում ՀՀ Կառավարության ձեռնարկած որոշ միջոցառումներ պարարտ հող են ստեղծում մեծ կապիտալ կուտակած անձանց իրապես երկրի զարգացման գործին մասնակից

[28] Kunio Y., Japanese Economic Development: A Short Introduction. Tokyo: Oxford University Press. 1979. pp. 1–30.

դարձնելու համար: Ոչ թե օլիգարխիան պետք է կառավարի պետությունը, այլ պետությունը պետք է կառավարի օլիգարխիային, ինչպես դա արվեց Հարավային Կորեայում[29]՝ շնորհիվ Նախագահ Պակ Չժոն Խիի ավտորիտար իշխանության: «Կառավարել օլիգարխիան» արտահայտությունն այստեղ նկատի չի առնվում ուղղակի իմաստով, այլ խոսքը վերաբերում է այն բանին, որ Կառավարությունը պետք է առաջարկի այս կամ այն ֆինանսաարդյունաբերական խմբին զարգացնելու (ներդրումներ անելու) տնտեսության նոր, արագ աճող ինովացիոն ոլորտներում, այդպիսով ապահովելով երկրի տնտեսական աճի ինովացիոն բնույթը: Այդ դեպքում պետությունը պետք է համակողմանի աջակցի այդպիսի «կամավոր-պարտադիր» նախաձեռնություններին: Ըստ էության, այստեղ խոսքը վերաբերում է զարգացման պետությանը, որն անհրաժեշտ է հատկապես տնտեսական զարգացման ֆենոմենի առաջացման տեսանկյունից: Այդպես է եղել նաև Ճապոնիայում ու Չինաստանում:

Զարգացման պետությունը ոչ միայն երաշխավորում է նորաստեղծական միջավայրի առկայությունը, այլև գոյացնում է արտադրական-տեխնոլոգիական շղթաներ, համակարգում է արդյունաբերական աճը, ապահովում է գիտության և ձեռնարկությունների միջև սիներգետիկ փոխգործակցությունը: Զարգացման պետությունը վարչահրամայական կարգավորման որոշ տարրերի ժամանակակից գործադրում է, շուկայական ուժերի ավելի ազատ դրսևորումների խթանում[30]:

Վերոնշյալը հիմք է եզրակացնելու, որ զարգացման և, մասնավորապես, տնտեսական զարգացման խնդիրը լուծելը բավական դյուրին է. եթե զարգացումը տեղի է ունենում այն երկրում, որտեղ իշխանությունը դնում է զարգացման խնդիր:

Ժամանակային հորիզոնը կարևոր է երկիրը տնտեսական զարգացման հետագիծ դուրս բերելու համար: Երեկ արդեն ուշ էր: Այժմ մենք չունենք այն ռեսուրսներն ու ժամանակը, ինչն ունեին առաջին բարեփոխիչները և նրանցից հետո եկած իշխանությունները: Շատ գործընթացներ դարձել են անշրջելի՝ բացասական իմաստով: Օրինակ, այլևս հնարավոր չէ պետական հատվածին զուգահեռ զարգացնել մասնավոր հատվածը, քանի որ պետական հատվածի փոխարեն ու այդ հենքով է ստեղծվել տնտեսության մասնավոր հատվածը, որի կառուցվածքը հեռնակար չունի, իսկ տնտեսության նոր հատվածները (ինովացիոն) նշանակալի չեն: Այդ կառուցվածքն ապագա չունի՝ մրցունակ լինելու և բնակչության

[29] Խոսքը վերաբերում է չեբոլներին կամ կոնգլոմերատներին:

[30] Տես Վարդանյան Գ. Տնտեսական առաջընթացի մոդելը. զարգացման պետություն// «Տնտեսության և հասարակության զարգացում. 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ» ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր (2017թ., նոյեմբերի 22-24): ՀՊՏՀ: Եր.: «Տնտեսագետ», 2018, էջ 4–8:

բարձր կենսամակարդակ ապահովելու, տնտեսական անվտանգության և ընդհանուր առմամբ՝ ազգային անվտանգության[31] տեսանկյուններից: Երկրորդ՝ այլևս հնարավոր չէ կամ ավելի պակաս արդյունավետ կլինի ընտրանքային մոտեցման կիրառումն ՕՈՒՆ-ների նկատմամբ: Երրորդ՝ այլևս հնարավոր չէ իրականացնել դրամավարկային այնպիսի քաղաքականություն, որը կաջակցեր պետության համար կարևոր արտադրություններին և այլն:

Տնտեսական զարգացման ֆենոմենի առաջացման գլխավոր նախադրյալը մարդկային կապիտալն է, կրթված բնակչության կրիտիկական զանգվածի առկայությունը: Կպահանջվեն զանգվածային ներդրումներ առողջապահության և կրթության մեջ: Այդպես են վարվել, մասնավորապես, Արևելյան Ասիայի առաջավոր երկրները: Դա չպետք է պայմանավորել երկրի տնտեսական ներուժով:

[31] Առանց մեքենաշինական համալիրի դժվար է պատկերացնել ազգային անվտանգությունը:

ԵՐԿՐՆԵՐԻ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Սամսոն Դավոյան
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
samsondavoyan2014@gmail.com

«Փոփոխությունները կյանքի օրենք են: Եվ նրանք, ովքեր նայում են միայն անցյալին կամ միայն ներկային, անպայման բաց կթողնեն ապագան»:

Ջոն Ֆիցջերալդ Քենեդի

Համաշխարհային տնտեսության բազմաբնույթ փոփոխությունները, որոնք տեղի են ունենում աշխարհաքաղաքական, բնապահպանական, սոցիալական և այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների էական ազդեցությունների շնորհիվ, լուրջ մարտահրավերներ են ներկայացնում տարբեր երկրների իշխանություններին և հասարակությանը: Դրանց դիմակայելու նպատակով նրանք մշակում և իրականացնում են ռազմավարական, հայեցակարգային, հեռանկարային, ընթացիկ և այլ տարաբնույթ ծրագրեր: Սովորաբար, այդ ծրագրերի իրականացումն ուղղորդվում է բազմաբնույթ վերափոխումների մշակմամբ և գործնական կիրառմամբ: Յուրաքանչյուր երկրի համար գիտագործնական նշանակության կարևոր խնդիր է այն, թե ինչ համեմատական արդյունավետությամբ են մշակում և իրականացնում համապատասխան վերափոխումները զարգացման համարյա նույն մակարդակում գտնվող երկրները: Ինչպես միջազգային (Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ, Միավորված ազգերի կազմակերպություն), այնպես էլ ոչ կառավարական կազմակերպությունների կողմից (Համաշխարհային տնտեսական համաժողով, Ժառանգություն հիմնադրամ և այլն) մշակվում են բազմաթիվ համաթվեր (համաշխարհային մրցունակության, տնտեսական ազատության, ժողովրդավարության և այլն), որոնք ներկայացնում են տարբեր երկրներում իրականացված վերափոխումների առանձին ուղղությունները: Սակայն այդ համաթվերն ամբողջական պատկերացում չեն տալիս երկրներում իրականացված բազմաբնույթ վերափոխումների բոլոր ուղղությունների վերաբերյալ:

ԵԱՏՄ երկրներում իրականացված սոցիալ-տնտեսական վերափոխումների արդյունքների համեմատական արդյունավետության գնահատման նպատակով մեր կողմից մշակվել է նոր մեթոդաբանություն, որը հնարավորություն է ընձեռում ինչպես դինամիկայում (2007-2017թթ.), այնպես էլ առանձին տարիների կտրվածքով գնահատելու յուրաքանչյուր երկրում իրականացված բազմաբնույթ վերափոխումներն ըստ մեր կողմից ընտրված մասնակի համաթվերի, որոնք իրենց քանակական արտահայտությունն են գտել տարբեր միջազգային և ոչ կառավարական կազմակերպությունների կողմից հրապարակված զեկույցներում:

Առաջարկված նոր մեթոդաբանության հիմնական խնդիրն է միավորել ԵԱՏՄ երկրներում իրականացված տարաբնույթ վերափոխումներն արտահայտող վերոնշյալ մասնակի համաթվերը մեկ ընդհանուր /ագրեգացված / համաթվում, որն իր կազմի մեջ մտնող մասնակի համաթվերի շրջանակներում կարտահայտի ընդհանուր վերափոխումների համեմատական արդյունավետությունը:

Նշված մեթոդաբանական խնդրի լուծման նպատակով օգտագործվել են տարբեր էկոնոմետրիկ մեթոդներ (գլխավոր բաղադրիչի, պանելային ռեգրեսիայի, կլաստերային և գործոնային վերլուծությունների, նեյրոնային ցանցերի և այլն), ինչպես նաև տարբեր ծրագրային փաթեթներ /Eviews, SPSS, MATLAB և այլն/, որոնց օգնությամբ ստացել ենք ընդհանրական / ագրեգացված/ համաթվի մաս կազմող որոշակի հայտանիշների հիման վրա մեր կողմից ընտրված մասնակի համաթվերի տեսակարար կշիռները, և հաշվարկել, գնահատել և իրականացրել ենք համեմատական վերլուծություն ԵԱՏՄ երկրների համար:

ԵԱՏՄ երկրների սոցիալ-տնտեսական և քաղաքական համակարգերի վերլուծության շրջանակներում այդ երկրների համար հաշվարկվել է 2012-2017թթ. համար Վերափոխումների ընդհանրական համաթիվը՝ համապատասխան երեք մակարդակներով՝ մասնակի համաթվեր /17/, հենասյուներ /13/ և ցուցանիշներ /654/:

Մեր կողմից մշակված վերափոխումների ընդհանրական համաթվի մասնակի համաթվերն են.

- Համաշխարհային մրցունակության համաթիվ,
- Գործարար ակտիվության համաթիվ,
- Կոռուպցիայի ընկալման համաթիվ,
- Տնտեսական ազատության համաթիվ,
- Մարդկային զարգացման համաթիվ,
- Ժողովրդավարության համաթիվ,

- Համաշխարհայնացման համաթիվ,
- Համաշխարհային նորարարության համաթիվ,
- Խաղաղասիրության համաթիվ,
- Բարգավաճման համաթիվ,
- Շրջագայությունների և զբոսաշրջության մրցունակության համաթիվ,
- Բնապահպանության արդյունավետության համաթիվ,
- Գենդերային անհավասարության համաշխարհային համաթիվ,
- Ցանցային պատրաստվածության համաթիվ,
- Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման համաթիվ,
- Սոցիալական առաջընթացի համաթիվ,
- Միջազգային առևտրում ներգրավվածության համաթիվ:

Վերափոխումների ընդհանրական համաթվի հենասյուններն են.

- ենթակառուցվածքներ,
- ֆինանսական հատված,
- մասնավոր հատված,
- պետական հատված,
- օրինապահություն,
- կրթություն,
- տնտեսական զարգացում,
- գիտություն, նորարարություններ և տեխնոլոգիա,
- շրջակա միջավայր,
- առողջապահություն,
- քաղաքական հատված,
- միջազգային առևտուր և ծառայություններ,
- սոցիալական առաջընթաց, զարգացում և աշխատուժ:

Վերափոխումների ընդհանրական համաթվի առավել մեծ թվով ցուցանիշներ պարունակող հենասյունը ենթակառուցվածքներ հենասյունն է՝ կազմված 96 ցուցանիշներից /տես *գծապատկեր 1/*: Հենասյան ցուցանիշներից են տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ), ճանապարհային, երկաթուղային, ծովային և օդային տրանսպորտային ենթակառուցվածքների որակը, ՏՀՏ կիրառելիությունը գործարար հարաբերություններում, փոստային ծառայությունների որակը և այլն:

Գծապատկեր 1. **Վերափոխումների ընդհանրական համաթվի հենասյուներում ներառված ցուցանիշները**



Հենասյուների վարկանիշային միավորների միջինացման արդյունքում ստացել ենք վերափոխումների ընդհանրական համաթիվը ԵԱՏՄ երկրներից յուրաքանչյուրի համար: Ստորև ներկայացնում ենք վերոնշյալ մեթոդաբանությամբ 2012-2017թթ. համար վերափոխումների ընդհանրական համաթվի հաշվարկման արդյունքները ԵԱՏՄ երկրների համար: Նշենք, որ որքան վարկանիշային միավորը մոտ է 1-ին, այնքան վերափոխումներն առավել բարձր արդյունավետությամբ են իրականացվել (տես *գծապատկեր 2*):

Գծապատկեր 2. **Վերափոխումների ընդհանրական համաթվի վարկանիշային միավորները ԵԱՏՄ երկրներում 2012-2017թթ.-ին**



Գծապատկեր 2-ում ներկայացված տվյալները վկայում են, որ ըստ Վերափոխումների ընդհանրական համաթվի՝ վերափոխումների համեմատական արդյունավետությամբ ԵԱՏՄ երկրներից առաջատարը Ռուսաստանի Դաշնությունն է 0,978 վարկանիշային միավորով, որին հաջորդում է Ղազախստանը՝ 0,952 վարկանիշային միավորով, ապա՝ ՀՀ-ը՝ 0.906 վարկանիշային միավորով: Բելառուսը և Ղրղզստանը պակաս արդյունավետ են իրականացրել բազմաբնույթ վերափոխումները՝ համապատասխանաբար 0.869 և 0.847 վարկանիշային միավորներով:

2012-2017 թվականների վերափոխումների ընդհանրական համաթվի 654 ցուցանիշների միջոցով ԵԱՏՄ երկրների համար կատարված գնահատումները ցույց են տվել, որ նշված ժամանակահատվածում ընդհանրական համաթվի հենասյուների վարկանիշային միավորները կրել են էական փոփոխություններ՝ դրսևորելով փոփոխման տարբեր միտումներ: Ստորև ներկայացված են ԵԱՏՄ երկրների տնտեսությունների զարգացմանը առավել նպաստող և զարգացումը սահմանափակող ցուցանիշները 2012-2017թթ.: Հարկ է նշել, որ ստացված արդյունքները դիտարկված են ԵԱՏՄ հինգ երկրների՝ Հայաստանի, ՌԴ-ի, Ղազախստանի, Ղրղզստանի և Բելառուսի համեմատական սոցիալ-տնտեսական զարգացումը բնութագրող վերափոխումների ընդհանրական համաթվի 654 ցուցանիշների, 13 հենասյուների և 17 համաթվերի համատեքստում:

Այսպիսով, *գծապատկեր 3, 4*-ում ներկայացված են Ռուսաստանի Դաշնության տնտեսության զարգացմանը նպաստող և խոչընդոտող հիմնական ցուցանիշներից մի քանիսը:

Գծապատկեր 3, Գծապատկեր 4. **2012-2017թթ. Ռուսաստանի տնտեսության 2012-2017թթ. Ռուսաստանի տնտեսության զարգացմանը նպաստող ցուցանիշները զարգացումը խոչընդոտող ցուցանիշները**





Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ապա 2012-2017թթ. ընկած ժամանակահատվածում իրականացված բազմաբնույթ վերափոխումներից առավելապես հաջողվել են հարկային բեռի, սեփականության իրավունքի պաշտպանության, իրավունքի գերակայության, բանկային համակարգի կայունության և բիզնես սկսելու դյուրինության ուղղութուններով իրականացված բարեփոխումները /տես *գծապատկեր 5*/:

Գծապատկեր 5, Գծապատկեր 6. **2012-2017թթ. Հայաստանի տնտեսության 2012-2017թթ. Հայաստանի տնտեսության զարգացմանը նպաստող ցուցանիշները զարգացումը խոչընդոտող ցուցանիշները**





Միևնույն ժամանակ, նույն ժամանակահատվածում ՀՀ-ում պակաս արդյունավետ են իրականացվել կոռուպցիայի հաղթահարման, աղքատության և գործազրկության կրճատման, մրցակցության ինտենսիվացման և հարևան երկրների հետ հարաբերությունների բարելավման ուղղությամբ իրականացված վերափոխումները /տես *գծապատկեր 6/*:

2012-2017թթ.-ին Ղազախստանի տնտեսության զարգացմանը գլխավորապես նպաստել են կոռուպցիայի կրճատման, դեմոկրատական ինստիտուտների կայունացման, սղաճի, հարկաբյուջետային կարգավորման և վարկերի ստացման ուղղություններով իրականացված բարեփոխումները /տես *գծապատկեր 7/*:

Գծապատկեր 7, Գծապատկեր 8. **2012-2017թթ. Ղազախստանի տնտեսության 2012-2017թթ. Ղազախստանի տնտեսության զարգացմանը նպաստող ցուցանիշները զարգացումը խոչընդոտող ցուցանիշները**





Դիտարկված ժամանակահատվածում Ղազախստանի տնտեսության զարգացմանը առավելապես խոչընդոտող ուղղություններից են սեփականության գրանցման, փոքր ներդրողների շահերի պաշտպանության, տարածաշրջանային համագործակցության, բանկային համակարգի և անվճարունակության ինստիտուտները /տես *գծապատկեր 8/*:

ԵԱՏՄ երկրներից Ղրղզստանում հատկապես արդյունավետ են իրականացվել արտաքին առևտրի ազատականացման, տարածաշրջանային համագործակցության, բանկային համակարգի, բիզնես սկսելու դյուրինության ուղղություններով իրականացված բարեփոխումները /տես *գծապատկեր 9/*:

Գծապատկեր 9, Գծապատկեր 10. **2012-2017թթ. Ղրղզստանի տնտեսության 2012-2017թթ. Ղրղզստանի տնտեսության զարգացմանը նպաստող ցուցանիշ-ները զարգացումը խոչընդոտող ցուցանիշները**





Միևնույն ժամանակահատվածում Ղրղզստանում ձախողվել են կոռուպցիայի կրճատման, քաղաքական անկայունության, ֆինանսական ռեսուրսների անկայունության, սղաճի և հարկային բեռի ուղղություններում իրականացված քաղաքականությունները /տես *գծապատկեր 10/*:

Բելառուսի տնտեսությունում առավելապես արդյունավետ են իրականացվել բիզնես սկսելու դյուրինության, պայմանագրերի կնքման, սեփականության իրավունքի գրանցման, արտաքին առևտրի ազատականացման ուղղություններով իրականացված քաղաքականությունները /տես *գծապատկեր 11/*:

Գծապատկեր 11, Գծապատկեր 12. **2012-2017թթ. Բելառուսի տնտեսության 2012-2017թթ. Բելառուսի տնտեսության զարգացմանը նպաստող ցուցանիշները զարգացումը խոչընդոտող ցուցանիշները**





Իրավունքի գերակայության, շուկայի մրցակցության ինտենսիվացման, հակաինֆլյացիոն քաղաքականության, մակրոտնտեսական կայունության և սեփականության իրավունքի պաշտպանության ուղղությամբ Բելառուսի կառավարությունը պակաս արդյունավետ է գործել, ինչը չի նպաստել տնտեսության զարգացմանը /տես *գծապատկեր 12/*:

Այսպիսով, մեր կողմից առաջարկվող մեթոդաբանությամբ ոչ միայն հնարավոր եղավ դինամիկայում գնահատել և վերլուծել ԵԱՏՄ երկրներում իրականացված վերափոխումների համեմատական արդյունավետությունը, այլ նաև առանձնացնել կոնկրետ երկրի զարգացումը խոչընդոտող կամ նպաստող ուղղություններ:

Կարծում ենք, որ վերոնշյալ ուղղությամբ կատարված հետազոտական աշխատանքը կարող է դրական ազդեցություն ունենալ նաև հայրենական տնտեսագիտական մտքի զարգացման գործում: Գործնական կիրառության տեսանկյունից այն արժեքավոր է այնքանով, որ հնարավորություն կընձեռի խորհրդատվական բնույթի առաջարկություններ ներկայացնել ԵԱՏՄ երկրների կառավարություններին և նրանց առանձին ինստիտուտներին թե՛ իրականացվող վերափոխումների արդյունավետության գնահատման, թե՛ դրանց արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու ուղղությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Վիլեն Խաչատրյան
ՀՀ ՊԿԱ կառավարման ամբիոնի վարիչ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
khachatryanvilen1981@yahoo.com

Հայաստանն ապրում է տնտեսական փոփոխությունների նոր ժամանակաշրջան, քանի որ հեղափոխական և հետհեղափոխական զարգացումների համատեքստում սկսվում են վերանայվել տնտեսության մեջ մինչ այդ գործող «խաղի կանոնները»: Նշված կանոնների փոփոխություններն իրենց լուրջ դերակատարումը կարող են ունենալ Հայաստանի մակրոտնտեսական և ֆինանսական իրավիճակի վրա, և, չնայած որոշ զարգացումներ դեռևս ունեն իներցիոն բնույթ, բայց, այնուամենայնիվ, քաղաքական և ինստիտուցիոնալ փոփոխությունների և ճիշտ վերադասավորումների, իշխանության առանձին թևերի միջև գործուն հակակշիռների և զսպումների մեխանիզմների ձևավորման արդյունքում Հայաստանը համաշխարհային հանրության առջև կարող է հանդես գալ նոր քաղաքական, իրավական և, վերջապես, տնտեսական իմիջով:

Այս համատեքստում շատ մեծ կարևորություն է ստանում այն հանգամանքը, որ կարևոր է դարձել երկրի տնտեսական ներկայիս իրավիճակի ախտորոշումն ու քարտեզագրումը, որպեսզի կապ ստեղծենք ապագայում Հայաստանի թիրախավորված կամ նպատակային կետերին հասնելու հետ: Այսինքն, պարզապես պատասխանելով երկու հարցի, այն է՝ ինչպիսի տնտեսություն ունենք հիմա, և ինչպիսի տնտեսություն ենք ցանկանում ունենալ կարճաժամկետ և երկարաժամկետ ժամանակահատվածում:

Այսպիսով, Հայաստանի ՀՆԱ-ն 2013թ.-ից 2017թթ. ընթացքում ավելացել է գրեթե 1 տրիլիոն դրամով՝ հասնելով 5.6 տրիլիոն դրամի, որը գրեթե կազմում է 11.5 մլրդ ԱՄՆ դոլար: Վերջին 5-6 տարիների ընթացքում ամենաբարձր տնտեսական աճը գրանցվել է 2017թ.-ին՝ կազմելով 107.5%, իսկ ամենացածր արդյունքները եղել են 2016թ.-ին՝ 100.2%, որով էլ մեկնաբանվում է 2017թ.-ի բարձր տնտեսական աճը, այսինքն՝ ցածր բազային էֆեկտով կամ ազդեցությամբ: 2018թ.-ի 8 ամիսների ընթացքում տնտեսական ակտիվությունը շարունակում է մնալ բարձր և գտնվում է նախորդ տարվա միտումներին մոտ մակարդակի կամ գրեթե 107.7%-ի սահմաններում:

***Աղյուսակ 1.* ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների միտումները 2013-2018թթ. ընթացքում**

Ցուցանիշ/տարեթիվ	2013	2014	2015	2016	2017	2018/08
ՀՆԱ-ի ընթացիկ գներով, մլրդ դրամ (II եռ.)	4,555	4,828	5,043	5,067	5,568	1,358[1]
ՀՆԱ-ի աճի տեմպերը, (%)	103.3	103.6	103.2	100.2	107.5	107.7
Սպառողական գների ինդեքսը, (%)	105.8	103	103.7	98.6	101	102.5
Արտաքին առևտրաշրջանառությունը, մլն. ԱՄՆ դոլար	5864.6	5971.7	4724.6	5065.2	6142.9	4752.2
Արտաքին առևտրաշրջանառությունը, նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%)	104	101.8	79.1	107.2	121.3	126.1
Արտահանում, մլն. ԱՄՆ դոլար	1478.7	1547.3	1485.3	1791.7	2149.8	1586.8
Արտահանում, նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%)	107.1	104.6	96	120.6	120	115.7
Ներմուծում, մլն. ԱՄՆ դոլար	4385.9	4424.4	3239.2	3273.5	3993.1	3165.4
Ներմուծում, նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%)	102.9	100.9	73.2	101.1	122	132.0
Համախառն արտաքին պարտք, մլն. ԱՄՆ դոլար (II եռ.)	8,732	8,540	8,918	9,953	10,524	10,568

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ և ՀՀ ԿԲ տվյալների բազաներ: www.armstat.am, www.cba.am.

ԱՄՀ Համաշխարհային տնտեսության տեսլականը զեկույցի 2018թ.-ի հոկտեմբերի կանխատեսումների համաձայն[32] Հայաստանի տնտեսական աճի տեմպերը 2018թ.-ի համար բարձրացվել են մինչև 6%, իսկ 2019թ.-ին՝ 4.8% և 2023թ.-ին՝ 4.5%: Ի դեպ, 2018թ.-ի ԱՄՀ կանխատեսումներում ԱՊՀ երկրների մեջ Հայաստանի միակ մրցակիցը 6.2% աճի տեմպերով Թուրքմենիան է, իսկ սա նշանակում է, որ Հայաստանն առաջիկայում ունենալու է ԱՊՀ-ում գրանցվող միջին աճից կրկնակի անգամ բարձր

[32] https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2018/09/24/world-economic-outlook-october-2018.

տեմպեր, իսկ համաշխարհային մակարդակով մոտենալու է զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրների աճի տեմպերին: Իհարկե, բավարարվել միայն այս միտումներով չի կարելի, քանի որ առաջանցիկ աճի համար հարթակ ձևավորելու խնդիր ունի Հայաստանը, որը պետք է հիմնվի ոչ միայն ինստիտուցիոնալ առողջ գործարար և ներդրումային միջավայրերի, այլ նաև տարածաշրջանային գործընկեր երկրների համեմատությամբ մրցունակ տնտեսական ենթակառուցվածքներ ունենալու վրա: Այսինքն՝ արդյունավետ և գործող ենթակառուցվածքներ, հստակ ձևավորված լոգիստիկ շղթա, որը հնարավորություն կտա տարբեր ապրանքների արտադրության, ինչպես նաև հումքի վերամշակման ավելացված արժեքի շղթայի ձևավորման մեջ անընդհատ ավելացնել Հայաստանի մասնաբաժինը՝ ներգրավելով հնարավորինս շատ տնտեսավարող սուբյեկտներ:

ՀՀ-ում իրականացված դրամավարկային քաղաքականության արդյունքում սպառողական գների ինդեքսը գտնվել է բավականին ցածր մակարդակի վրա: 2016թ.-ին ՀՀ տնտեսությունում անգամ գրանցվել է ՍԳԻ-ի լուրջ անկում կամ դեֆլյացիա՝ 98.6%, իսկ ամենաբարձր աճը եղել է 2013թ.-ին՝ 105.8%: Եվ, եթե 2016թ.-ը չլիներ դեֆլյացիոն տարի, Հայաստանում առնվազն պետք է գրանցվեր տնտեսական անկում: 2018թ.-ի ընթացքում ՍԳԻ-ի աճի տեմպերը օգոստոսի դրությամբ գտնվել են կառավարելի միջակայքում, այն է՝ 102.5%-ի շրջանակներում: Սակայն այս միտումները մինչև տարեվերջ չեն պահպանվի՝ այդպես են կանխատեսում ԱՄՀ փորձագետները և գտնում են, որ տարին կամփոփենք 3% ՍԳԻ-ով, իսկ 2019թ.-ին կունենանք 4.4%, իսկ առաջիկա մի քանի տարիներին՝ մոտ 4%-անոց գնաճ: Սա նշանակում է, որ գնաճն ապագայում կգտնվի կառավարելի միջակայքում, սակայն նախորդ տարիների համեմատությամբ գնաճային ճնշումները կշատանան, որը կարող է հանգեցնել բնակչության որոշակի դժգոհությունների, եթե դա չուղեկցվի ինդեքսավորման արդյունավետ քաղաքականությամբ, որը գնաճի չափով կիրառում են մի շարք զարգացած և, արդեն նաև, զարգացող երկրներ իրենց բյուջեների կազմման ժամանակ՝ բարձրացնելով հանրային հատվածի աշխատողների աշխատավարձերը, բյուջեից տրվող նպաստները, կենսաթոշակները և այլն:

Արտաքին առևտրաշրջանառության վերջին երկու տարիների միտումները բավականին բարձր են, քանի որ դրանք գերազանցել են 120%-ի մակարդակը: Արտահանման ծավալները 2017թ.-ին կազմել են 2 մլրդ 150 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը հասել է գրեթե 4 մլրդ դոլարի, չնայած վերջինս չի գերազանցել 2014թ.-ին գրանցված 4.4 մլրդ դոլարի սահմանագիծը:

Արտահանման աճի միտումները 2018թ.-ի ընթացքում գրեթե կրկնակի անգամ ցածր են ներմուծման աճի միտումներից և օգոստոսի դրությամբ կազմել են 115.7% կամ դոլարային արտահայտությամբ 1 մլրդ 586.6 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծման աճի տեմպը եղել է 132.0% կամ, դոլարային արտահայտությամբ՝ 3 մլրդ 165.4 մլն ԱՄՆ դոլար, դրանից կարելի է եզրակացնել, որ Հայաստանն իր արտահանման քաղաքականության մեջ այնքան արդյունավետ չի գործում, ինչքան իր գործընկերները: Եթե այս հանգամանքը պայմանավորենք նրանով, որ Հայաստանի արտահանման շուկաներում առկա են տնտեսական խնդիրներ, սա հարցի մի կողմը կարող է լինել, իսկ եթե վերջիններս ուժեղացրել են իրենց ինքնաբավության քաղաքականությունը և դրանից բացի որդեգրել են արտաքին շուկաներ նվաճելու քաղաքականություն, ապա դա հարցի մյուս կողմը կարելի է դիտարկել: Հիմնավորումներից կարող է լինել նաև, որ աճել է հայ սպառողի գնողունակությունը, սակայն ներքին ռեսուրսների հաշվին դա բավարարելու փոխարեն հայ սպառողն ավելի հասանելի է դարձել դեպի Հայաստան ներմուծվող ապրանք արտադրողների համար, որը ոչ այլ ինչ է, քան ապրանքային և, ընդհանրապես, վճարային հաշվեկշռի բացասական մնացորդի խորացման աղբյուր: Մենք գուցե որոշակի հաջողություններ ենք արձանագրում արտահանման խթանման քաղաքականության մեջ, բայց ձախողում ենք ներմուծման փոխարինման ռազմավարության իրականացման հարցում:

Ինչ վերաբերում է ՀՀ համախառն արտաքին պարտքին, ապա 2018թ.-ի առաջին եռամսյակի դրությամբ այն հասել է 10 մլրդ 687 մլն դոլարի, իսկ արդեն 2-րդ եռամսյակի դրությամբ կրճատվել է մինչև 10 մլրդ 568 մլն ԱՄՆ դոլարի, ի դեպ, այս պարտքն իր մեջ ներառում է նաև արտաքին աշխարհին ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունների պարտքերը: 2018թ.-ի օգոստոսի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 6 մլրդ 762 մլն դոլար, որից ներքին պարտքը՝ 1 մլրդ 325 մլն ԱՄՆ դոլար, իսկ արտաքինը՝ 5 մլրդ 436 մլն ԱՄՆ դոլար: Հայաստանը երբեք այսքան մեծ ներքին պարտք չի ունեցել, սա նշանակում է, որ պարտքերի ավելացման քաղաքականության մեջ սկսվել է մի միտում, որ արտաքին պարտքերից շրջադարձ է կատարվում դեպի ներքին ռեսուրսները, որտեղ, իհարկե, տոկոսադրույքներն ավելի բարձր են: Դրա հիմնավորումներից կարող է լինել այն, որ ցանկություն կա բյուջեից վճարվող հսկայական տոկոս-սագումարները թողնել Հայաստանի տնտեսության մեջ, սակայն «բաց շուկայի գործառնությունների» տրամաբանությունից ելնելով կարելի է ենթադրել նաև, որ վերջինիս միջոցով կիրառվում է նաև ազատ դրամական ռեսուրսների շուկայից դուրս բերելու քաղաքականություն՝ փորձելով

զսպել գնաճային կամ ինֆլյացիոն ճնշումները մակրոտնտեսական միջավայրում՝ ամբողջական պահանջարկը կրճատելու միջոցով:

Ինչ վերաբերում է արտաքին պարտքի կրճատմանը, որը 2017թ.-ի դեկտեմբերի վերջի համեմատությամբ 2018թ.-ի օգոստոսի վերջի դրությամբ կրճատվել է գրեթե 58 մլն դոլարով, պայմանավորված է որոշակի քաղաքական իրադարձություններով, ինչպես նաև ՀՀ ԱԺ և ՀՀ կառավարություն համատեղ փոխհամաձայնեցված գործունեության և նոր վարկային ծրագրերի հաշվին արտաքին պարտքն ավելացնելու խզված կապով[33]:

Ֆինանսական ցուցանիշների առումով բավականին հետաքրքիր են նաև ՀՀ առևտրային բանկերի կողմից տրված վարկերի միտումները, որոնք հասել են գրեթե 3 տրիլիոն դրամի և ընդամենը 25 մլրդ դրամով են պակաս այդ ցուցանիշից, իսկ ներգրաված ավանդները օգոստոսի դրությամբ հատել են 2 տրիլիոն 730 մլրդ դրամի մակարդակը:

Եթե առաջինի կամ վարկերի պարագայում տնային տնտեսությունները, օրինակ, մարտից սկսած վերցրել են մոտ 100 մլրդ դրամի վարկեր, իսկ ձեռնարկությունները՝ գրեթե 70 մլրդ դրամի, ապա ավանդների պարագայում ապրիլից-օգոստոս ընկած ժամանակահատվածում միայն ոչ ռեզիդենտների ավանդներն աճել են գրեթե 125 մլրդ դրամով, իսկ ոչ ռեզիդենտներինը՝ 77 մլրդ դրամով: Սա կարելի է դիտարկել, որպես տնային տնտեսությունների կողմից իրենց խնդիրների լուծմանն ուղղված քայլեր, իսկ ավանդներն ավելացնող ոչ ռեզիդենտների կողմից որպես «ներդրումային դադար կամ պաուզա»:

Այսինքն, գնահատելով տեղի ունեցող իրադարձությունները, տնտեսավարողները նախընտրում են մտնել սպասողական վարքագծի ռեժիմի մեջ՝ փորձելով կանխատեսել հնարավոր քաղաքական և տնտեսական զարգացումները: Իսկ ավանդների տեղաբաշխումն առևտրային բանկերում շատ դեպքերում ուղղվում է տնային տնտեսություններին, այլ ոչ թե ձեռնարկություններին, իսկ մյուս կողմից, շատ ավելի մեծ ավանդների հոսք է առկա, քան վարկերի տրամադրում, իսկ դա էլ իր հերթին լրացուցիչ լուրջ ճնշում է բանկային համակարգի վրա, որը տնտեսության ֆինանսավորման և տնտեսական աճի բազայի վրա չի կառուցում իր հնարավոր զարգացումներն, այլ տնային տնտեսությունների սպառողական վարքագծի, որից եթե մեկ քայլ ավելի հեռուն գնանք՝ կարող ենք տրամաբանական կապ տեսնել նաև ներմուծման ծավալների աճի հետ:

[33] «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-օգոստոսին», էջ 73:

Քաղաքական և տնտեսական ներկայիս զարգացումները, որոնք ունեն լուրջ փոխկապվածություն, թույլ են տալիս կատարել մի շարք եզրահանգումներ.

- Հայաստանի տնտեսության մեջ իշխանական ուժերի փոփոխության արդյունքում տեղի է ունենում տնտեսական ներուժի ներքին վերաբաշխման գործընթաց, որն ուղեկցվում է ներդրումային ծրագրերի հետաձգման, ավանդադրվող ռեսուրսների ավելացման, ինչպես նաև ներքին և արտաքին ներդրողների մոտ որոշակի սպասողական վիճակով:
- Քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների արագությունից է կախված նաև տնտեսական կյանքում թափ հաղորդելու հնարավորությունը, քանի որ իշխանության առանձին թևերի միջև փոխհամաձայնեցված գործունեությունն է միայն, որ կարող է երկիրը հանել քաղաքական հնարավոր ճգնաժամից և դրա տրամաբանական շարունակությունը կազմող տնտեսական հնարավոր ճգնաժամից ևս:
- Տնտեսական ներքին ռեսուրսների վերաբաշխման գործընթացը կարող է ուղեկցվել նաև որոշակի տնտեսական խնդիրներով, որոնցից կարող են լինել գնաճը, հնարավոր կապիտալի արտահոսքը, ինչպես նաև խաղի նոր և բոլորի համար հավասար կանոններով շարժվելու դժվարությունները, ինչպես նաև դրանից բխող արդեն իսկ առանց հովանավորների գործելու խոչընդոտները և այլն:

ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

«ՄԵԾ ՄԵՏԱՔՍԵ ՃԱՆԱՊԱՐՀ» ԾՐԱԳՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարդան Բոստանջյան
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Չինաստանը համաշխարհային տնտեսության մեջ վերածվում է իշխանության խոշոր կենտրոնի, որն առանձնանում է աճող ներքին և արտաքին ներդրումներով: Զարգացած և զարգացող երկրներում չինական անդրազգային կորպորացիաների դերի մեծացման շնորհիվ ձևավորվում է տնտեսական համընդհանրացման նոր դարաշրջան: Բացի այդ, տվյալ ներդրումներն ամբողջ աշխարհում տարատեսակում են ներդրումների աղբյուրները և ընդունող երկրներում ներմուծում են գործարարական մշակույթի նոր տարրեր:

Համաշխարհային տնտեսության մեջ վերջերս տեղի ունեցած իրադարձությունները ցույց են տալիս, որ չինական ընկերություններն ունակ են հայրենիքում ապահովելու տնտեսական անվտանգությունը և կայուն զարգացումը, ինչպես նաև ազդելու միջազգային շուկաներում ձևավորված ուժերի հարաբերակցության վրա, մտածելու և գործելու համաշխարհային մասշտաբներով և հաջողված օրինակների տարածման միջոցով նպաստելու այլ շուկաների զարգացմանը: Այս առումով Հայաստանի տնտեսությունը բացառություն չէ: Ավելին. Չինաստանի և Հայաստանի միջև առևտրատնտեսական ու մշակութային առնչություններն ունեն երկար դարերի պատմություն և չեն սահմանափակվում միայն Մետաքսի ճանապարհի շուրջ ձևավորված հարաբերություններով:

Թեև չինական ներդրումների համար Հայաստանի գրավչության հարցում կա որոշակի թերահավատություն, երկկողմ հարաբերությունների վերածննդի և զարգացման տեսակետից մեզ համար կարևոր է ոչ միայն տնտեսական, այլև քաղաքատնտեսական մշակութային ժառանգությունը: Չէ՞ որ, ժամանակի փոփոխությունը, ըստ էության, չի փոխել երկրների աշխարհագրական դիրքը և չի կարող փոխել այն նպատակներն ու խնդիրները, որոնք նոր գույներ են ստանում տնտեսական և քաղաքական համընդհանրացման պայմաններում: Ի վերջո, շահերի հաշվառման և դրանց ներդաշնակման վրա չի կարող չազդել մի այնպիսի կարևոր միտում, ինչպիսին տարածաշրջանայնացումն է: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ դարավոր չինական պետականության ավանդույթներին միշտ էլ բնորոշ է եղել արժեքների և գերակայությունների ժառանգականությունը:

Մյուս կողմից՝ Չինաստանում տեղի ունեցող փոփոխությունները, որոնք ընդունված է անվանել «աստիճանականության» մոդել, հիմնվում են դրանց կանխատեսման, պլանավորման և համաշխարհային տնտեսության անընդհատ փոփոխվող պայմաններին համապատասխանեցման ներդաշնակ զուգակցման վրա:

Եվ եթե դեռ կան կասկածելի հիմնավորումներ, թե Հայաստանը դեռ պետք է լուծի բազմաթիվ ներքին և արտաքին տնտեսական ու քաղաքական խնդիրներ, այդ թվում՝ իր հարևանների հետ բարդ հարաբերությունները, ապա մենք պետք է հիշեցնենք Աստվածաշնչի այն խոսքը, որ «շատերը, որ առաջինն են, պիտի լինեն վերջին, իսկ վերջինները՝ առաջին», կամ արևելյան հին ասացվածքը, որ երբ ուղտերի քարավանը հակառակ կողմն է շրջվում, վերջինները դառնում են առաջիններ: Սա պետք է հասկանալ ոչ այնքան առաջավարների փոփոխության, որքան պատմության քարավանապետերի և տարածաշրջանային դերակատարների տեսակետների փոփոխության իմաստով: Եվ, վերջապես, ժամանակակից համաշխարհային տնտեսական կապերի դինամիկ զարգացման ժամանակաշրջանում իրադարձությունների նոր շրջադարձի հետևանքով քչերը կպահպանեն իրենց կասկածները:

Այսօր, Հայաստանի արտաքին քաղաքականության այսպիսի կարևոր հաջողությունների հետ մեկտեղ, ինչպիսին է ԵՄ-ի հետ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության մասին» համաձայնագրի ստորագրումը և, միևնույն ժամանակ, ԱՊՀ ազատ առևտրի գոտու միջոցով Եվրասիական միությանը միանալը[34*], պետք է գերակա համարել նաև Չինաստանի գլխավորությամբ տնտեսական ինտեգրման Հարավարևելյան վեկտորը:

Հայաստանի անկախության հռչակումից հետո նրա ու Չինաստանի միջև հարաբերությունները միշտ էլ աչքի են ընկել առանձնահատուկ ջերմությամբ, խորությամբ և անտիկ քաղաքակրթությունների ավանդույթների վրա հիմնված փոխադարձ հետաքրքրությամբ, որոնք, սակայն, չեն ստացել քաղաքական հարաբերությունների զարգացմանը համապատասխանություն: Դա կարելի է բացատրել իրական մրցակցային առավելությունների և արտաքին շուկաներում դրանց արդյունավետ իրացման ուղիների հետազոտվածության և իրազեկվածության ցածր մակարդակով: Այսօր, երբ Չինաստանը դարձել է համաշխարհային տնտեսության ուժի կենտրոն, մեր նպատակն է փոխշահավետ տնտեսական կապեր հաստատելու համար ավելի խորն ուսումնասիրել և հասկանալ յուրաքանչյուր երկրի ոչ միայն հարաբերական ու բացարձակ

[34*] Ազատ առևտրի գոտու ստեղծման մասին համաձայնագիրը ստորագրվել է 2011թ. հոկտեմբերի 18-ին Սանկտ-Պետերբուրգում և վավերացվել է 2012թ. նոյեմբերին Հայաստանի Ազգային ժողովի կողմից:

առավելությունները, այլև առևտրատնտեսական համագործակցության չօգտագործված հնարավորությունները:

Վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ երկու պետությունների միջև առևտրատնտեսական հարաբերությունները նույնիսկ առանց մրցակցային առավելությունների խորը վերլուծության էլ ապրում են դինամիկ զարգացում: Եթե 1997 թվականին նրանց միջև ապրանքաշրջանառությունը կազմել է շուրջ 370000 դոլար[35], ապա միայն վերջին երկու տարիների ընթացքում այդ ծավալներն աճել են, իսկ 2010թ. Չինաստանը դարձել է ՀՀ խոշորագույն առևտրային գործընկերը: 2017 թվականին Հայաստանի և Չինաստանի միջև ներմուծման և արտահանման ծավալը ընդհանուր առմամբ կազմել է, համապատասխանաբար, 480.7 մլն դոլար և 123,8 մլն դոլար[36]: Այս առումով պետք է նշել, որ հարևան երկրները Չինաստանի հետ համագործակցության տեսակետից գերազանցում են Հայաստանին[37*]: Հետ ընկնելու պատճառներից նշենք Հայաստանի աշխարհաքաղաքական պայմանների անբարենպաստությունը, շուկայի ու բնական ռեսուրսների սահմանափակությունը և տնտեսության ավելի փոքր ծավալները (2017թ. Հայաստանի ՀՆԱ-ն կազմել է 11,6 մլրդ դոլար[38], իսկ Ադրբեջանինը՝ 39.21[39]):

Մեր հետազոտությունները հաստատում են այն կարծիքը, որ Հայաստանն ունի բոլոր հնարավորությունները դառնալու Չինաստանի աշխարհաքաղաքական և, հատկապես, աշխարհատնտեսական շահերի ռազմավարական կետերից մեկը: Այլ կերպ ասած՝ Հայաստանի նկատմամբ, որը դարձել է Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Եվրոպայի աշխարհաքաղաքական շահերի զուգամիտման նոր «կիզակետ», սկսել է որոշակի հետաքրքրություն ցուցաբերել այնպիսի հզոր համաշխարհային աշխարհաբևեռ, ինչպիսին ՉԺՀ-ն է:

---

35 Տես «Китайско-армянские отношения», 25.11.2010 (http://am.chineseembassy. org/rus/zygx/t392051.htm):

36 Տես «Չինաստանի առևտրատնտեսական հարաբերություններն Արևելյան գործընկերության երկրների հետ»: «168 hours», 26.05.2018 (https://168.am/2018/05/26/ 957572.html):

37* 2017թ. Ադրբեջանի և Չինաստանի փոխադարձ առևտուրը ավելացել է 20%-ով և կազմել է 1,3 միլիարդ դոլար (տես «Оглашена сумма внешнеторгового оборота Азербайджана с Китаем». «Sputnik», 14.07.2018 (https://ru.sputnik.az/economy/20180714/ 416212303/azerbajdzhan-kitaj-vstrecha-minjekonomiki.html)): 2017թ. Չինաստանի հետ Վրաստանի արտաքին առևտուրը կազմել է ավելի քան 939,5 միլիոն դոլար: 2017թ. երկու երկրների միջև առևտուրը 2016թ. համեմատ աճել է 31,3%-ով (տես «Внешняя торговля: популярность грузинской продукции в мире растет». «Sputnik», 23.01.2018 (https://sputnik-georgia.ru/economy/20180123/239005839/Vneshnjaja-torgovlja-populjarnost-gruzinskoj-produkcii-vmire-rastet.html)):

38 Տես «Հայաստանի ՀՆԱ-ն աճել է 7,5 տոկոսով. ԱՎԾ»: «News.am», 28.02.2018 (https://news.am/arm/news/438797.html):

39 Տես «Итоги 2017 года: Азербайджан – лидер Южного Кавказа». «Вестник Кавказа», 05.01.2018 (http://vestikavkaza.ru/news/Itogi-2017-goda-Azerbaydzhan-lider-YUzhnogo-Kavkaza.html):

Դատելով վերջին միտումներից՝ չինացի գործարարները շահագրգռված են Հայաստանում ներդրումներ կատարելու գործում: Այդ են վկայում, մասնավորապես, *“Huahe International”* ընկերության պլանները, ինչպես նաև Հայաստանում անցկացվող հայ-չինական բիզնես-համաժողովները, որոնցում քննարկվում են Հայաստանի տնտեսության մեջ ներդրումներ կատարելու հնարավորությունները: Չինացի գործարարներին առանձնակի գրավում է այն, որ Հայաստանն ունի լավ հարաբերություններ Իրանի հետ, ինչպես նաև ազատ մուտք դեպի ԱՊՀ շուկաներ: Նրանց Հայաստանում հետաքրքրում են նաև գյուղատնտեսությունը, ագրոարդյունաբերական հատվածը, լեռնարդյունաբերությունը, վերամշակվող արդյունաբերությունը և շինարարությունը: Մեր կարծիքով՝ Հայաստանն ունի ոչ միայն ֆինանսական ներդրումների, այլև այսօր Չինաստանում իրացվող ժամանակակից կառավարման համակարգերի և բարձր տեխնոլոգիաների յուրացման կարիք: Չինաստանն այն երկիրն է, որը կարող է լինել հավանական ներդրող և ի վիճակի է մոտ ժամանակներում էապես ազդել Հայաստանի տնտեսական զարգացման վրա:

Այսօր արդեն մի շարք չինական ընկերություններ հաջողությամբ գործում են հայկական շուկայում: «Ընկերությունների միջազգային խումբ» չինական վենչուրային ընկերությունը, որն աշխարհի տարբեր երկրներում իրականացնում է ներդրումային ծրագրեր, շահագրգռված է նաև Հայաստանում ներդրումներ կատարելու գործում, հատկապես՝ բարձր տեխնոլոգիաների և հանքային արդյունաբերության ոլորտներում, որոնք հետաքրքրում են չինական ընկերությանը և Հայաստանի տնտեսության դինամիկորեն զարգացող ոլորտներ են[40]: Ինչ վերաբերում է հանքային արդյունաբերության ոլորտում չինական ներդրումներին, ապա սույն թվականի ապրիլի 20-ին հայտնի է դարձել, որ Հայաստանում Yida GROUP միջազգային ներդրումային հոլդինգի պաշտոնական ներկայացուցիչ New Yida-ն 5 մլն դոլար կհատկացնի Հայաստանում հանքային ջրերի արտադրությանը[41]:

Այսօր հարց է ծագում, թե ինչով Հայաստանը կարող է հետաքրքրել Չինաստանին: Կարծում ենք, որ այս հարցն ունի մի քանի հավանական պատասխան: Նախ. Հայաստանը հետաքրքրություն է ներկայացնում շնորհիվ իր աշխարհաքաղաքական դիրքի՝ դեռ Մետաքսի մեծ ճանապարհի ժամանակներից գտնվելով նյութական, էներգետիկ և մշակութային հոսքերի խաչման հավանական կետերից մեկում: Ուստի,

[40] Տես «Սերժ Սարգսյանն ընդունել է բարոնուհի Քերոլայն Քոքսին»: «Armenpress», 17.12.2011 (https://armenpress.am/arm/news/672556.html):

[41] Տես Ալինա Հովհաննիսյան, Չինական New Yida ներդրումային ընկերությունը 5 մլն դոլար կհատկացնի Հայաստանում հանքային ջրերի արտադրությանը»: «Arminfo», 20.04.2018 (http://finport.am/full_news.php?id=34386&lang=1):

Հայաստանը, գտնվելով Հյուսիս-Հարավ, Արևելք-Արևմուտք ռազմավարական վեկտորների խաչմերուկում, կարող է Չինաստանի հետ համագործակցել ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական ոլորտներում: Չի կարելի անտեսել նաև Հայաստանի ռազմաարդյունաբերական համալիրում ապագա ռազմավարական գործընկերության ու կոոպերացիայի հնարավորությունը: Հայաստանը, լինելով տարածքով փոքր պետություն, ակտիվորեն մասնակցում է բազմաթիվ միջազգային կազմակերպությունների աշխատանքներին, ինչը նույնպես ոչ պակաս կարևոր գործոն է փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լուծման ժամանակ միասնական մոտեցումների մշակման համար: Հատկապես պետք է առանձնացնել տնտեսական համագործակցությունը, քանի որ այստեղ Չինաստանի շահերը չեն սահմանափակվում միայն Հայաստանի սպառողական շուկայով, այլ կա ռեալ հնարավորություն Հայաստանի միջոցով մուտք գործելու հետխորհրդային պետությունների շուկաներ՝ իր կապիտալի և արտադրական տեխնոլոգիաների ներդրմամբ, արտադրական բազաների և տնտեսական հենադաշտերի ստեղծմամբ ու արդյունավետ օգտագործմամբ:

Ներկայիս Չինաստանը ֆինանսական, շուկայական և տեխնոլոգիական ռեսուրսների հզոր և կարևոր աղբյուր է: Հայաստանի, ինչպես նաև անցումային տնտեսությամբ բազմաթիվ այլ պետությունների համար դա մի նոր փորձ է ու Չինաստանի քաղաքակրթությունից բխող մարտահրավեր, մի քաղաքակրթություն, որը յուրացրել է կառավարման և տնտեսական զավթողագործության նոր տեխնոլոգիաները, պահպանել է իր կենսունակությունը, այն դեպքում, երբ մյուս բոլոր համաշխարհային կայսրությունները կործանվել են, և այժմ նպատակադրվել է փուլ առ փուլ նվաճելու նոր աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական կողնորոշիչները: Հայաստանի հետ համագործակցության հաջորդ գրավիչ գործոնը Հայկական սփյուռքի հզոր տնտեսական ու մասնագիտական ներուժն է, և ըստ այդմ, նաև համատեղ արտադրության ապրանքների ու համատեղ նախագծերի իրացման համար համատեղ ջանքերով նոր շուկաներ գրավելու հնարավորություն է (այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, նանոտեխնոլոգիաների, բժշկական տեխնիկայի, դեղագործական արդյունաբերության, ոչ ավանդական բժշկության, ոսկերչական իրերի արտադրության, այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործման և այլ ոլորտներում): Ըստ փորձագետների՝ չինական ընկերություններին գրավելու կարևոր միջոց կարող է լինել գործարքները յուանով կատարելու պայմանավորվածությունը, քանի որ այն արդեն դարձել է համաշխարհային պահուստային արժույթներից մեկը: Չինական

ներդրումների ներհոսքը նաև կախված է Հայաստանում ներդրումային և ընդհանուր գործարարական միջավայրի էական բարելավումից:

Չինաստանի՝ «Համաշխարհային արհեստանոցի» վերածումը գործընկերներին խոստանում է արտահանվող ապրանքների ու ծառայությունների լայն տեսականու սպառման անընդհատ աճում և շատ մեծ պայմանագրերի կնքման հնարավորություն: Հայաստանը, չնայած ասիական հսկայի հետ համեմատաբար կարճատև համագործակցության, կարող է հպարտանալ բավական լավ ձեռքբերումներով: Գործող նախագծերից արժե նշել «Շանսի-Նաիրիտ» հայ-չինական համատեղ ձեռնարկությունը, Հայաստանում երկաթի երեք հանքավայրերի մշակումը, Չինաստանի մասնակցությունը «Հյուսիս–հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի կառուցմանը, տեխնիկատնտեսական համագործակցության համաձայնագրի շրջանակներում Հայաստանին ՉԺՀ կառավարության անհատույց օգնության տրամադրումը և այլն:

Վերջին տարիներին նկատվում է Չինաստանի և Հայաստանի միջև ապրանքաշրջանառության կայուն աճում: Ներկայումս Հայաստանը Չինաստան է արտահանում պղնձի խտածո (կոնցենտրատ), հանքաքարեր, մարմար, տուֆ և այլ քարեր, խողովակներ, կոնյակ և այլ ալկոհոլային խմիչքներ: Չինաստանից ներմուծվում են էլեկտրոնային սարքեր, համակարգչային տեխնիկա, տնտեսական ապրանքներ, շինանյութ, մետաղե կառուցատարրեր, ավտոմեքենաներ, ավտոբուսներ, պոլիմերներ, հագուստեղեն, ոսկերչական իրեր և շատ այլ ապրանքներ: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ 2017թ. մեր երկրից Չինաստան արտահանման ծավալը կազմել են 123,7 մլն դոլար, չինական ապրանքների ներմուծման ծավալը հասել է 331,2 մլն դոլարի: Հայկական կողմի ներդրումը Երևանի «Նաիրիտ» գործարանում երեք գործարկված արտադրական գծերից մեկն է, ինչպես նաև քլորոպրենային կաուչուկի արտադրության տեխնոլոգիան: Հայկական կողմը հավաստիացնում է, որ թողարկված արտադրանքի սպառման հետ կապված պրոբլեմ չի լինի, քանի որ միայն չինական շուկան բավարար է այն լիովին իրացնելու համար: Ավելին. Չինաստանի ներքին շուկայի պահանջմունքները բավարարելու համար, հնարավոր է, պահանջվեն նոր հզորություններ, և չի բացառվում, որ այս ոլորտում հայ-չինական համագործակցությունը հետագայում ավելի կընդլայնվի:

«Հյուսիս–հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքը (ՄՏՄ), որը կոչված է Բալթյան երկրների և Հնդկաստանի միջև տրանսպորտային կապն Իրանի տարածքով ապահովելու համար, ևս մեկ նախագիծ է, որին կարող է մասնակցել Չինաստանը: Այլ երթուղիների համեմատությամբ

«Հյուսիս–հարավ» ՄՏՄ հիմնական առավելություններն են հեռավորությունների մի քանի անգամ կրճատումը և բեռնամփոփների փոխադրման արժողության նվազումը: Չէ՞ որ ծովով տեղափոխումը, օրինակ՝ Սուեզի ջրանցքով, շատ ավելի թանկ է: Ճիշտ է, կան որոշ թերություններ, որոնցից հիմնականներն են, ըստ փորձագետների, Ռուսաստանի և Իրանի միջև ուղղակի երկաթուղային կապ չլինելու հանգամանքն է և ռուսաստանյան նավահանգիստների մաքսատների դանդաղ աշխատանքը: Եվ այստեղ Ռուսաստանին օգնության է գալիս Հարավային Կովկասում նրա հիմնական դաշնակից Հայաստանը: Ռուսաստանին ձեռնտու է, որ այս նախագծի կարևորագույն հատվածներից մեկը վերահսկի բարեկամ պետությունը: Ռուսաստանն այլ ելք չունի էլ, եթե հաշվի առնենք, որ չունի Իրանի հետ ընդհանուր սահման: Նախագծի արժեքը գնահատվում է 2 մլրդ դոլար: Ակնկալվում է, որ նոր երկաթգծի ընդհանուր երկարությունը կլինի 540 կմ, որից մոտ 480 կմ-ն անցնելու է Հայաստանի տարածքով, իսկ մնացած 60 կմ-ն՝ Իրանի: Ամենայն հավանականությամբ, ճանապարհը կանցնի հետևյալ երթուղով. Գագարին–Գավառ–Մարտունի–Ջերմուկ–Վայք–Սիսիան–Կապան–Մեղրի:

Իրանի տարածքով տարանցումը պետք է ապահովվի կառուցվող Աստարա–Ղազվին–Ռաշտ գծով: Այս պարագայում Չինաստանը կարող է դիտվել որպես շահավետ գործընկեր: Երկու պետություններն էլ բազմիցս շեշտել են իրենց շահագրգռվածությունը Իրան–Հայաստան երկաթուղու և Հյուսիս–հարավ ավտոմայրուղու շինարարության հարցում: Բացի այդ, չինական ընկերությունները հետաքրքրված են շինարարական կապալներ ստանալու գործում:

Ավելին. չինացիները մասամբ աջակցում են Ասիական զարգացման բանկում Հայաստանի շահերի առաջմղմանը, և նա արդեն իր պատրաստակամությունն է հայտնել մայրուղու շինարարությանը մասնակցելու համար:

Եվ վերջինը: Կարծիք կա, թե ծրագրի իրականացման համար 2 միլիարդ դոլարը կարող է և չբավարարել: Բայց այս գործում գլխավորը, ինչպես նշում են վերլուծաբանները, բյուջեի նպատակային և ռացիոնալ օգտագործումն է: Իսկ չինացիներն ամբողջ աշխարհում հայտնի են այն բանով, որ ամեն ինչ անում են որակով և էժան: Չինաստանի աշխատուժը վաղուց արդեն գրավել է համաշխարհային շուկան: 2011թ. ապրիլին Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարություններն ստորագրել են տեխնիկատնտեսական համագործակցության համաձայնագիր, որով նախատեսվում է, որ Չինաստանի կառավարությունը Հայաստանին կտրամադրի 20 մլն չինական

յուանի չափով անհատույց օգնություն: Այս գումարի մի մասն արդեն ուղղվել է տեխնիկատնտեսական համագործակցության ծրագրի իրացմանը: Այսպես, պայմանավորվածության համաձայն՝ ՉԺՀ կառավարությունը Հայաստանին արդեն նվիրաբերել է շտապօգնության 88 մեքենա և ավելի քան 200 ավտոբուս: Վերջին տարիներին Երևանում փոխադրամիջոցների թվաքանակի զգալի աճման հետևանքով և բնակչության տրանսպորտային ծառայությունների մակարդակի բարձրացման նպատակով քաղաքապետարանը որոշում է ընդունել մեծացնելու քաղաքային ավտոբուսների հավաքակազմը: Երևանի հասարակական տրանսպորտը համալրվել է 249 չինական ավտոբուսներով, որոնք Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարությունը, Հայաստանի մայրաքաղաքին է տրամադրել միջպետական համաձայնագրի շրջանակներում:

Անկասկած, առևտրային հարաբերությունների զարգացման գործում կարևոր դեր է խաղում Հայաստանում չինարենի և Չինաստանում հայերենի նկատմամբ աճող հետաքրքրությունը: Ներկայումս չինարենն ուսուցանվում է ոչ միայն Երևանի հումանիտար ինստիտուտում, այլև 2009 թվականին Վ. Բրյուսովի անվան Երևանի լեզվաբանական համալսարանին կից բացված Կոնֆուցիոսի ինստիտուտում: Մտադրություն կա Կոնֆուցիոսի ինստիտուտի մասնաճյուղ բացել նաև Երևանի պետական համալսարանում, ինչպես նաև չինարենի խորացված ուսուցմամբ ավագ դպրոց, ինչը կարող է դառնալ տարածաշրջանում այս ոլորտին վերաբերող ամենախոշոր և լուրջ նախագիծը: Միջպետական համաձայնագրով՝ այս տարի Հայաստանից 40 ուսանող ուսման են մեկնել Չինաստան, ընդ որում, Չինաստանի կառավարությունն ստանձնել է Չինաստանի համալսարաններում հայ ուսանողների ուսուցման և մնալու հետ կապված ծախսերը: Իր հերթին, ուսումնական տարվա սկզբին Չինաստանից Հայաստան են ժամանել 15 ուսանող՝ Հայաստանի բուհերում սովորելու համար: Հայաստանի Հանրապետության կառավարությունը նաև առաջարկել է Հայաստանի և Չինաստանի կառավարությունների միջև ստորագրել մի համաձայնագիր՝ բարձրագույն կրթության վկայականները և գիտական աստիճաններն ու կոչումները փոխադարձաբար ճանաչելու մասին:

Այսպիսով՝ Չինաստանի և Հայաստանի միջև առևտրատնտեսական ու քաղաքական հարաբերությունների զարգացումն այլընտրանք չի թողնում: Երկու պետությունների մրցակցային առավելությունները կարելի է հաջողությամբ իրացնել հնարավորությունների, ինչպես նաև համագործակցության ժամանակակից ձևերի ու մեթոդների խոր և համակողմանի վերլուծության շնորհիվ՝ համաշխարհային տնտեսությանն ուղղված հիմնական մարտահրավերների հաշվառմամբ: Ընդսմին,

գործարարները շահագրգռված են, որպեսզի երկկողմ հարաբերությունը զարգանա հետևյալ հիմնական ուղղություններով՝ մշակաբույսերի արագ աճեցման համակարգերի, պարարտանյութերի ու սերմերի, բանջարեղենի և մրգերի շրջամյա աճեցման համար ջերմոցային համալիրների մշակում և ներդրում, Չինաստանի ժամանակակից տեխնոլոգիաների փորձի հաշվառմամբ կաթիլային ոռոգման համակարգերի միջոցով ջրի բաշխման սարքավորանքի տրամադրում ֆերմերներին, երկաթուղիների, ենթակառուցվածքների և գյուղպարենային հատվածի կառուցում, ոռոգման համակարգերի վերականգնում և զարգացում՝ պոմպերի աշխատանքի համար արևային մարտկոցների օգտագործման ժամանակակից չինական փորձի կիրառմամբ, ինչպես նաև խոշոր մեծածախ շուկայի շինարարություն:

Չինաստանի ներդրումների հատկապես մեծ պահանջ կա խաղողագործության ու բանջարաբուծության ճյուղերի վերականգնման, «տնկադաշտի վերջնական արտադրանք» փակ փուլաշրջանների ստեղծման համար, ինչը նպատակաուղղված է ինչպես եվրոպական, այնպես էլ չինական շուկա մտնելուն: ՉԺՀ շուկան իր չափերի և գինու սպառման ծավալների տարեկան աճման շնորհիվ մեծ հետաքրքրություն է ներկայացնում կոնյակ ու գինի արտադրող հայկական ընկերությունների համար:

ՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

Էդուարդ Սանդոյան
Հայ-Ռուսական համալսարանի
տնտեսագիտության և բիզնեսի ինստիտուտի տնօրեն,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Անկախ Հայաստանի հարկային համակարգի ձևավորման առաջին օրվանից, 1991 թվականից մինչ այժմ ես փորձում եմ առաջ տանել բնակչության եկամուտների և գույքի համընդհանուր հայտարարագրման ինստիտուտի ներդրման գաղափարը (հանրային անձանց համար՝ նաև ծախսերի գծով), ինչի հիման վրա էլ պետք է կառուցվեն ուղղակի հարկման բոլոր մեխանիզմները: Տեղերում ուսումնասիրվել է բազմաթիվ զարգացած երկրների փորձը, բայց սկզբում համակարգի ներդրումն անհնար էր անհրաժեշտ տեխնիկական ռեսուրսների բացակայության և տվյալների բազաների թվայնացման ցածր մակարդակի, իսկ հետագայում՝ քաղաքական կամքի բացակայության և շահերի բախման պատճառով: Մեզ անհրաժեշտ է օր առաջ իրականացնել եկամուտների և գույքի համընդհանուր հայտարարագրման համակարգի առկայությամբ և շահութահարկի վերացմամբ պայմանավորված եկամտահարկի ժամանակակից ինստիտուտի ներդրումը:

Մեր գիտական դպրոցի երկարամյա հետազոտություններն ու Էստոնիայի 17-ամյա հաջողված փորձը վկայում են շահութահարկի վերացման անառարկելի արդյունավետության մասին: Ի դեպ, 2017 թվականի սկզբից նմանատիպ մոտեցում սկսեցին կիրառել նաև Վրաստանում, իսկ այժմ այդ գաղափարի իրագործման ուղղությամբ ինտենսիվ աշխատում են արդեն Լատվիայում: Հարկ է նշել, որ մեր կողմից առաջարկվող մոտեցմամբ շահութահարկը, իբրև այդպիսին, բացակայում է, այն պարզապես վերացվում է, իսկ շահաբաժինների հարկումն իրականացվում է եկամտահարկի հարթ միասնական դրույքաչափով, ի տարբերություն նշված երկրների մոդելների, որոնցում խոսքը գնում է չբաշխվող շահույթի 0% հարկման մասին, այսինքն, չի հարկվում այն շահույթը, որը մնում է իրավաբանական անձի տրամադրության տակ, իսկ բաժնետերերի (սեփականատերերի) միջև շահույթի բաշխման և շահաբաժինների վճարման դեպքում այն կիրառվում է:

Ինչ կտա առաջարկվող համակարգի ներդրումը: Առաջին հերթին, դա էապես կնվազեցնի կոռուպցիոն ռիսկերը հենց հարկային ծառայությունում, քանի որ ստուգողների և հարկատուների միջև հիմնական կոռուպցիոն

հարաբերությունները, որպես կանոն, առաջանում են փաստացի ստացված եկամուտների արժանահավատության, ծախսերի հիմնավորվածության, ակտիվների և պարտավորությունների փոփոխության, ֆինանսական և հարկային հաշվետվությունների ճշտության և այլ ստուգումների ընթացքում, երբ, մասնավորապես, ճշգրտվում է հարկման ենթակա շահույթի մեծությունը: Կփոխվի նաև հարկային տեսուչների մոտիվացիան, «պայմանավորվածությունների» հիմքերի բացակայության պատճառով, կվերանա հարկային պաշտոնյաներին խղճի և ազնվության կոչեր անելու անհրաժեշտությունը, հիմնականում կվերանա նրանց կոռուպցիոն հենարանը: Արդյունքում, կստեղծվի անհրաժեշտ մեխանիզմ, որը կարող է անմիջապես զգալիորեն նվազեցնել կոռուպցիոն բաղադրիչը հարկային ոլորտում: Ի վերջո, մյուս բոլոր հարկատեսակները (եկամտահարկ, ԱԱՀ, գույքահարկ և այլն) անհամեմատ առավել վերահսկելի են և դրանց մշտադիտարկումը մեծ ջանքեր չի պահանջում:

Արդյունքում, Հայաստանի Պետական եկամուտների կոմիտեի տեսչական անձնակազմի զգալի մասը կարող է կրճատվել կամ ուղղվել այլ, օրինակ, կանխարգելիչ գործառույթների իրականացմանը:

Շահութահարկի բացակայության պայմաններում արմատապես փոխվում է նաև հարկատուների «վարքագիծը», որոնք հակված կլինեն բիզնեսի վարման թափանցիկությանը, քանի որ հարկվող շահույթի մեծության նվազեցնելու նպատակով իրական եկամուտները թաքցնելն ու ծախսերն ուռճացնելը դառնում են անիմաստ, ինչի արդյունքում կդադարեն նաև խորամանկել և հնարամտել իրենց հաշվապահական հաշվետվություններում: Ավելին, աննախադեպ կկրճատվեն հարկատուների հաշվապահական հաշվառման և հարկային հաշվետվությունների իրականացման ծախսերը:

Հարկ է նշել նաև, որ շահութահարկը զերծ է տնտեսական բովանդակությունից և էապես խանգարում է տնտեսությանը: Տնտեսագիտության գծով Նոբելյան մրցանակի դափնեկիր Փ. Սամուելսոնը նշում է, որ ուղղակի հարկումը պետք է կիրառվի բացառապես սպառմանն ուղղվող միջոցների նկատմամբ, այլ ոչ թե կապիտալիզացիայի, այսինքն, ուղղակի կարող է լինել միայն ֆիզիկական անձանց, այլ ոչ թե իրավաբանական անձանց եկամուտների հարկումը, որոնք չեն սպառում, քանի որ սպառել կարող է միայն մարդը: Բացի այդ, շահութահարկի կիրառումը, ըստ էության, կրկնակի հարկում է, քանի որ իրավաբանական անձինք մինչև շահույթի ձևավորումն արդեն վճարում են ֆիզիկական անձանց (անձնակազմի) եկամտահարկը, անուղղակի հարկեր, գույքահարկ, ռոյալթիներ և այլն[42]:

[42] Economics/Paul A. Samuelson, William D. Nordhaus. 19th Edition, Boston: McGraw–Hill/Irwin, 2010, 715 p.

Շահութահարկը վերացնելով մենք խթանում ենք տնտեսության կապիտալիզացումն ու ներքին ներդրումները: Դրանով լուծվում են նաև այլ հարակից խնդիրներ՝ փոխվում է իրավաբանական անձանց վարքագիծը, խթանվում է կորպորատիվ մշակույթը, կորպորատիվ պատասխանատվությունը, զարգանում է ֆինանսական կառավարումը, ֆոնդային շուկան: Այս բոլոր ներքին գործընթացները դառնում են առավել նշանակալից: Միևնույն ժամանակ, ինչպես արդեն նշեցի, ներդրվում է եկամուտների և գույքի, իսկ հանրային անձանց համար՝ նաև ծախսերի համընդհանուր հայտարարագրման համակարգ: Եվ մեկ տարի անց մենք ստանում ենք երկրի բյուջեի եկամուտների զգալի աճ:

Ընդ որում խոսքը գնում է ամբողջ բնակչության հարկային հաշվետվության ընդհանուր համակարգի մասին, որը բաղկացած է երկու փոխկապակցված հիմնական տարրերից՝ ա/ եկամուտների և գույքի հայտարարագրում՝ որպես հարկային հաշվետվության գործիք, բ/ եկամտահարկ՝ որպես ֆիզիկական անձանց ուղղակի հարկման հիմնական գործիք: Այս ինստիտուտը հիմնովին տարբերվում է հանրային անձանց եկամուտների և գույքի հայտարարագրման ու ձեռք բերված գույքի օրինականության հետագա վիճարկման ներկայիս համակարգից:

Ինչի՞ց և ինչպես սկսել համակարգի ներդրումը: Կա երկու մոտեցում՝ համընդհանուր համաներում, բացառությամբ ակնհայտ արտառոց դեպքերի, և, սկսում ենք մաքուր էջից, կամ, ինչը ներկայիս իրավիճակում ավելի ճիշտ մոտեցում կարող էր լինել, սահմանվում է ֆիզիկական անձանց նախկինում ունեցած օրինական եկամուտների և առկա ունեցվածքի միջև հարաբերակցության որոշակի սահմանաչափ, որի գերազանցման դեպքում կիրառվում են համապատասխան պատժամիջոցներ:

Այսպես, եթե քաղաքացին չի կարողանում հիմնավորել իր եկամուտների օրինականությունը կամ ակտիվների ձեռքբերման աղբյուրները, այդ ժամանակ, առաջինը՝ առաջանում է քրեական պատասխանատվություն, և երկրորդ՝ առգրավվում է անօրինական ճանապարհով ձեռք բերված սեփականությունը: Իսկ օրինական եկամուտների, կամ ակտիվների ձեռքբերման աղբյուրների հայտնաբերման դեպքում, որոնք նշված չեն հայտարարագրում, պետք է կիրառվեն հարկային պատժամիջոցներ, առանց առգրավման և քրեական պատժամիջոցների կիրառման: Համակարգի ներդրման առաջին տարվա համար կարելի է սահմանել օրինական եկամուտներով չհիմնավորված ակտիվների արժեքային նվազագույն չափ (օրինակ, անձի և նրա ընտանիքի անդամների վերջին քսան տարիների օրինական եկամտի տասնապատիկը), որից առավել արդեն կարելի է ենթարկել պատասխանատվության: Իսկ երկրորդ տարուց

սկսած համակարգը պետք է կիրառվի ամբողջական: Հասարակությունը պետք է գոնե մեկ անգամ ինքնամաքրվի: Հենց այդ մեխանիզմը թույլ կտա արդյունավետորեն պայքարել կոռուպցիայի դեմ, այն ոչնչացնել սաղմնային վիճակում և ապօրինի հարստացման մասին այսօր գործող կիսատ-պռատ օրենսդրությունն այդ դեպքում կարող է դառնալ իրական գործիք, որը խթանում է վերը նշված համակարգի գործողությունը:

Այս համակարգի ներդրումը, ի թիվս այլ բաների, ենթադրում է նաև փողերի լվացման բոլոր սողանցքների վերացում՝ խաղատների, տոտալիզատորների և մոլախաղերի գործունեության արգելում երկրի տարածքում, կանխիկ շրջանառության նկատմամբ պահանջների խստացում, այդ թվում նաև բանկային և այլ գործառնությունների նկատմամբ:

Եկամտահարկի դրույքաչափերը նույնպես պետք է վերանայվեն: Այժմ անհրաժեշտ է անցնել հարկման միասնական դրույքաչափի, լողացող չհարկվող նվազագույնը սահմանելով ըստ երկրի նվազագույն սպառողական զամբյուղի, իսկ դրույքաչափը կիրառել դրան գերազանցող գումարի նկատմամբ, բայց 20%-ից ոչ ավելի: Իսկ մի քանի տարի անց, մանրակրկիտ մշակումներից հետո պետք է ներդրվի եկամտահարկի բարդ մեծանիզմ, պրոգրեսիվ սանդղակով՝ 15-20% միջակայքում, նույնպես լողացող չհարկվող նվազագույնով և դիֆերենցված դրույքաչափերով, կախված հարկ վճարողի ընտանեկան վիճակից և խնամառուների թվից: Բացի այդ, մենք պետք է շտկենք մի քանի տարի առաջ «Եկամտային հարկի մասին» նոր օրենքում կատարած սխալը, երբ պարտադիր սոցիալական վճարները վերացվեցին և միացվեցին եկամտահարկին: Տնտեսագիտական և ֆիսկալ գործընթացների կարգավորման հարցում մեխանիկական մոտեցումն անընդունելի է: Ի վերջո, ի՞նչ է սոցիալական հարկը (տարբեր երկրներում տարբեր ձևով է անվանվում՝ պարտադիր սոցիալական վճարներ, սոցիալական ապահովության պարտադիր վճարներ, պարտադիր վճարներ սոցիալական ապահովության պետական հիմնադրամին և այլն): Դա այն գումարն է, որը գործատուն հասարակությանը վճարում է աշխատուժի, մարդկային ռեսուրսների ներգրավման դիմաց: Եթե, օրինակ, բնական պաշարների օգտագործման դիմաց վճարվում են ռոյալթիներ, ապա մարդկային ռեսուրսների օգտագործման դիմաց (կոպիտ ասած՝ «մարդկային ռեսուրսների վարձակալության դիմաց»), վճարվում է սոցիալականը:

Այդ միջոցները հիմնականում ուղղվում են պետական կենսաթոշակային ապահովմանը «սերունդների համերաշխության» սկզբունքով: Իսկ մեզ մոտ գործատուին, ըստ էության, ազատել են այդ բեռից, ողջ բեռը գցելով աշխատողի ուսերին, հարկման հրեշավոր դրույքաչափերով՝ 23, 28,

36% պրոգրեսիվ սանդղակով, վերացնելով նաև չհարկվող նվազագույն շեմը: Ի դեպ, այս անհարմար և կոշտ հարկատեսակը, ընդհանրապես, «աշխատավարձային գորշ սխեմաների» գոյության և բարգավաճման, չափից դուրս ոչ-պայմանագրային, չգրանցված աշխատողների (երկրի զբաղվածության ավելի քան 50%-ը), ինչպես նաև ստվերային տնտեսության առկայության հիմնական պատճառներից մեկն է:

Բայց ամենակարևորը հետևյալն է: Երբ կներդրվի համընդհանուր հայտարարագրման վերը նշված համակարգը, եկամտահարկը կընդունի շահութահարկի փիլիսոփայությունից բխող բնույթ, մասնավորապես, օրենքը կսահմանի ֆիզիկական անձանց ծախսերի տեսակները (սահմանափակումներով, կամ ոչ), որոնք կճանաչվեն իբրև հարկվող բազայից նվազեցվող ծախսեր, ընդհուպ մինչև վճարման ենթակա եկամտահարկի լիակատար զրոյացում: Ներկայումս խիստ անհրաժեշտ է ապահովել առողջապահությանը, կրթությանը, հիփոթեքային վարկավորմանը և կուտակային կենսաթոշակային ապահովագրության համակարգին ուղղվող ֆինանսական միջոցների զգալի աճ: Հետևաբար, նշված ուղղությունների գծով ֆիզիկական անձանց ծախսերը պետք է ճանաչվեն որպես սոցիալապես առավել նշանակալից: Առայժմ կարելի է խոսել չորս առաջնահերթ սոցիալական ոլորտների մասին, որոնք ունեն զանգվածային բնույթ: Ժամանակի ընթացքում կարելի է համալրել այս ցանկը և սոցիալապես նշանակալից ճանաչել նաև այն ծախսերը (որոշակի սահմաններում), որոնք ուղղվում են երեխայի խնամքին, կոմունալ ծառայություններին, պատասխանատվության ապահովագրությանը, աշխատունակության ժամանակավոր կորստի ապահովագրությանը և այլն: Այս սոցիալապես նշանակալից ոլորտների զարգացման համար պետությունը չունի ռեսուրսներ և չի էլ ունենա տեսանելի ապագայում: Հետևաբար, բոլոր վերոհիշյալ ծախսերը, որոնք կատարում են քաղաքացիների սեփական կարիքների և նրանց ընտանիքի անդամների համար, պետք է ընդգրկվեն եկամտահարկով հարկման ենթակա բազայից նվազեցման ծախսերի ցանկում: Եթե տարեկան ողջ եկամուտդ ծախսում ես նշված ուղղությունների վրա, ապա եկամտահարկով հարկվող բազան պետք է հավասար լինի զրոյի, այսինքն, ընդհանրապես, եկամտահարկ չես վճարի: Այսպիսով, մենք վերաբաշխում ենք ազգային եկամուտն այն ոլորտներում, որոնք այսօր պետությունը ֆինանսավորում է անուղղակիորեն, պետական բյուջեից, կամ էլ չի մասնակցում այդ սոցիալապես նշանակալից ոլորտների ֆինանսավորմանը: Ավելին, գոյություն ունեցող ֆինանսավորման ձևերը, այսպես կոչված, «պետական պատվերները» անարդյունավետ են, ելնելով դրանց ոչ-շուկայական բնույթից, ինչպես նաև

կոռուպցիոն ռիսկերի և հասցեավորված չլինելու պատճառով: Առաջարկվող մոտեցման պայմաններում քաղաքացին ինքն է դառնում շուկայի անմիջական մասնակիցը, իրական միջոցները ծախսելով իրական կարիքների բավարարման համար, ինքն է ընդունում որոշումները, թե որ բուժհիմնարկում սպասարկվի, որ համալսարանում սովորի և այլն: Նա կարող է «ինքնաֆինանսավորման» ռեժիմով վերցնել հիփոթեքային վարկ, ստանալ կրթություն, ձևակերպել ապահովագրություն և այլն: Մարդիկ կսկսեն ինքնուրույն պլանավորել իրենց ընտանեկան բյուջեն, սահմանել ծախսային առաջնահերթ ուղղությունները և կայացնել որոշումներ: Նաև կարևոր է նշել, որ այդ պայմաններում զգալիորեն նվազում են կոռուպցիոն ռիսկերը, զարգանում է մրցակցությունն առողջապահության, կրթության և մյուս հաստատությունների միջև, որոնց գործունեությունը դառնում է հաճախորդակողմնորոշում ունեցող (հաճախորդակենտրոն), որի հաջողության հիմնական գրավականն է դառնում մատուցվող ծառայությունների գինն ու որակը, այլ ոչ թե իշխանությունների հետ մտերմության աստիճանը, կամ ոչ շուկայական այլ «առավելությունները»: Ներկայումս մեզ մոտ գործում են համակարգից կտրված առանձին տարրեր, օրինակ, վճարված եկամտահարկի վերադարձի ծրագրի շրջանակներում հիփոթեքային վարկերի սպասարկումը, եթե բնակարանը գնել ես նորակառույցում:

Անհրաժեշտ է նշել նաև, որ բնակչության եկամուտների և գույքի համընդհանուր պարտադիր հայտարարագրման համակարգի հենքի վրա գործող եկամտահարկի ինստիտուտը ենթադրում է, որ քաղաքացին իր բոլոր ծախսերը պետք է հիմնավորի հարկային մարմնում, որպեսզի նվազագույնի հասցնի հարկման բազան, նա ամենուր կպահանջի ՀԴՄ կտրոններ, հաշիվ-ապրանքագրեր, պայմանագրեր և ծառայությունների մատուցման հանձնման-ընդունման ակտեր, բանկային քաղվածքներ և այլ փաստաթղթեր, որոնք հաստատում են կատարված ծախսերի արժանահավատությունը: Ի վերջո, գույքի և եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգը, իսկ պաշտոնատար անձանց և մյուս հասարակական գործիչների համար՝ նաև ծախսերի գծով, մեր կյանքում կարող է ներդնել մի նոր մշակույթ, համընդհանուր հաշվառման և ֆինանսական հաշվետվության մշակույթը: Հետևաբար, երբ մարդը գալիս է աշխատանքի տեղավորվելու, և նրան ասում են, որ մտադիր են աշխատավարձի որոշակի մասը վճարել «սև կանխիկով», նա սկսում է մտածել, թե հետագայում ինչպես պետք է լրացնի հայտարարագիրն ու հիմնավորի առողջապահական, կրթության, հիփոթեքի և մյուս ծախսերը: Հետևաբար, այդ դեպքում բոլորին արդեն անհրաժեշտ է

դառնում «սպիտակ» աշխատավարձը, բնականաբար, որքան շատ՝ այնքան լավ:

Եվ ամբողջ մանրածախ համակարգը, այդ թվում նաև ծառայությունները, կսկսեն դուրս գալ ստվերից, արագ տեմպերով «սպիտակել»:

Ի դեպ, մի պահ պատկերացրեք, որ արդեն ներդրել ենք պարտադիր բժշկական ապահովագրության համակարգը, որն այլընտրանք չունի: Մեր կողմից քննարկվող մոդելի բացակայության պայմաններում այն չի հանգեցնի հաջողության, թեկուզ դրամական հոսքերի թույլ հաշվառման պատճառով: Իսկ եթե սկսի գործել եկամտահարկի նոր ինստիտուտը, համընդհանուր հայտարարագրման հետ մեկտեղ, այդ դեպքում բոլոր ծախսերի փաստաթղթային ձևակերպումների մեջ մեծապես շահագրգռված կլինեն տնտեսական հարաբերությունների բոլոր մասնակիցները, քաղաքացիներից մինչև պետություն: Հենց այս համատեքստում էլ անհրաժեշտ է ներդնել նաև դեղամիջոցները դեղատոմսերով արձակելու պարտադիր համակարգը, քանի որ այդ մեխանիզմը դառնում է բժշկական ծառայությունների սպառողի, ապահովագրական ընկերության, բուժհաստատության և մյուս կազմակերպությունների համար միջոցների շարժի հաշվառման և վերահսկողության տարրերից մեկը:

Այսպիսով, ուղղակի հարկերի արդիականացման առաջարկվող մոտեցման իրականացումը ՀՀ-ում կարող է հանգեցնել հարկային քաղաքականության արդյունավետության բարձացման աննախադեպ արդյունքների:

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԱՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ

Աշոտ Մարկոսյան
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
կառավարման և գործարարության ամբիոն
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ashotmarkos@rambler.ru

Էլյանորա Մաթևոսյան
ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ,
տնտեսագիտության թեկնածու
meleonora06@rambler.ru

Յուրաքանչյուր երկրի բնակչության բարեկեցության աճը և ազգային տնտեսության զարգացումը պայմանավորված են մի շարք հանգամանքներով և նախադրյալներով, որոնք հատկապես երկարաժամկետ հեռանկարում կանխորոշում են սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները: Որպեսզի ապահովվի հասարակության բազմակողմանի զարգացումն ու պետության հզորացումը անհրաժեշտ է ոչ միայն սպառման բավարար մակարդակի ձեռքբերում, այլև կուտակման բավարար նորմայի ապահովում, ինչն էլ ընկած է հետագա զարգացման և ընդլայնված վերարտադրության հիմքում: Եթե չի ապահովվում վերարտադրության այս բնականոն ընթացքը, ապա հասարակությունը զրկվում է հետագա զարգացման երաշխիքներից, ինչն էլ կարող է դառնալ երկրի անվտանգության խարխլման և պետության տնտեսական քաղաքականության ձախողման պատճառ: Կամ, այլ կերպ ասած, անհրաժեշտ է ունենալ հեռանկարային զարգացման տեսանկյունից որոշակի ֆինանսական, նյութա-տեխնիկական, աշխատանքային ռեսուրսներ և բնական պաշարներ, որոնք կարող են ապահովել տնտեսական հետագա առաջընթացը: Այդպիսով, երկրի ազգային հարստության ձևավորումը և դրա բազմապատկումը ստանում է ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական կարևորություն:

Տնտեսական առաջընթացի և ընդլայնված վերարտադրության վիճակն ու գործընթացը բնութագրվում են մի շարք ամփոփ մակրոտնտեսական ցուցանիշների օգնությամբ: Դրանց շարքում կարևորվում են համախառն ներքին արդյունքի (դրա հաշվարկման տարբեր մոդիֆիկացիաներով,

օրինակ՝ դրա մեծության չափը, աճի տեմպը, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն և այլն), ազգային եկամտի, համախառն ազգային եկամտի և մյուս մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկը՝ տարբեր մոդիֆիկացիաներով:

Սակայն նշված ցուցանիշների հաշվարկման հիմնական թերությունն այն է, որ դրանք, պատկերավոր ասած, բնութագրում են երկրի զարգացման տվյալ պահը՝ առանց ներկայացնելու սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորություններն ու ներուժը: Այս հիմնական բացը չեզոքացնում է ազգային հարստության ցուցանիշը: Ցավոք, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը (կոմիտեն) մինչ օրս չի հաշվարկում այդ ցուցանիշի մեծությունը:

Ներկայում ընդունված են ազգային հարստության սահմանման և հաշվարկման Համաշխարհային բանկի միասնական մեթոդական ցուցումները: Ազգային հարստությունը[43] Ազգային հաշիվների համակարգի (ԱՀՀ) անբաժանելի մասն է: ԱՀՀ-ն հիմք է հանդիսանում կառավարության, մասնավոր հատվածի, միջազգային կազմակերպությունների և այլ հետաքրքրված անձանց կողմից տնտեսական աճի հաշվարկման համար:

Ազգային եկամուտն ու բարեկեցությունը հիմնվում են երկրի ակտիվների կամ հարստության վրա, որոնց հաշվարկման հիմքում ընկած են տարբեր չափանիշներ: Ազգային հարստությունը իր մեջ ներառում է հետևյալ չորս բաղկացուցիչները. արտադրված կապիտալ, բնական կապիտալ (պաշարներ), մարդկային կապիտալ և զուտ արտաքին ակտիվներ:

Ասվածից հետևում է, որ երկրի ազգային հարստության ավելացման հիմնական աղբյուրը համախառն ներքին արդյունքի աճն է: Հայտնի է, որ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի), որպես երկրի տնտեսական հզորության գնահատման հիմնական մակրոտնտեսական ցուցանիշի, մեծությունը ծախսային մեթոդով հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ՀՆԱ = սպառում + ներդրումներ + պետական գնումներ +
+ զուտ արտահանում:

Ինչպես ցույց է տալիս ՀՆԱ-ի կառուցվածքը ձևավորող հիմնական բաղկացուցիչների շարժը *(գծապատկեր 1)* 2012-2017թթ. ժամանակահատվածում սպառման բաժինը առանձին տարիներին (2012թ., 2013թ., 2014թ.-ին) գերազանցել է ՀՆԱ-ի մեծությունը, իսկ 2015թ., 2016թ., 2017թ.-ին այն կազմել է ՀՆԱ-ի ավելի քան 90 տոկոսը: Նման ցուցանիշների պարագայում ակներև է, որ ՀՀ տնտեսությունը ավելի շատ «սպառող», քան «կուտակող» է: Այդ մասին է վկայում նաև նշված ժամանակահատվածում

[43] The Changing Wealth of Nations 2018. Building a Sustainable Future. World Bank Group https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/29001/9781464810466.pdf.

կուտակման նորմայի (ներդրումներ / ՀՆԱ, %-ով) ցուցանիշը, որը բերված ժամանակահատվածում (2017թ.-ը 2012թ.-ի համեմատությամբ) նվազել է 6.4 տոկոսային կետով: Թեև զուտ արտահանում / ՀՆԱ հարաբերակցությունը 2012-2016թթ.-ին նվազել է 15.2 տոկոսային կետով, սակայն 2017թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ այն ավելացել է 2.7 տոկոսային կետով:

Կայուն երկարաժամկետ տնտեսական աճը պահանջում է ներդրումների և պորտֆելային ակտիվների առավել ինտենսիվ ընդգրկում: Թեև ՀՆԱ-ն տնտեսական աճի հաշվարկման կարևոր չափանիշ է, սակայն այն հաշվում է միայն եկամուտը և արտադրությունը, և չի արտացոլում ակտիվների հիմնական բազայում տեղի ունեցող փոփոխությունները: Առանձին դիտարկվող ՀՆԱ-ն կարող է ճշգրտորեն չբնութագրել տնտեսական իրավիճակը: Այն չի արտացոլում բնական կապիտալի սպառումը և ակտիվների մաշվածությունը, չի տալիս հետևյալ հարցերի պատասխանը՝ ներդրումներն ու հարստության կուտակումը աճում են բնակչության թվի աճի արդյունքում կամ էլ ակտիվների համամասնությունը համապատասխանու՞մ է արդյոք երկրի զարգացման նպատակներին:

***Գծապատկեր 1.* ՀՀ-ում սպառման, ներդրումների և զուտ արտահանման հարաբերությունը ՀՆԱ-ին 2012-2017թթ.**



	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.
Սպառում / ՀՆԱ, %	101.2	102.4	101.5	91.2	90.8	91.5
Ներդրումներ / ՀՆԱ, %	25.4	21.9	20.8	20.7	18.0	19.0
Զուտ արտահանում / ՀՆԱ, %	-24.8	-21.0	-19.9	-12.1	-9.6	-12.3

Աղբյուրը՝ կազմվել է ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալներով

Նշվեց, որ ազգային հարստության հաշվարկը հիմնվում է ակտիվների առանձին դասեր կազմող հետևյալ չորս բաղադրիչների վրա.

- արտադրված կապիտալ և քաղաքային հողատարածքներ՝ մեքենաներ, շենքեր, սարքավորումներ, բնակելի և ոչ բնակելի քաղաքային հողատարածքներ՝ շուկայական գներով արտահայտված,
- բնական կապիտալ (պաշարներ)՝ էներգետիկ ռեսուրսներ (նավթ, գազ, քարածուխ) և օգտակար հանածոներ (10 կատեգորիա), գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ (արոտավայրեր և ցանովի հողատարածքներ), անտառներ (փայտանյութեր և որոշ յուրահատուկ անտառային բարիքներ) և հսկվող (պաշտպանվող) տարածքներ: Բնական կապիտալի (պաշարների) արժեքը հաշվարկվում է վարձակալական վճարի դիսկոնտավորված գումարով, որը ձևավորվում է տվյալ ակտիվի գործածության ողջ ժամկետի ընթացքում,
- մարդկային կապիտալ՝ ըստ սեռի և զբաղվածության կարգավիճակի (զբաղված, ինքնազբաղված) դասակարգված բնակչության՝ աշխատանքի ընթացքում գործադրած ջանքերի, ունակությունների և փորձի արժեքի: Մարդկային կապիտալի արժեքը հաշվարկվում է որպես ողջ կյանքի ընթացքում վաստակած աշխատավարձի դիսկոնտավորված գումար:
- զուտ արտաքին ակտիվներ՝ երկրի արտաքին ակտիվների և պարտավորությունների գումարի (օրինակ՝ օտարերկյա ուղղակի ներդրումներ) տարբերությունը:

Աղյուսակ 1-ում ներկայացված է նախկին Խորհրդային Միության 14 երկրների ազգային հարստության և դրա բաղադրիչների մասին տեղեկատվությունը:

Աղյուսակ 1. **Բնակչության մեկ շնչի հաշվով ԱՄՆ դոլարով գնահատված ազգային հարստության և դրա բաղադրիչների մեծությունները և կառուցվածքները նախկին Խորհրդային Միության երկրներում (2014թ.-ի տվյալներով)**

Երկիրը	Ընդամենը ազգային հարստություն	Արտադրված կապիտալ	Բնական կապիտալ	Մարդկային կապիտալ	Զուտ արտաքին ակտիվներ	Բնակչության թվաքանակը
Հայաստան	52894	15451	12702	27329	-2588	3006154
	100.0	29.2	24.0	51.7	-4.9	
Ադրբեջան	85341	20061	45935	11961	7384	9535079
	100.0	23.5	53.8	14.0	8.7	

Վրաստան	44327	20415	7344	21251	-4682	3727000
	100.0	46.1	16.6	47.9	-10.6	
Էստոնիա	258903	91646	20093	155041	-7876	1314545
	100.0	35.4	7.8	59.9	-3.0	
Լատվիա	236906	113746	18738	113472	-9049	1993782
	100.0	48.0	7.9	47.9	-3.8	
Լիտվա	169046	63254	12758	100081	-7047	2932367
	100.0	37.4	7.5	59.2	-4.2	
Բելառուս	99685	33388	21882	49004	-4588	9474511
	100.0	33.5	22.0	49.2	-4.6	
Ուկրաինա	56053	25171	13345	18952	-1414	45271947
	100.0	44.9	23.8	33.8	-2.5	
Մոլդովա	35380	14213	4898	17852	-1582	2909871
	100.0	40.2	13.8	50.5	-4.5	
Ռուսաստանի Դաշնություն	188715	48807	46921	90812	2175	143819666
	100.0	25.9	24.9	48.1	1.2	
Ղազախստան	180911	40150	66606	76617	-2461	17289224
	100.0	22.2	36.8	42.4	-1.4	
Ղրղզստան	24429	6159	12570	6729	-1029	5835500
	100.0	25.2	51.5	27.5	-4.2	
Տաջիկստան	42286	30397	7431	5015	-557	8295840
	100.0	71.9	17.6	11.9	-1.3	
Թուրքմենստան	146831	39740	59062	47510	519	5307188
	100.0	27.1	40.2	32.4	0.4	
Ընդամենը՝ 15 երկրները	**1621707**	**562598**	**350285**	**741626**	**-32795**	**260712674**
	100.0	34.7	21.6	45.7	-2.0	

Աղբյուրը՝ աղյուսակը կազմվել և հաշվարկվել է՝ The Changing Wealth of Nations 2018. Building a Sustainable Future, էջ 226-233 տվյալների հիման վրա:

Համարիչում՝ ԱՄՆ դոլար, հայտարարում՝ %-ով ընդհանուրի նկատմամբ:

Աղյուսակի տվյալների ուսումնասիրությունից կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները՝

➢ բնակչության մեկ շնչի հաշվով ընդամենը ազգային հարստության ամենաբարձր արժեքներն ունեն Էստոնիան (258903), Լատվիան (236906) և Ռուսաստանի Դաշնությունը (188715), իսկ ամենացածրը՝ Տաջիկստանը (42286), Մոլդովան (35380) և Ղրղզստանը (24429): Այսինքն՝ բնակչության մեկ շնչի հաշվով ազգային հարստության ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրի (Էստոնիայի) և ամենացածր ցուցանիշ ունեցող երկրի (Ղրղզստանի) միջև տարբերությունը կազմում է 10,6 անգամ, իսկ ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրի և Հայաստանի ցուցանիշների միջև տարբերությունը կազմում է մոտ 5 անգամ,

➢ արտադրված կապիտալի ամենաբարձր արժեքներն ունեն Լատվիան (113746), Էստոնիան (91646) և Լիտվան (63254), իսկ ամենացածրը՝ Հայաստանը (15451), Մոլդովան (14213) և Ղրղզստանը (6159): Այս բաղադրիչով ամենաբարձր ու ամենացածր ցուցանիշներ ունեցող երկրների տարբերությունը կազմում է 18,5 անգամ, իսկ ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրի և Հայաստանի ցուցանիշների միջև տարբերությունը՝ 7,4 անգամ է,

➢ բնական կապիտալի ամենաբարձր արժեքներն ունեն Ղազախստանը (66606), Թուրքմենստանը (59062) և Ռուսաստանը (46921), իսկ ամենացածրը՝ Տաջիկստանը (7431), Վրաստանը (7344) և Մոլդովան (4898): Այս բաղադրիչով ամենաբարձր ու ամենացածր ցուցանիշներ ունեցող երկրների տարբերությունը կազմում է 13,6 անգամ, իսկ ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրի և Հայաստանի ցուցանիշների միջև տարբերությունը շուրջ 5 անգամ է,

➢ մարդկային կապիտալի ամենաբարձր արժեքներն ունեն մերձբալթյան երեք երկրները՝ Էստոնիան (155041), Լատվիան (113472) ու Լիտվան (100081), իսկ ամենացածրը՝ Ադրբեջանը (11961), Ղրղզստանը (6729) և Տաջիկստանը (5015): Այս բաղադրիչով ամենաբարձր ու ամենացածր ցուցանիշներ ունեցող երկրների՝ Էստոնիայի և Տաջիկստանի տարբերությունը 31 անգամ է, իսկ ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրի և Հայաստանի ցուցանիշների միջև տարբերությունը՝ 5,6 անգամ,

➢ բնակչության մեկ շնչի հաշվով զուտ արտաքին ակտիվների ցուցանիշը դրական մեծություն ունի վառելիքաէներգետիկ ռեսուրսներ արտահանող երկրներում՝ Ադրբեջանում՝ (7384), Ռուսաստանի Դաշնությունում (2175) և Թուրքմենստանում (519): Մնացած բոլոր երկրների համար

զուտ արտաքին ակտիվներն ունեն բացասական մեծություն, ըստ որում՝ ամենամեծ բացասական մեծություն ունեցող երեք երկրներն են Լիտվան (-7047), Էստոնիան (-7876) և Լատվիան (-9049), իսկ ամենափոքր բացասական մեծություններն ունեն Տաջիկստանը (-557), Ղրղզստանը (-1029) և Ուկրաինան (-1414):

Բնակչության մեկ շնչի հաշվով ընդամենը ազգային հարստության ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը նախկին Խորհրդային Միության 14 հանրապետությունների կազմում զբաղեցնում է 10-րդ տեղը, արտադրված կապիտալի ցուցանիշով՝ 12-րդ տեղը, բնական կապիտալի ցուցանիշով՝ 10-րդ տեղը, իսկ մարդկային կապիտալի ցուցանիշով՝ 8-րդ տեղը: Բնակչության թվաքանակի ցուցանիշով Հայաստանը 10-րդ տեղում է:

Հաշվի առնելով, որ ՀՀ-ում բնակչության մեկ շնչի հաշվով ազգային հարստության զգալի մասը (51,7%-ը) կազմում է մարդկային կապիտալը և ազգային հարստության բաղադրիչների կազմում Հայաստանն ունի համեմատական առավելություն, կարող ենք փաստել, որ այն դառնում է ազգային հարստության ավելացման հիմնական գործոնը: Այդ պատճառով էլ հանրապետությունում իրականացվող տնտեսական քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի մարդկային կապիտալի զարգացմանն ու օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

Ազգային հարստության հաշվարկման մեթոդաբանության կարևոր հիմնախնդիրներից է այդ մեծության և երկրի ՀՆԱ-ի միջև եղած կապի բացահայտումը: Ակնհայտ է, որ երկրի ազգային հարստության մեծության ավելացումն ապահովվում է ՀՆԱ-ի աճի հաշվին, իսկ ավելի ստույգ՝ ՀՆԱ-ի այն մասի հաշվին, որն օգտագործվում է կուտակման նպատակով և ի վերջո դառնում է վերը նշված կապիտալի բաղկացուցիչներից որևէ մեկը, կամ տարրալուծվում է այդ բաղկացուցիչների միջև՝ որոշակի համամասնությամբ:

Ստորև բերված *աղյուսակ 2*-ում ներկայացված է ՏՀԶԿ (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն) երկրների և Հայաստանի Հանրապետության բնակչության մեկ շնչի համար հաշվարկված ազգային հարստության և ՀՆԱ-ի միջև եղած կապը, որն ըստ էության բնութագրում է, թե ինչ ժամանակահատվածում է ՀՆԱ-ն «կապիտալացվում» և վերածվում ազգային հարստության: Պարզ է նաև, որ որքան կարճ է այդ ժամանակահատվածն, այնքան ավելի արդյունավետ է գործում երկրի տնտեսությունը և բարձր են նրա վերարտադրական հնարավորությունները և սոցիալ-տնտեսական զարգացման ներուժը: Տնտեսագիտական իմաստով այդ ցուցանիշը լավագույնս է բնութագրում երկրի կառավարման որակը, որն էլ դառնում է կայուն երաշխիք

Աղյուսակ 2. **ՏՀԶԿ երկրների ազգային հարստություն /ՀՆԱ միջին մեծության հաշվարկ, 2014թ.**

Երկրներ	ՀՆԱ (մլն ԱՄՆ դոլար)	Մեկ շնչի հաշվով ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	Ազգային հարստու-յուն (մլն ԱՄՆ դոլար)	Մեկ շնչի հաշվով ազգային հարստու-թյուն (ԱՄՆ դոլար)	Ազգային հարստու-թյուն/ՀՆԱ (տարի)	Մեկ շնչի հաշվով ազգային հարստու-թյուն/ ՀՆԱ (տարի)
1	2	3	4	5	6 (4/2)	7 (5/3)
ԱՄՆ	17393103,0	54596,7	313575269,3	983280	18,0	18,0
Ավստրալիա	1461562,7	61219,2	24558302,6	1046785	16,8	17,1
Ավստրիա	441885,4	51306,7	5933114,7	694616	13,4	13,5
Բելգիա	531075,9	47721,6	7255015,4	645969	13,7	13,5
Գերմանիա	3890606,9	47590	59041425,4	729064	15,2	15,3
Դանիա	352993,6	60563,6	4821395,6	854331	13,7	14,1
Էստոնիա	26224,6	19670,7	340339,6	258903	13,0	13,2
Թուրքիա	934167,8	10482,1	3565939,2	45998	3,8	4,4
Իռլանդիա	545172,4	53462	2896182,1	627256	5,3	11,7

Իսլանդիա	17291,1	51261,9	270374,0	825857	15,6	16,1
Իսպանիա	1376910,8	30278,3	15918307,7	342470	11,6	11,3
Իտալիա	2151732,9	35823,2	25985290,5	427466	12,1	11,9
Իսրայել	308414,8	36991	-	-	-	-
Լեհաստան	545172,4	14378,6	5889234,1	154932	10,8	10,8
Լյուքսեմբուրգ	66327,3	111716,3	716876,6	1288607	10,8	11,5
Կանադա	1799268,7	50397,9	36134355,0	1016593	20,1	20,2
Կորեայի Հանրապետություն	1411333,9	28100,7	21382379,0	424052	15,2	15,1
Հունաստան	237029,6	21653,1	2482653,2	227925	10,5	10,5
Հունգարիա	140118,1	13881,1	1633087,9	165519	11,7	11,9
Ճապոնիա	4850413,5	36331,7	72710109,0	571927	15,0	15,7
Մեքսիկա	1314390,3	10714,8	13851498,4	110471	10,5	10,3
Միացյալ Թագավորություն	3022827,8	45653,4	41849556,1	647694	13,8	14,2

Նիդեռլանդներ	879635,1	51373	13363764,9	792396	15,2	15,4
Նոր Զելանդիա	200696,3	43837,3	-	-	-	-
Նորվեգիա	499338,5	97013,3	8588198,4	1671756	17,2	17,2
Շվեդիա	573817,7	58491,5	8592004,3	886129	15,0	15,1
Շվեյցարիա	709182,6	87475,5	12010758,2	1466757	16,9	16,8
Չեխիայի Հանրապետություն	207818,3	19,563.3	-	-	-	-
Չիլի	260990,3	14477,1	4222412,1	237713	16,2	16,4
Պորտուգալիա	229629,8	22,130.5	2854602,6	274453	12,4	12,4
Սլովակիա	100948,2	18,454.0	1155315,6	213211	11,4	11,6
Սլովենիա	49904,9	24019,3	725355,1	351776	14,5	14,6
Ֆինլանդիա	272609,3	49496,7	3967362,5	726422	14,6	14,7
Ֆրանսիա	2849305,3	44538,1	42525263,2	641707	14,9	14,4
Հայաստանի Հանրապետություն	**11609,5**	**3852**	**159007,5**	**52894**	**13,7**	**13,7**

տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության կենսամակարդակի հետագա բարձրացման համար:

Այսպես, *աղյուսակ 2*-ի տվյալներից հետևում է, որ բնակչության մեկ շնչի հաշվով ազգային հարստության և ՀՆԱ-ի միջև հարաբերակցությունն ամենափոքրը Թուրքիայում է՝ 4,4 տարի, Էստոնիայում այդ ցուցանիշը 13,2 է, իսկ Հայաստանում՝ 13,7 տարի: Ինչ վերաբերում է ՏՀԶԿ մյուս երկրներում ազգային հարստություն / ՀՆԱ հարաբերակցության բարձր մեծություններին, ապա, օրինակ ԱՄՆ-ում այն 18,0 տարի է, Կանադայում՝ 20,2, իսկ Շվեյցարիայում՝ 16,8 տարի: Այդ հանգամանքը բացատրվում է նշված երկրներում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի բարձր ցուցանիշներով, որի ավելացումը պահանջում է ավելի շատ ռեսուրսներ ու ջանքեր, քան այդպիսի ցածր ցուցանիշ ունեցող երկրներում:

Կարելի է եզրակացնել, որ ներկայում ազգային հարստության ցուցանիշը դարձել է երկրների տնտեսությունների արդյունավետության գնահատման կարևորագույն բնութագրիչներից մեկը, և երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի այդ հարստության ու նրա բաղկացուցիչների ավելացմանը: Ըստ որում, ելնելով դրանցից յուրաքանչյուրի կարևորությունից, հատկապես հեռանկարային հորիզոնում պետք է առաջնորդվել համեմատական առավելությունների իրացման հնարավորություններով: Երևույթն այս տեսանկյունից դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ ՀՀ տնտեսությունը կարիք ունի լուրջ կառուցվածքային փոփոխությունների՝ դիվերսիֆիկացման, գլխավորապես տնտեսական գործունեության այնպիսի ոլորտների զարգացմամբ, որոնք ապահովում են առավելագույն ավելացված արժեք՝ մարդկային կապիտալի հնարավորությունների ընդլայնմամբ և ներուժի ընդգրկմամբ:

Վերը նշված նպատակներին հասնելու համար, կարծում ենք, առաջնահերթ պետք է լինի հետևյալ միջոցառումների իրականացումը՝

- ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի կողմից Հայաստանի Հանրապետության ազգային հարստության հաշվարկման մեթոդաբանության մշակումը (այդ գործում ընդգրկելով հանրապետության առաջատար տնտեսագետներին) և դրա հիման վրա պարբերաբար (օրինակ՝ տարին երկու անգամ) ազգային հարստության մեծության ու դրա կառուցվածքի վերաբերյալ տվյալների հրապարակումը,
- կառավարության և նրա կազմի մեջ մտնող նախարարությունների և գերատեսչությունների աշխատանքի արդյունավետության գնահատման հիմնական ցուցանիշների մեջ անհրաժեշտ է ընդգրկել նաև նրանց

կողմից ստեղծված ազգային հարստության մեծությունը՝ տարեկան կտրվածքով,

- ելնելով այն հանգամանքից, որ ներկայում ՀՀ ազգային հարստության կեսից ավելին բաժին է ընկնում մարդկային կապիտալին, մեծացնել այդ կապիտալի արդյունավետությունը՝ նկատի ունենալով դրան բնորոշ այն հիմնական առավելությունները, որն ունի Հայաստանի բնակչությունը (կրթվածության բարձր մակարդակ, մտավոր սեփականության զգալի ներուժ և այլն),
- մարդկային կապիտալի արդյունավետության բարձրացման և զուտ արտահանման ցուցանիշի բարելավման տեսանկյունից էականորեն ավելացնել արտահանման կառուցվածքում տեխնոլոգիատար ապրանքների ու ծառայությունների, ինչպես նաև տեխնոլոգիաների (հատկապես՝ բարձր տեխնոլոգիաների) բաժինը՝ նկատի ունենալով, որ ՀՀ-ում դրա համար գոյություն ունեն լուրջ նախադրյալներ:

ԱՎԵԼԱՑԱԾ ԱՐԺԵՔԻ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՆԸ

Արամ Առաքելյան
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
տնտեսագիտության մեջ մաթեմատիկական
մոդելավորման ամբիոնի վարիչ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ներածություն

Աշխատանքն ուսումնասիրում է միջազգային տնտեսական համագործակցության հնարավոր ուղղությունները՝ հիմնված օտարերկրյա ուղղակի ներդրումների /ՕՈՒՆ/ և միջազգային առևտրի վրա: Մենք առաջարկում ենք ՀՀ-ի ԱՊՀ երկրներում մրցակցային համեմատական առավելություն ունեցող ապրանքային խմբերի օրինակով բարձրացնել ՕՈՒՆ-ների գրավչությունը, ապահովել արտահանման կայունությամբ ավելացած արժեքի աճը և միաժամանակ գնահատել ներդրումային գործընթացի արդի վիճակի արդյունավետությունը: Որպես տվյալների աղբյուր ուսումնասիրվել են Հայաստանի վիճակագրության ծառայության կողմից հրատարակված տարեգրքերը և ԵԱՏՄ միության երկրների միջազգային համագործակցության արդյունքները:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն երկրները, որոնք արտահանում են մրցակցային համեմատական առավելություն ունեցող ապրանքային խմբեր, տնտեսապես արագ են զարգանում[44]: Ներկայացվող հետազոտությունում ցույց է տրվել, որ ՕՈՒՆ-ների հոսքերի գրավչության բարձրացմամբ հնարավոր է մեծացնել արտահանման զամբյուղը և պայմանավորել դրա կայունությունը: Հայտնի են ուսումնասիրության երկու խողովակներ: Առաջինն այն է, որ երկիրը արտահանում է իր արտադրած մրցակցային առավելություն ունեցող ապրանքները: Երկրորդն այն է, որ արտահանման քաղաքականությունն իրականացնում են առանձին ֆիրմաներ և, բնական է, որ ՕՈՒՆ-ների գրավչության բարձրացումն ապահովում են ֆիրմաները: Աշխատանքում ուսումնասիրվում է երկրորդ խողովակը՝ ՕՈՒՆ-ների դերը արտահանման արդյունավետության բարձրացման համար, ուսումնասիրել ենք ՀՀ ԱՊՀ և այլ երկրներում մրցակցային համեմատական առավելություն ունեցող ապրանքային խմբերը և այդ ապրանքներն արտադրող տնտեսության ոլորտներ ուղղված ՕՈՒՆ-ների հոսքերը:

[44] Rodrik, Dani, ‘‘Industrial Development: Stylized Facts and Policies,’’ Kennedy School of Government mimeograph (2006).

Տվյալների բազան

Որպես տվյալների բազա ուսումնասիրվել են ՀՀ վիճակագրության ծառայության կողմից հրատարակված տարեգրքերը: Արդյունքում, հնարավորություն է ստեղծվել գնահատել համեմատական առավելություն ունեցող ապրանքային խմբերի արտադրության ոլորտները, ուղարկված ՕՈՒՆ-ների հոսքերի արդյունավետությունը և դրանցով պայմանավորված արտահանման ծավալների բարձացումը ու, հետևաբար, ՀՆԱ-ի աճի բարձրացումը:

Միջազգային շուկաներում մրցակցային գործընթացներով պայմանավորված մարտահրավերներին դիմակայելու համար որպես օրինակ ուսումնասիրում ենք ԵԱՏՄ երկրների միջև միջազգային առևտրին վերաբերվող տվյալները:

ՀՀ արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքը ՀՀ արտահանման համեմատական մրցակցային առավելությունների վերլուծություն

Երկրի մասնագիտացման և միջազգային առևտրի կառուցվածքի գնահատման համար այժմ մշակվել են տարբեր մոտեցումներ և ցուցանիշներ, որոնցով կարելի է գնահատել երկրի միջազգային առևտրի համեմատական առավելությունը: Այդ ցուցանիշները հիմնված են Բալասսայի ցուցանիշի վրա և հնարավորություն են տալիս գնահատել երկրի ներճյուղային մասնագիտացումը տարբեր տեսանկյուններից:

Բալասսայի ինդեքս. Բ. Բալասսայի կողմից առաջարկվել է միջազգային առևտրի համեմատական առավելության գնահատման ինդեքսը: Նա բացահայտել է, որ «Համեմատական առավելություններն առաջանում են որպես տնտեսական գործոնների արդյունք, և դրանք կարող են լինել չափելի և անչափելի»: Համաձայն Բալասսայի առաջարկվում է մասնագիտացման հետևյալ ինդեքսը, որը կոչվում է Բալասայի ինդեքս:

$$B_{ij} = 100 \times \frac{x_{ji}}{\sum_{j=1}^{N} x_{ji}} \Big/ \frac{\sum_{i=1}^{N} x_{ji}}{\sum_{j=1}^{N}\sum_{i=1}^{M} x_{ji}}, \qquad (1)$$

Որտեղ $X_{ji}X_{ji}$-ն j-րդ ապրանքի (ծառայության) արտահանումն է i-րդ երկրից: Բալասսայի ինդեքսը (1) սահմանափակված է ներքևից 0-ով և չունի վերին սահման: Եթե երկիրը մասնագիտացված է որևէ մի ապրանքի կամ ապրանքային խմբի արտահանման գործում, և այդ արդյունաբերական

ճյուղի միջինը մնացած երկրների միջինից ավելի է, ապա այդ ճյուղի ցուցանիշը մեծ է 100-ից, իսկ եթե այդ ցուցանիշը 100-ից փոքր է, ապա արդյունաբերության այդ ճյուղը մյուս երկրների համեմատ ունի ավելի ցածր մասնագիտացում: Այս ցուցանիշով ստացված արժեքն օգտագործվում է միջճյուղային մասնագիտացման և ներճյուղային առևտրի համեմատական կարևորության գնահատման համար: Հայտնի է (Balassa (1965)), որ որքան բարձր է միջճյուղային մասնագիտացումը, այնքան մեծ է ինդեքսի ստացված ժամանակային շարքի ստանդարտ միջին քառակուսային շեղումը: Հարկ է նշել, որ Բալասսայի ինդեքսը (1) հնարավորություն չի տալիս ամբողջությամբ ներկայացնել երկրի առևտուրը, քանի որ այն ուսումնասիրում է միայն արտահանումը: Օրինակ, երկիրն ունի որևէ ապրանքի արտադրության համեմատական բարձր առավելություն, սակայն միևնույն ժամանակ այդ ապրանքի ներմուծման ծավալը ավելի մեծ է, քան դրա արտահանումը: Այդպիսի օրինակ է 2012թ.-ին ՀՀ ոգելից և ոչ ոգելից խմիչքների արտահանումը և ներմուծումը: Տարբեր հեղինակներ առաջարկում են ուսումնասիրել միջազգային առևտրի գնահատման այլ ցուցանիշներ՝ միաժամանակ ընդգրկելով ներմուծումը և արտահանումը:

Նորմալացված հաշվեկշռի և Նևենի ինդեքսը. Նորմալացված հաշ-վեկշիռը որոշվում է, որպես առևտրի հաշվեկշռի արժեքի և ամբողջական առևտրի հարաբերություն: Հաշվի առնելով այն, որ այս ինդեքսն ընդգրկում է ինչպես ներմուծումը (m), այնպես էլ արտահանումը (x), այն կարելի է օգտագործել երկրի տնտեսական և միջազգային առևտրի գնահատման համար: Այս ցուցանիշը որոշվում է հետևյալ կերպ՝

$$NB_{ji} = \frac{x_{ji} - m_{ji}}{x_{ji} + m_{ji}}, \qquad (2)$$

N$B_{ji}B_{ji}$ ինդեքսը որոշելուց հետո պարզվում է, որ այն ընդունում է -1-ի և 1-ի միջակայքում ընկած արժեքները: Ընդ որում, եթե այն ընդունում է 1 արժեք, այսինքն՝ $m_{ji}m_{ji}$ = 0, ապա երկիրը մասնագիտացված է j-րդ ապրանքի արտադրության բնագավառում: Եթե այն -1 է, ապա երկիրը j-րդ ապրանքի արտադրության բնագավառում մասնագիտացված չէ: Առաջարկված ինդեքսի (2), թերությունն այն է, որ դրանով հնարավոր է ուսումնասիրել միայն մեկ ապրանք՝ j-րդ ապրանքը, սակայն ստանալ համեմատական առավելության ամբողջական գնահատում հնարավոր չէ: Նևենը առաջարկել է նորմալացված հաշվեկշռի՝ N$B_{ji}B_{ji}$-ի ընդհանրացված բանաձև, որով կարելի է վերացնել N$B_{ji}B_{ji}$-ի թերությունները և ունի հետևյալ տեսքը՝

$$NEV_{ji} = \left(\frac{x_{ji}}{X_i} - \frac{m_{ji}}{M_i}\right) / \left(\frac{x_{ji}}{X_i} + \frac{m_{ji}}{M_i}\right), \quad (3)$$

Որտեղ $X_i X_i$-ն և $M_i M_i$-ն համապատասխանաբար ii-րդ երկրի ընդհանուր արտահանումը և ներմուծումն են: Սակայն այս դեպքում Նևենի (3) բանաձևը հնարավորություն չի տալիս հաշվի առնել աշխարհի արտահանումը և ներմուծումը:

Դոնգեսի և Ռայդելի ինդեքս. Դոնգեսի և Ռայդելի ինդեքսը հնարավորություն է տալիս վերացնել Նևենի ինդեքսի թերությունները և ներառում է երկրի և աշխարհի առևտրի ինդեքսները: Այս ինդեքսը տրվում է հետևալ կերպ՝

$$DR_{ki} = \left[\left(\frac{(x_{ki} - m_{ki})/(x_{ki} + m_{ki})}{(x_{kw} - m_{ki})/(x_{ki} + m_{kw})} - 1\right) \times [sign(x_{kw} - m_{kw})]\right], \quad (4)$$

որտեղ $x_{ki} x_{ki}$-ն kk-րդ ապրանքի արտահանումն է ii երկրից, $m_{ki} m_{ki}$-ն kk-րդ ապրանքի ներմուծումը ii-րդ երկիր, իսկ $x_{kw} x_{kw}$ և $m_{kw} m_{kw}$-ն՝ kk-րդ ապրանքի աշխարհի արտահանումը և ներմուծումն են:

Աքուինիոի ինդեքսը. Աքուինոն առաջարկել է հետևյալ ինդեքսը՝

$$A_{ki} = 100 \times \left[\frac{x_{ki} / \sum_{k=1}^{M} x_{ki}}{\sum_{i=1}^{M} x_{ki} / \sum_{i=1}^{N} \sum_{k=1}^{M} x_{ki}}\right] / \left[\frac{m_{ki} / \sum_{k=1}^{M} m_{ki}}{\sum_{i=1}^{N} m_{ki} / \sum_{i=1}^{N} \sum_{k=1}^{M} m_{ki}}\right], \quad (5)$$

որտեղ $x_{ki} x_{ki}$-ն նշանակում է kk-րդ ապրանքի արտահանումն է i i երկիր, իսկ $m_{ki} m_{ki}$-ն՝kk-րդ ապրանքի ներմուծումը ii-րդ երկրից: Ինչպես տեսնում ենք, ցուցանիշը (5) նման է Բալասսայի արտահանման և ներմուծման գնահատման ցուցանիշին: Ցուցանիշի (5) համարիչում տրված է kk-րդ ապրանքի կշիռը ii-րդ երկրի արտահանման մեջ, հարաբերած երկրի kk-րդ ապրանքի արտահանման կշռին ընդհանուր արտահանման նկատմամբ: Նշված ցուցանիշի հայտարարը և համարիչը արտահայտում են ներմուծման նույն մեծությունները: Արդյունքում, կարելի է եզրակացնել, որ (5) ցուցանիշը գնահատում է երկրի մասնագիտացման աստիճանը: Աքուինոյի ինդեքսը հնարավորություն է տալիս վերացնել Բալասսայի ցուցանիշի թերությունները, քանի որ վերջինս օգտագործում է միայն արտահանման գործոնը: Սակայն հարկավոր է նշել, որ Աքուինոյի ինդեքսը (5) որոշ սահմանափակումներ ունի, քանի որ այն հնարավորություն է տալիս ստանալ Բալասսայի ցուցանիշի արտահանմանը և ներմուծմանը վերաբերող արժեքները:

Բալասսայի լոգարիթմական ինդեքսը. Բալասսայի միջազգային առևտրի համեմատական առավելության (1) ինդեքսը ներկայացվում է նաև հետևյալ ձևով՝

$$RCA = \ln\left(\frac{X_i}{M_i}\right) \times \left(\frac{\sum_{i=1}^{n} X_i}{\sum_{i=1}^{n} M_i}\right) \times 100, \qquad (6)$$

որտեղ X և M-ը արտահանումը և ներմուծումն են համապատասխանաբար, իսկ ii-ն ապրանքի խումբը:

ԵԱՏՄ շրջանակում իրականացվող միջազգային առևտրի մոդելները

Առաջարկվում է մրցակցային համեմատական առավելություն ունեցող ապրանքային խմբերի արտահանման կախվածությունը ներմուծումից: Մոդելը կլինի՝

Արտահանում = $a_0 + a_1$ Ներմուծում

Որպես օրինակ դիտարկվում են ՀՀ մրցակցային համեմատական առավելություն ունեցող ապրանքային խմբերը:

Ռեգրեսիոն մոդելներից նշանակալի մոդել է ստացվում միայն ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և արվեստի ստեղծագոր ծություններ, հնաոճ իրեր ապրանքային խմբերի համար՝

1. ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ

Արտահանում = 35845,28905 + 2,1861435 Ներմուծում

12463,84 0,31978
2,8759 6,8363
որտեղ՝
ա) գործակիցների ներքևում գրված առաջին տողը ստանդարտ սխալներն են, իսկ երկրորդ տողը՝ t վիճակագիրն է,
բ) R^2=0,76 F=46,74:

2. արվեստի ստեղծագործություններ, հնաոճ իրեր

Արտահանում = 610,9808074 + 0,196852 Ներմուծում

158,626979 0,060936989
3,85168 3,230421
որտեղ՝
ա) գործակիցների ներքևում գրված առաջին տողը ստանդարտ սխալներն են, իսկ երկրորդ տողը՝ t վիճակագիրն է,
բ) R^2=0,43 F=10,435:

Աղյուսակ 1. **ՀՀ ապրանքային խմբերի համեմատական առավելության արտահանման ցուցանիշները ըստ Բալասսայի (6) բանաձևի**

Ապրանքային խումբ	Երկիր	1996թ.	1997թ.	1998թ.	1999թ.	2000թ.	2001թ.
Կենդանի կենդանիներ	ԱՊՀ երկրներ	-2,237211314	-0,9656377	-0,2830024	-0,3881605	-0,6823746	-0,5438329
Ձուկ և խեցգետնավորներ	ԱՊՀ երկրներ	-2,400829867	-0,1034053	0,13404296	0,04595439	0,26046963	2,13663682
Բանջարեղենի,պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	ԱՊՀ երկրներ	0,872694976	0,67921138	0,36694169	0,76794238	0,57303674	2,54270813
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիք	ԱՊՀ երկրներ	1,419840125	0,68638249	0,83770573	1,03816717	0,96658589	2,34861836
Հանքաքար, խարամ և մոխիր	ԱՊՀ երկրներ	1,662584896	0,21824835	0,0503966	-	-	-
Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	ԱՊՀ երկրներ	1,416948226	0,78521797	0,42390804	0,40131821	0,43443714	0,44060248
Բնական կամ արհես-տական մարգարիտ, թանկարժեք և կիսաթան-կարժեք քարեր	ԱՊՀ երկրներ	0,216909261	0,63757576	0,3015171	0,45256058	0,16023111	-1,4123159
Պղինձ և դրանից պատրաստված իրեր	ԱՊՀ երկրներ	-0,091234374	-0,7284929	-0,2339471	-1,2998714	-0,4385634	-1,4596843
Այլումին և դրանից պատրաստված իրեր	ԱՊՀ երկրներ	1,265942498	0,18479399	0,15946636	-0,0219227	-0,5643181	-3,2830361
Արվեստի ստեղծագոր ծություններ, հնաոճ իրեր	ԱՊՀ երկրներ	-	-	-	0,27483666	0,62129471	1,15622422

2002թ.	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2011թ.
0,19288476	-0,555989642	-1,0478218	-0,868961158	-0,1652562	0,233735875	-1,1864401	-3,895718857	-4,402618961
1,23958745	0,406872616	0,45783454	0,490270745	1,0474988	0,961435455	0,76982392	0,995535995	2,985122991
2,37894104	1,753182592	0,2829219	0,585685931	0,60590216	0,438974266	0,35396926	0,805916336	0,960760164
2,33831435	1,673394103	0,59916822	0,77011143	0,83803847	0,733782039	0,72215566	1,197932763	1,201325955
5,0854059	3,118727669	0	0	-0,5618985	-0,07837493	-4,9988453	0,55234197	-1,022514606
0,28849989	0,976962369	0,66506291	1,059076376	1,49925518	0,058712208	-0,4340082	-0,057290471	0,126882325
-1,6864762	-1,212351246	-0,251717	-0,299640335	-0,3694677	0,905536649	0,90410401	3,418403209	-0,327966208
-1,2292094	-1,113706591	-0,6196959	-0,285409777	-0,4302939	-0,446510142	-0,6144251	-0,972239056	-4,465716136
-3,8041107	-0,492090028	-0,8115908	-1,327265318	-2,5664426	-2,455377836	-2,2117895	-8,382456352	-6,372909167
-	4,145419533	1,3367509	1,440051364	1,21582535	2,250537351	2,465464	5,102476861	2,221817215

Ապրանքային խումբ	Երկիր	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
Կենդանի կենդանիներ	ԱՊՀ երկրներ	0,31621592	0,397443398	-0,5852643	-2,110119974
Ձուկ և խեցգետնավորներ	ԱՊՀ երկրներ	1,8718208	1,801413516	1,8622548	2,297683147
Կերային հատապտուղներ և ընկույզ, ցիտրուսներ	ԱՊՀ երկրներ	2,31099092	1,393918281	0,89200845	2,245795567
Բանջարեղենի,պտուղների, ընկույզների և բույսեր իմասերի վերամշակումից մթերք	ԱՊՀ երկրներ	0,73972514	0,300390512	0,47708405	0,870493597
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիք	ԱՊՀ երկրներ	0,76660824	0,626017587	0,66841808	1,026577728
Հանքաքար, խարամ և մոխիր	ԱՊՀ երկրներ	0	0	-0,8463265	0,326931277
Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	ԱՊՀ երկրներ	0,47888736	0,253805081	0,25819183	0,594142894
Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր	ԱՊՀ երկրներ	0,48900807	0,623029743	0,75609887	0,292833916
Պղինձ և դրանից պատրաստված իրեր	ԱՊՀ երկրներ	-1,6654471	-1,420282272	-1,4910841	0
Այումին և դրանից պատրաստված իրեր	ԱՊՀ երկրներ	-2,7158845	-1,654259792	-2,1237918	-2,797644084
Արվեստի ստեղծագոր ծություններ, հնաոճ իրեր	ԱՊՀ երկրներ	1,52933299	1,030775216	0,95628574	0,157049087

Ընդ որում, այս մոդելներից կարելի է եզրակացնել, որ 2 ապրանքային խմբերի արտահանումը դրական է՝ կախված այդ ապրանքային խմբերի ներմուծումից:

ՀՀ ՀՆԱ-ի կախվածությունը համեմատական մրցակցային առավելություն ունեցող ապրանքային խմբերի արտահանումից

ՀՀ ՀՆԱ-ի կախվածությունը համեմատական մրցակցային առավելություն ունեցող ապրանքային խմբերի արտահանումից և այդ ոլորտում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումներից՝ ՕՈՒՆ: Մոդելը կլինի՝

ՀՆԱ = a_0 + a_1 Արտահանում + a_2 ՕՈՒՆ

Ռեգրեսիոն մոդելներից նշանակալի մոդել է ստացվում ձուկ և խեցգետնավորներ, հանքաքար, խարամ, մոխիր և արվեստի ստեղծագործություններ, հնաոճ իրեր ապրանքային խմբերի համար՝

- ձուկ և խեցգետնավորներ

ՀՆԱ = 8552506,3 + 81,44779 Արտահանում + 14,5399 ՕՈՒՆ

346820,44 17,058429 14,217726
24,65976 4,77462 2,02365
որտեղ՝
ա) գործակիցների ներքևում գրված առաջին տողը ստանդարտ սխալներն են, իսկ երկրորդ տողը՝ t վիճակագիրն է,
բ) R^2=0,8778, F=24,37:

Այս մոդելից պարզ է, որ ՀՀ ՀՆԱ-ն ուղղակի և դրական կապ ունի ձուկ և խեցգետնավորներ ապրանքային խմբի արտահանման և այս ոլորտում ՕՈՒՆ-ի հետ: Այսինքն՝ որքան մեծանա արտահանումը կամ ՕՈՒՆ-ը այնքան ավելի կմեծանա ՀՀ ՀՆԱ-ն:

- հանքաքար, խարամ և մոխիր

ՀՆԱ = 6137794,099 + 12088636 Արտահանում + 19,100538 ՕՈՒՆ

106739,3 3,15951390 9,438987
5,75025 3,8261063 2,02579
որտեղ՝
ա) գործակիցների ներքևում գրված առաջին տողը ստանդարտ սխալներն են, իսկ երկրորդ տողը՝ t վիճակագիրն է,
բ) R^2=0,79, F=7,66:

Այս մոդելից ևս կարելի է հանգել այն եզրակացության, որ ՀՀ ՀՆԱ-ն ուղղակի և դրական կապ ունի հանքաքար, խարամ և մոխիր

ապրանքային խմբի արտահանման և այս ոլորտում ՕՈՒՆ-ի հետ: Այսինքն՝ որքան մեծանա արտահանումը կամ ՕՈՒՆ-ը այնքան ավելի կմեծանա ՀՀ ՀՆԱ-ն:

- արվեստի ստեղծագործություններ, հնաոճ իրեր

ՀՆԱ = 943399,899 + 1053,78035 Արտահանում + 1898311,26 ՕՈՒՆ

66166933,2 528,5022 671551,1
14,2573632 2,068 -2,8268

որտեղ՝

ա) գործակիցների ներքևում գրված առաջին տողը ստանդարտ սխալներն են, իսկ երկրորդ տողը՝ t վիճակագիրն է,

բ) R^2=0,84, F=10,07:

Այս մոդելից արդեն ՀՀ ՀՆԱ-ն դրական է՝ կախված արվեստի ստեղծագործություններ, հնաոճ իրեր ապրանքային խմբի արտահանումից և բացասական այս ոլորտում կատարվող ՕՈՒՆ-ից: Այսինքն՝ որքան մեծանա արտահանումը կամ նվազի ՕՈՒՆ-ը, այնքան ավելի կմեծանա ՀՀ ՀՆԱ-ն:

Արտադրանքի ավելացած արժեքի և արտահանման փոխկապակցվածությունը

Արտադրանքի ավելացած արժեքի ավելացումը պայմանավորված է արտահանման կայունությամբ: ՀՀ-ի միացումը ԵԱՏՄ-ին հնարավորություն է ստեղծում մեծացնել արտահանման ծավալները: Սակայն, արտահանման աճի հնարավորությունները, որ ստեղծվում են ՀՀ-ի ԵԱՏՄ-ին միանալու արդյունքում, պայմանավորում են որոնել այնպիսի միջոցներ, որոնք հնարավորություն կտան մեծացնել ավելացած արժեքը և ապահովել կայուն արտահանում: ՀՀ-ից արտահանվող ապրանքների հիմնական մասի ավելացած արժեքը մնում է անկայուն: Դա բացատրվում է նրանով, որ արտահանվող ապրանքների գերակշիռ մասը վերամշակած չի: Այնուամենայնիվ, միանալով ԵԱՏՄ-ին, ՀՀ-ն հնարավորություն է ստանում միանալ ինչպես գլոբալ, այնպես էլ ԵԱՏՄ-ի շրջանակում գործող մատակարարման շղթաներին: Մինչ այժմ, ՀՀ-ի արտահանումը հիմնականում կախված է համաշխարհային շուկայից և, մասնավորապես, ՌԴ-ի պահանջարկից և, հետևաբար, համաշխարհային ու ՌԴ-ի պահանջարկի նվազումը անմիջապես անդրադառնում է ՀՀ-ի արտահանման ծավալների վրա: Ներկա պայմաններում ՀՀ-ի արտահանումը հիմնականում ոգելից և ոչ ոգելից խմիչքներն են և քացախը՝ 10.5%, հանքաքարը, խարամը և մոխիրը՝ 22.1%, պղինձ և իրեր դրանից՝

9.6%, ալյումինը և իրեր դրանից՝ 8.0%: Քանի որ ՀՀ-ի արտահանվող ապրանքների հիմնական մասը անցել է միայն նախնական վերամշակում, իսկ գյուղատնտեսական արտադրության վերաբերյալ առկա են որոշակի սահմանափակումներ ու, հետևաբար, դրանց ավելացած արժեքը ցածր է: Այս առումով պետք է առաջնություն տրվի օժանդակ ճյուղերի զարգացմանը, արտադրության մեջ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը և արտահանման շուկաների ընդլայնմանը: Հարկավոր է ուսումնասիրել ԵԱՏՄ շուկան և դրա հետ միաժամանակ ուսումնասիրել այլ տնտեսական միությունների շուկաները: Շուկաների ընդլայնման գործընթացը պետք է հիմնվի առևտրի վրա, զարգացնի մարքեթինգը և ստեղծվեն ապրանքների բրենդները: Կազմակերպությունները և ձեռնարկությունները ինքնուրույն պետք է ուսումնասիրեն շուկաները և դրա հիման վրա մշակեն արտահանման ռազմավարությունը: ԵԱՏՄ-ի հնարավորությունները օգտագործելով՝ ՀՀ ձեռնարկությունները պետք է ակտիվացնեն միության երկրների կազմակերպությունների հետ գործարար կապերը բիզնեսի զարգացման նպատակով: Այժմ, ԵԱՏՄ շուկան ՀՀ-ի համար մնում է քիչ ուսումնասիրված, ինչը բացատրվում է նրանով, որ ՀՀ-ի արտաքին առևտրի գործընկերը մնում է ՌԴ-ն: Ավելացած արժեքի մեծացումը ապահովելու համար անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ նախարարությունները, գործակալությունները ընդլայնեն համագործակցությունը ԵԱՏՄ երկրների նմանատիպ կազմակերպությունների հետ, պարզեցնելու համար մաքսային գործընթացները, որպեսզի ներդրվի առողջ գործարար մթնոլորտ: Այդպիսով կպայմանավորվի ՀՀ արտահանման կայունությունը:

Աղյուսակ 2-ում տրված է պանելային ռեգրեսիայի մոդելը, որը արտահայտում է 2014թ.–2016թ. ավելացած արժեքի կախվածությունը արտահանումից և ներմուծումից ԵԱՏՄ երկրների համար: Արտահանումը ունի դրական ազդեցություն և դրան հակառակ ներմուծման ազդեցությունը բացասական է: Ստացված ռեգրեսիայի հավասարումները հիմնավորում են Արտադրանքի ավելացած արժեքի ավելացման կախվածությունը արտահանման կայունությամբ:

Աղյուսակ 2. **Ավելացած արժեքի կախվածությունը արտահանումից և ներմուծումից**

	2016		2015		2014	
	export	**import**	**export**	**import**	**export**	**import**
Գործակիցներ	3.57258082	-0.0015281	6.6665241	-4.112332	4.621458405	-1.8170679
Ստանդարտ սխալը	0.01941602	0.00022305	0.6529101	1.0132092	1.481144446	2.55926409
t-վիճակագիրը	184.001718	-6.8506436	10.210478	-4.058719	3.120194264	-0.7099963
P-արժեքը	3.5396E-07	0.00636689	0.0020023	0.0269584	0.052463609	0.52891906
Ներքին 95%	3.51079039	-0.0022379	4.5886729	-7.336815	-0.09220426	-9.9617885
Վերին 95%	3.63437126	-0.0008182	8.7443753	-0.887848	9.335121074	6.32765265
Ներքին 95,0%	3.51079039	-0.0022379	4.5886729	-7.336815	-0.09220426	-9.9617885
Վերին 95,0%	3.63437126	-0.0008182	8.7443753	-0.887848	9.335121074	6.32765265

Աղյուսակ 2-ում տրված մոդելները հնարավորություն են տալիս գնահատել արտահանման մեկ միավորի փոփոխությամբ առաջացող ավելացած արժեքի փոփոխությունը և միաժամանակ հնարավորություն է ստեղծվում որոշել ավելացած արժեքի կախվածությունը արտահանման կայունությունից:

Եզրակացություն

Բացահայտվել են ԱՊՀ և այլ երկրներում ՀՀ–ում արտադրվող համեմատական մրցակցային առավելություն ունեցող ապրանքային խմբերը: Առաջարկվել են ՕՈՒՆ-երի արդյունավետության գնահատման մոդելներ՝ հիմնված արտահանման ու ներմուծման հոսքերի վրա: Հիմնավորվել է ներդրման հոսքերի արդյունավետության գնահատման մոտեցումը՝ բարձրացնել ՀՀ համեմատական մրցակցային առավելություն ունեցող ոլորտների գրավչությունը ՕՈՒՆ-երի առումով: Առաջարկվող մոդելները և մոտեցումները կիրառելի են Եվրոպական տնտեսական համագործակցության երկրների հետ երկկողմանի և/կամ բազմակողմանի տնտեսական հարաբերությունների /միջազգային առևտրի, օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավելու, վերազգային ձեռնարկությունների ստեղծման/ հաստատելու ՀՀ քաղաքականության մշակման համար:

ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Խորեն Մխիթարյան
ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Prof_Mkhitaryan@yahoo.com

Վարկային շուկայի կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները մշտապես գտնվել և գտնվում են կենտրոնական բանկերի ուշադրության կենտրոնում՝ պայմանավորված խնդրի հրատապությամբ և կարևորությամբ, կառավարման համապատասխան կառուցակարգերի մշակման ու ներդրման անհրաժեշտությամբ, վարկային շուկայում առկա մի շարք էնդոգեն ռիսկերի, և առաջին հերթին, վարկային ռիսկերի օպտիմալ կառավարման տրամաբանությամբ, ինչպես նաև վարկային շուկայում համապատասխան բարեփոխումների իրականացման նպատակահարմարությամբ:

Ժամանակակից պայմաններում ՀՀ վարկային շուկայի կառավարման կատարելագործման նպատակով մատնանշենք այն հիմնարար ուղղությունները, որոնց լավարկումը կնպաստի վարկային շուկայի գործունեության արդյունավետության հետագա բարձրացմանը:

- Կայուն տնտեսական աճ ունենալու համար տնտեսությանն անհրաժեշտ են երկարաժամկետ ներդրումներ, որոնց ապահովման տեսանկյունից կարևորվում է նաև երկարաժամկետ վարկերի տեսակարար կշռի բարձրացումը: Երկարաժամկետ վարկի օբյեկտ են՝ արտադրական հզորությունների շինարարության, վերակառուցման և ընդլայնման վրա կատարած ծախսերը, մեքենաների ու սարքավորումների ձեռքբերումը, լայն սպառման առարկաների արտադրության և բնակչության համար ծառայությունների կազմակերպումը, անհատական բնակարանային շինարարությունը և այլն[45]: Երկարաժամկետ վարկը տրամադրվում է հաշվի առնելով ծախսերի հատուցումը վարկավորման ժամկետում: Կարճաժամկետ վարկերի համեմատությամբ, երկարաժամկետ վարկերը ապահովել են ավելի արագ տեմպ, ինչի մասին վկայում են ներքոբերյալ վիճակագրական տվյալները.

[45] Довбенко М., Довбенко Е. Современная теория портфельных инвестиций. “Экономика Украины” № 4, 2005, էջ 21.

Աղյուսակ 1.* ՀՀ առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության

	2018թ.					
	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	**օգոստոս**
ամսվա վերջի դրությամբ՝ (մլն ՀՀ դրամ)						
Վարկեր՝ ընդամենը	2718894	2719825	2844366	2876433	2907838	**2932538**
այդ թվում՝						
1. Վարկային ներդրումներ	**2587441**	**2596311**	**2644321**	**2732677**	**2774924**	**2811056**
Վարկեր արտարժույթով	1619677	1620448	1658332	1699469	1645262	**1651043**
այդ թվում՝ կարճաժամկետ	299498	291451	296012	296471	277292	**275774**
երկարաժամկետ	1320179	1328997	1301680	1372998	1367970	**1375269**
Վարկեր ՀՀ դրամով	967765	974488	990244	1063209	1129662	**1160014**
այդ թվում՝ կարճաժամկետ	134654	139211	141258	155828	190471	**187967**
երկարաժամկետ	833110	835277	848986	907380	939191	**972047**
2. Բանկերի երկարաձգված վարկեր	**98505**	**101447**	**106584**	**108287**	**96153**	**84281**
այդ թվում՝ կարճաժամկետ	68968	74552	84665	74374	62550	**51974**
Երկարաժամկետ	29537	26895	21919	33913	33604	**31307**
ժամկետանց վարկային ներդրումներ	1.8	1.9	2.1	2.1	2.2	**2.2**
3. Բանկերի ժամկետանց վարկեր	**32948**	**37665**	**36127**	**35468**	**36760**	**37201**
այդ թվում՝ կարճաժամկետ	10574	11201	12744	13031	12108	12912
երկարաժամկետ	22374	21147	22058	22437	24652	24289

* **Աղբյուրը՝** ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-օգոստոսին https://www.armstat.am/am/?nid=82&id=2072

Ինչպես վկայում են աղյուսակում բերված տվյալները, երկարաժամկետ վարկերի բարձր տեսակարար կշիռն ընդհանուր վարկային ներդրումներում ակնհայտ է, ինչը դրական երևույթ է և ուղղված է տնտեսության իրական հատվածի զարգացմանը երկարաժամկետ հատվածում:

- Վարկային շուկայի գործունեության արդյունավետության բարձրացման կարևոր գրավականներից է այլընտրանքային վարկային գործառնությունների գործիքակազմի հետագա զարգացումը, ինչը, ցավոք, մեր հանրապետությունում ընթանում է ոչ արագ տեմպերով: Ավանդական /դասական/ վարկային գործառնությունները խոր արմատներ են գցել մեր առևտրային բանկերի պահպանողական վարքագծում, ինչը էապես խոչընդոտում է ինչպես միջազգային ֆինանսավարկային կառույցներին ՀՀ բանկերի ինտեգրման գործընթացի արագացմանը, այնպես էլ, վերջին հաշվով, կաշկանդում է բանկերի ներուժային հնարավորությունները վարկային գործառնությունների հետագա զարգացման գործընթացում: Այս մասին են վկայում հետևյալ վիճակագրական տվյալները.

Գծանկար 1.* ՀՀ առևտրային բանկերի այլ վարկային գործառնությունների գործիքակազմը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ



* **Աղբյուրը՝** ՀՀ ԿԲ-ի տեղեկագիր /2018թ./, էջ 67 https://www.cba.am/am/SitePages/statspmonthlybulletin.aspx

Գծանկար 1-ից երևում է, որ ներկայումս ՀՀ առևտրային բանկերի այլընտրանքային վարկային գործառնությունների համակազմից առկա են ակրեդիտիվներով իրականացվող գործարքները, բանկային երաշխիքների տրամադրումը, ինչպես նաև լիզինգային և ֆակտորինգային գործառնությունները: Վերջիններիս տեսակարար կշիռն ամենացածրն է վարկային գործառնություններում, այն համապատասխանաբար 0.8

և 0.1%: Լիզինգային գործառնությունների նման ցածր մակարդակը պայմանավորված է ինչպես այս բնագավառում վարկային կազմակերպությունների առավել ակտիվ գործունեությամբ, այնպես էլ՝ ֆինանսական վարձակալության շուկայի թերզարգացվածությամբ:

- Վարկային շուկայի կառավարման հաջորդ կարևոր հիմնախնդիրներից է վարկերի կենտրոնացվածությունը՝ ըստ տնտեսության ոլորտների և տարածաշրջանների:

ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված դրամային և արտարժութային վարկերի ծավալն ու դինամիկան՝ ըստ տնտեսության համապատասխան ոլորտների, ունի հետևյալ տեսքը.

Աղյուսակ 2.* ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված դրամային վարկերի ծավալն ու դինամիկան՝ ըստ տնտեսության համապատասխան ոլորտների 2016թ. հունվար-մայիս ամիսների կտրվածքով

	2018թ. /մլն ՀՀ դրամ/				
	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս
Արդյունաբերություն	85412	86093	92196	98530	103080
Գյուղատնտեսություն	60660	62292	64488	64775	65795
Շինարարություն	28187	28208	36018	38814	40666
Տրանսպորտ և կապ	16726	14386	14578	13778	13781
Առևտուր	72845	72887	78206	78332	78309
Սպասարկման ոլորտ	46315	47765	53302	54442	55154
Սպառողական վարկեր	453130	467020	481648	517951	524013
Հիպոթեքային վարկեր	115292	117287	120237	123188	126020
Այլ	96785	99739	99006	101318	101843
Ընդամենը	***975353***	***995678***	***1039680***	***1091129***	***1108662***

* **Աղբյուրը՝** ՀՀ ԿԲ-ի տեղեկագիր /2018թ https://www.cba.am/am/SitePages/statmonetary-financial.aspx

ՀՀ առևտրային բանկերի կողմից տնտեսության ոլորտներին տրամադրված դրամային վարկերի ամենաբարձր մասնաբաժինն ունեն տնային տնտեսություններին տրամադրված սպառողական վարկերը, որոնց տեսակարար կշիռը ընդհանուր վարկային ներդրումներում 2018թ.

հունիսի 1-ի դրությամբ կազմել է 49,5%: Երկրորդ հորիզոնականում են հիփոթեքային վարկերը՝ 12.5%, իսկ երրորդ տեղում են արդյունաբերության ոլորտին տրամադրված վարկերը՝ 8.7%:

Պատկերը փոքր ինչ այլ է արտարժութային վարկերի պարագայում: Այստեղ ամենաբարձր մասնաբաժինը պատկանում է արդյունաբերության ոլորտին տրամադրված վարկերին՝ 23.9: Երկրորդ և երրորդ հորիզոնականներն զբաղեցնում են սպասարկման և գյուղատնտեսության ոլորտներին տրամադրված վարկերը՝ համապատասխանաբար 12.4 և 7.7%:

- Վարկային շուկայի գործունեության արդյունավետության բարձրացման և կառավարման կատարելագործման համապարտադիր պայման է վարկային երկրորդային շուկայի զարգացումը, որը ներկայումս մեր հանրապետությունում գտնվում է սաղմնային վիճակում: Որոշ տնտեսագետներ վարկային երկրորդային շուկայի ակտիվ մասնակիցներ են դիտարկում վարկային կազմակերպություններին, սակայն դա այդպես չէ: Վարկային երկրորդային շուկայի զարգացման առաջնահերթ պայմանը, մեր կարծիքով, ՀՀ-ում հիփոթեքային արժեթղթերի շուկայի կայացումն է: Վերջինս պետք է դառնա կապակցող օղակ առաջնային հիփոթեքային շուկայի փոխառուների և փոխատուների միջև՝ ապահովելով համապատասխան դրամական միջոցների կուտակումն ու ֆինանսական հոսքերի նպատակաուղղումը դեպի հիփոթեքային վարկեր: Հիփոթեքային արժեթղթերի երկրորդային շուկան ևս պայմանականորեն կարելի է բաժանել առաջնային և երկրորդային շուկաների: Առաջնային շուկայում տեղի կունենա հիփոթեքային արժեթղթերի առաջնային տեղաբաշխումը վարկառուների միջև, իսկ երկրորդային շուկայում կապահովվի դրանց շրջանառությունը:

Հիփոթեքային արժեթղթերի երկրորդային շուկայի կայացման շնորհիվ կձևավորվի համախառն լրացուցիչ վարկային պորտֆել: Միակ խնդիրը, թերևս, շուկայի որոշ սուբյեկտների կողմից ռեսուրսների արժեքի ինքնակամ բարձրացման վտանգը կարող է լինել: Սակայն պատշաճ վերահսկողության իրականացման դեպքում հիփոթեքային արժեթղթերի երկրորդային շուկան հիփոթեքային արժեթղթերի առավել բարձր իրացվելիության շնորհիվ կապահովի դրանց պահանջարկի բարձրացումը, ինչն այսօր անհրաժեշտ գրավական է ՀՀ վարկային շուկայի կառավարման կատարելագործման տեսանկյունից:

Հիփոթեքային արժեթղթերի երկրորդային շուկայի առաջարկվող կազմակերպական կառուցվածքը կունենա հետևյալ տեսքը.

Գծանկար 16. **Հիփոթեքային արժեթղթերի երկրորդային շուկայի առաջարկվող կազմակերպական կառուցվածքը**



- ՀՀ տնտեսությունում էական սպառնալիք է տնտեսության չափազանց դանդաղ նվազող ստվերային հատվածը, որը շարունակաբար դժվարություններ է ստեղծելու վարկային ռիսկի գնահատման, վարկային պորտֆելի ընդլայնման համար:

Հայաստանն աշխարհի խոշորագույն ստվերային տնտեսություն ունեցող երկրների մեջ 18-րդն է: Այս մասին է վկայում **Bloomberg Business-week**-ը, ըստ որի՝ ՀՀ-ում ստվերային տնտեսությունը 51.7% է:

Bloomberg-ի ստվերային երկրների ցանկը գլխավորում է Վրաստանը՝ ստվերի 72.5% ցուցանիշով: Նրան հետևում է Բոլիվիան՝ 70.7% ստվերով: Ադրբեջանն այս ցուցակում զբաղեցնում է 3-րդ տեղը՝ 69.6 %: ԱՊՀ երկրներից ցուցակում հայտնվել են նաև Ուկրաինան՝ 6-րդ տեղ և 58.1 %, Բելառուսը՝ 15-րդ տեղ և 53.0%, ՌԴ-ն՝ 16-րդ տեղ և 52.0 %[46]:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է փաստել. վարկային շուկայի հետագա զարգացումն ու շուկայի կառավարման կատարելագործման կառուցակարգերի մշակումը հույժ կարևոր նշանակություն ունի: Խնդրի արդիականությունը և կարևորությունն այն է, որ տնտեսության տարբեր հատվածներում և ոլորտներում առկա վարկային, իրացվելիության և այլ զուտ բանկային ռիսկերի համալիր ուսումնասիրությունը թույլ կտա ավելի լայն պատկերացում կազմել տնտեսության իրական հատվածում տեղ գտած զարգացումների և հիմնախնդիրների, տնտեսության տարբեր ոլորտների և ֆինանսական հատվածի միջև գործող կապերի և

[46] http://www.bloomberg.com/markets.

ֆինանսական կայունության ընդհանուր պատկերի մասին, ինչպես նաև կբարձրացնի դրամավարկային քաղաքականության տարբեր չափորոշիչների կանխատեսման արդյունավետությունը: Այդ ուսումնասիրությունների հիման վրա հնարավոր կլինի մշակել ինչպես իրական, այնպես էլ ֆինանսական տարբեր հատվածներում վարկային ռիսկերի հայտնաբերման, կանխարգելման, ինչպես նաև այդ ռիսկերից հնարավոր կորուստների նվազեցման նոր և ավելի արդյունավետ մեթոդներ և վարկային շուկայի կառավարման կատարելագործման կազմակերպական հանձնարարականներ:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայկ Մնացականյան
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ
ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
h.mnatsakanyan@ysu.am

Հայաստանի Հանրապետությունը թևակոխել է զարգացման շրջադարձային նոր փուլ: Տնտեսական զարգացմանը նոր շունչ հաղորդելու համար խիստ կարևոր է հետևողականորեն լուծել առաջ քաշված խնդիրները՝ ունենալով տնտեսության զարգացման ռազմավարական հավակնոտ ծրագիր: Տվյալ ծրագրի կազմմանը, հետագա արդյունավետ իրագործմանը էական մասնակցություն կարող է ունենալ ՀՀ-ում առկա գիտական ներուժը: Ծրագրի հիմնական նպատակը պետք է լինի մոտակա ապագայում կայուն զարգացող տնտեսություն ունենալը: Անհրաժեշտ է նշել նաև, որ սպասվելիք արդյունքը պետք է լինի հստակ գնահատելի, իսկ իրականացման ընթացքը վերահսկելի՝ հիմք ընդունելով արդյունավետության չափանիշները:

Գաղտնիք չէ, որ կայուն զարգացող տնտեսական համակարգ ձևավորելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ունենալ գրավիչ ներդրումային միջավայր, որը երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման հիմնական գրավականն է: Ներդրումային միջավայրը համալիր հասկացություն է և բնորոշվում է որպես տնտեսական, քաղաքական և կարգավորիչ միջավայր, որը տնտեսությունում ապահովում է ներդրումների ներգրավման համար բազմաթիվ գործառույթների ամբողջություն: Բարենպաստ ներդրումային միջավայրն անհրաժեշտ է ինչպես օտար երկրյա, այնպես էլ ներքին ներդրումների, տնտեսական աճի խթանման համար՝ ստեղծելով նոր աշխատատեղեր, նպաստելով բնակչության եկամուտների ավելացմանը և կենսամակարդակի բարձրացմանը:

ՀՀ-ում հաստատված ներդրումային քաղաքականության հայեցակարգը առանձնացնում է ներդրումների ռազմավարական հիմնական ոլորտներ, այն է՝ բարձր տեխնոլոգիաներ, հանքարդյունաբերություն և մետալուրգիա, ֆինանսական միջնորդություն, զբոսաշրջություն, ադամանդագործություն և ոսկեգործություն, առողջապահություն և կրթություն, գյուղատնտեսություն և այլն: ՀՀ զուտ ներդրումային դիրքը բացասական է, ինչը նշանակում է, որ մեր հանրապետությունը ներդրումներ ընդունող

երկիր է: Ընդհանրացնելով վերջին տասնամյակում օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները՝ կարելի է նշել, որ ՀՀ-ում իրական հատվածում կատարված համախառն ներդրումների ծավալով Ռուսաստանին է բաժին ընկնում ներդրումների զգալի մասը: Իրական հատվածում կատարված համախառն ներդրումների ծավալով իրենց ուրույն տեղն ունեն նաև Եվրամիության որոշ երկրներ: Ըստ ճյուղային կառուցվածքի իրականացված օտարերկրյա ուղղակի ներդրումների հիմնական ոլորտներն են՝ էլեկտրաէներգիայի մատակարարում, հանքարդյունաբերություն, տեղեկատվություն և կապ, մշակող արդյունաբերություն, գյուղատնտեսություն և այլն:

Ներդրումային գրավիչ, բարենպաստ միջավայրի ձևավորմանը էապես նպաստում է մի կողմից մեր երկրի մրցակցային առավելությունների ներկայացումը ու դրանց հետևողական ներառումը զարգացման ծրագրերում, մյուս կողմից առկա խնդիրների բացահայտումը և դրանց ժամանակին լուծումը: Չցանկանալով ծանրաբեռնել սույն հոդվածը ներդրումների ծավալների և ուղղությունների վերաբերյալ բազմաթիվ վիճակագրական տվյալներով, առավելապես կներկայացվեն առկա խնդիրները, որոնց լուծմանը թեկուզ մեկ օր առաջ ուղղված միջոցառումներն առավել քան կարևոր են:

Նորույթ չէ, եթե նշենք այն փաստը, որ ներդրումները հոսում են այնտեղ, որտեղ կա կայունություն և շահութաբերություն: Հետևաբար, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումային միջավայրի բարելավման առաջնահերթ խնդիրներից է տնտեսական և քաղաքական կայունության ապահովումը: Քաղաքական կայունությունը կախված է հարևան երկրների հետ հարաբերություններից, պատերազմական վիճակի առկայությունից կամ դրա հնարավորությունից և քաղաքական ուժերի կառուցողական հարաբերություններից: Կայունության հետ խնդիրներն առնչվում են նաև իրավական, օրենսդրական դաշտի կատարելագործմանը: Դեռևս չանդրադառնալով տնտեսական օրենսդրության հետ կապված խնդիրներին, նշենք, որ ներդրումային միջավայրի բարելավմանն էապես նպաստում է անկախ և արդար դատական համակարգի առկայությունը և, որ շատ կարևոր ու արդիական է, կոռուպցիայի բացակայությունը՝ իր դրսևորման ուղղակի և անուղղակի ձևերով: Անկախ և արդար դատական համակարգը, կոռուպցիայի բացակայությունը կարևոր գործոն են ներդրողների իրավունքների արդյունավետ պաշտպանության գործում: Տնտեսական գործունեության վերաբերյալ օրենսդրությունը ներառում է ներդրումային գործունեության իրավական բազմաթիվ շրջանակներ, որոնք արտացոլված են արժեթղթերի շուկայի, բաժնետիրական ընկերությունների, ինովացիոն

գործունեության պետական աջակցության, ներդրումային ֆոնդերի, ակտիվների արժեթղթավորման մասին և բազմաթիվ այլ օրենքներում: Բայց ՀՀ-ում գործող կազմակերպություններին առաջնահերթ մտահոգում են հարկային և մաքսային օրենսդրությունները: Եթե մաքսային օրենսդրությունը հիմնականում միասնական է ԵԱՏՄ տարածքի երկրների համար, ապա հարկային օրենսդրության կարգավորման առումով ԵԱՏՄ երկրները բավականաչափ անկախություն ունեն: Համաձայն միջազգային կազմակերպությունների զեկույցների՝ ՀՀ հարկային օրենսդրությունը, ի համեմատություն այլ երկրների, վատը չէ: Խնդիրներն առավելապես ի հայտ են գալիս հարկային վարչարարության, հարկահավաքման արդյունավետության բարձրացման և տնտեսության ստվերայնության նվազմանն ուղղված գործառույթներում: Այդ առումով պետք է նշել նաև հետևյալը, որ հարկային օրենսդրության պարբերաբար փոփոխությունը լուրջ խնդիր է մեզանում և որևէ կերպ չի կարող նպաստել ներդրումային կայուն դաշտի ձևավորմանը: Յուրաքանչյուր փոփոխություն, թեև կոչվում է բարեփոխում, ըստ էության, փոխում է տնտեսական միջավայրի խաղի կանոնները, անորոշության ու անվստահության մթնոլորտ է առաջացնում ներդրողների մոտ: Ավելին, փոփոխությունների ազդեցությունը դեռևս չարձանագրած, կատարվում են նոր փոփոխություններ: Այդ բարեփոխումները մշակելիս ՀՀ-ում առկա գիտական ներուժի օգտագործումը էապես կարող է նպաստել դրանց հիմնավորման և կիրառման արդյունավետության բարձրացմանը: ՀՀ ներդրումային միջավայրի գրավչության բարձրացման տեսանկյունից խիստ կարևորվում է կայուն ու կանխատեսելի տնտեսական քաղաքականության վարումը, որը պետք է ապահովի նաև հավասար մրցակցային պայմաններ տնտեսության բոլոր սուբյեկտների համար: Չնայած վերջին ժամանակաշրջանում էական միջոցառումներ իրականացվեցին շուկայի մրցունակության բարձրացման և հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղղությամբ, սակայն դեռևս տնտեսական գործունեության մրցակցային միջավայրը ակնհայտորեն բարելավման կարիք ունի: Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ են առավել գործուն վերահսկողական գործիքներ, քան գերիշխող դիրքի բացահայտման դեպքում տուգանքների նշանակումը: Տնտեսության արագընթաց զարգացման, հասարակության բարեկեցության բարձրացման համար հավասար մրցակցային պայմաններով և հնարավորություններով տնտեսության հիմնումը այլընտրանք չունի: Տնտեսվարող սուբյեկտների մրցակիցների առկայությունը, մատակարարների բազմազանությունը բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման

կարևորագույն գործոն են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին ներդրումների համար:

ՀՀ ներդրումային միջավայրի բարելավման խնդիրները դիտարկելիս կարևոր է անդրադառնալ նաև ներքին ներդրումների ներգրավման հետ կապված հարցերին: Իհարկե, ինչպես արտաքին, այնպես էլ ներքին ներդրումների խթանման խնդիրները հիմնականում համընկնում են, բայց կան նաև որոշակի առանձնահատկություններ: Համաշխարհային պրակտիկայում ներդրումային ճգնաժամ է համարվում այն իրավիճակը, երբ կազմակերպությունների և բնակչության կողմից իրականացվող ներդրումները կտրուկ նվազում են: Ըստ կիրառվող մեթոդաբանության՝ ճգնաժամային է համարվում ներդրումների այն մակարդակը, որը ցածր է ՀՆԱ-ի մոտ 20-25%-ից: ՀՀ-ում անկախացումից ի վեր նշված ցուցանիշը միայն որոշ տարիներին է ցուցաբերել դրական դինամիկա, բայց վերջին տարիներին այն դրսևորել է հակառակ միտումը: Նշված խնդրի լուծումը պահանջում է հարկաբյուջետային, դրամավարկային և սոցիալական քաղաքականությունների փոխհամաձայնեցում, որի արդյունքում կարող ենք ակնկալել խնդրի լուծմանն ուղղված քայլերի արդյունավետություն միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում: Ակնհայտ է, որ ներքին ներդրումների խթանման համար անհրաժեշտ են համապատասխան ֆինանսական ռեսուրսներ: Կապիտալ ներդրումները կարող են ֆինանսավորվել հետևյալ աղբյուրների հաշվին. սեփական միջոցների՝ շահույթի, սեփական կապիտալի, պահուստային ֆոնդի, փոխառու ֆինանսական միջոցների՝ բանկային վարկերի, բյուջետային վարկերի և այլնի, ներգրավված ֆինանսական միջոցների՝ պարտատոմսերի թողարկման, բաժնեմասային և այլ վճարների, արժեթղթերի վաճառքի և այլնի: Կազմակերպությունների շահույթի գեներացումը ուղղակիորեն կապված է նաև հարկային քաղաքականության հետ, որի բարելավման վերաբերյալ դիտարկումների մի մասը վերը ներկայացվեցին: Իսկ փոխառու միջոցներից կարելի է առանձնացնել վարկային միջոցները, որոնք լայնորեն կիրառվում են ներդրումներ իրականացնելիս ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում: Ակնհայտ է այն փաստը, որ որքան ռեսուրսը մատչելի է, այնքան այն գրավիչ է: Վարկային միջոցների մատչելիությունը ենթադրում է հիմնականում երկու խնդրի կարգավորում: Առաջին խնդիրը կապված է վարկերի ստացման գործընթացի կարգավորման և ապահովության միջոցի՝ գրավի առկայության հետ: Այս առումով պետք է նշել, որ ՀՀ կենտրոնական բանկը բավարար չափով աջակցում է ՀՀ առևտրային բանկերին նշված գործընթացը իրականացնել պարզ և թափանցիկ: Կարծում եմ, որ միջնաժամկետ հատվածում

վարկավորման մշակույթի զարգացման, ռիսկերի ճիշտ վերլուծության և գնահատման արդյունքում հնարավորություն կունենանք վերացնել գրավ հասկացությունը՝ այդպիսով տարբերակելով բանկերը գրավատներից: Փոխառու միջոցներով ֆինանսավորման երկրորդ խնդիրը վերաբերում է վարկային ռեսուրսի էժանացմանը, որը իրենից ենթադրում է ցածր վարկային տոկոսադրույք: Մասնագիտական ոլորտում իրականացված հետազոտությունները ցույց են տալիս, որ վարկային տոկոսադրույքի մեծության վրա տոկոսադրույքի բաղադրիչներից առավելապես ազդում են հետևյալները՝ ներգրավված միջոցների տոկոսադրույքը, գնաճի մեծությունը և տնտեսական գործունեության գնահատված ռիսկի աստիճանը: Եթե առաջինը գտնվում է առևտրային բանկերի և ավանդատուների փոխհամաձայնության շրջանակում, ապա գնաճի մեծությունը և տնտեսական ռիսկի աստիճանը ուղղակիորեն առնչվում է ՀՀ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականություններին:

Անհրաժեշտ է նշել նաև այն փաստը, որ ներդրումային միջավայրի բարելավումը ուղղակիորեն կախվածություն ունի նաև բնակչության եկամուտների մակարդակից: Առանց սպառման շուկայի ձևավորման և զարգացման հնարավոր չէ խնդիրը համարել կարգավորված: Բնակչության եկամուտների մակարդակի բարձրացմանը նպաստող քաղաքականության արդյունավետության արտացոլման ցուցանիշ է համարվում ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը: Այնպիսի հարկային քաղաքականությունը, որի արդյունքում կարող ենք արձանագրել ՀՀ-ում հավաքագրված ուղղակի հարկերի գումարային ցուցանիշի գերակայությունը անուղղակի հարկերի ցուցանիշի նկատմամբ, էապես կարող է նպաստել տնտեսության ստվերայնության նվազմանը և բնակչության եկամուտների ավելացմանը:

Ընդհանրապես, ինչպես երկրի տնտեսական զարգացման, այնպես էլ ներդրումային միջավայրի բարելավման համար խիստ կարևոր և որոշիչ է ինչպես ռեսուրսների առկայությունը, այնպես էլ դրանց արդյունավետ օգտագործումը: Բոլորս գիտենք, որ ՀՀ-ում բնական ռեսուրսները սակավ են, բայց երկիրը հարուստ է գիտական ներուժով՝ ինտելեկտուալ կապիտալով: Ուստի, խիստ կարևոր է նախ համախմբել, այնուհետև արդյունավետորեն օգտագործել տվյալ ռեսուրսը ՀՀ տնտեսական զարգացման ռազմավարական և ընթացիկ խնդիրները լուծելիս: Համոզված եմ, որ շատ շուտով այս դարաշրջանը դառնալու է ինտելեկտուալ մարդու դարաշրջան:

ՓՈԽԱԴԱՐՁ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵԱՏՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ. ՀԵՏԱՀԱՅԱՑ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իրինա Պետրոսյան
ՀՌՀ տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի
տնտեսության հիմնախնդիրների ամբիոն
ՀՀ և ՌԴ տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ
irina.petrosyan@rau.am

2015 թվականին հետխորհրդային տարածաշրջանի հինգ երկրների կողմից ստեղծված Եվրասիական տնտեսական միությունը (Ռուսաստանի Դաշնություն, Բելառուսի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետություն, Ղազախստանի Հանրապետություն և Ղրղզստան), համաշխարհային տնտեսության կարևորագույն ինտեգրացիոն միավորումներից մեկն է:

Համաձայն մի շարք ցուցանիշների (բնակչության թվաքանակը, ՀՆԱ, արդյունաբերական արտադրանքի ծավալը, արտաքին առևտրի ծավալը, հումքային ռեսուրսների պաշարները, այդ թվում՝ էներգակիրներ և այլն) ԵԱՏՄ աշխարհում գրավիչ դիրքեր է զբաղեցնում: Այնուամենայնիվ, ինչպես հայտնի է, ԵԱՏՄ-ում առկա է այդ ցուցանիշների բաշխման անհամապատասխանություն, քանի որ միությանը անդամակից երկրների տնտեսությունները մասշտաբներով արմատապես տարբերվում են միմյանցից, և, կա առաջատար երկիր՝ Ռուսաստանի Դաշնությունը, որի ներկայության աստիճանը ի սկզբանե այնքան էական է, որ տվյալ պահին տնտեսական միության ստեղծումը չի տալիս սպասված արդյունքներ:

ԵԱՏՄ-ի առանձնահատկությունն այն է, որ չնայած ապրանքների և ծառայությունների, աշխատուժի և կապիտալի շարժի խոչընդոտների աստիճանական վերացմանը, չի առաջանում պատրաստի արտադրանքի և ռեսուրսների տեղաշարժման զգալի ակտիվացում: Ինչպես հայտնի է, կապիտալի ազատ տեղաշարժի վրա ազդում են տնտեսական աճը, ընդհանուր մակրոտնտեսական հավասարակշռությունը, փոխարժեքը, տոկոսադրույքի մեծությունը, և, համապատասխանաբար, դրանք կարող են հանգեցնել պետության կողմից վարվող մակրոտնտեսական քաղաքականության փոփոխությունների և ազդել դրա արդյունքների վրա: Այնուամենայնիվ, դրա համար պահանջվում է, որ կապիտալի ազատ տեղաշարժը իրականում հանգեցնի ինտեգրվող երկրների միջև կապիտալի հոսքերի աշխուժացմանը և աճին:

Ինչպես նշվեց, ՌԴ-ն ԵԱՏՄ-ում գերիշխող տնտեսություն է, իսկ մյուս երկրների միջև տնտեսական կապերը շատ ավելի թույլ են: Սա հաստատում

Աղյուսակ 1. **ԵԱՏՄ երկրներում ՌԴ ՕՈՒՆ-ի դինամիկան, միլիարդ ԱՄՆ դոլար[1] [8]**

Երկիր	2009		2010		2011		2012		2013		2014		2015		
	ՓՆՄ ԱՊՀ	ԿԲ ՌԴ	ՓՆՄ ԱՊՀ	ԿԲ ՌԴ	ՓՆՄ ԱՊՀ	ԿԲ ՌԴ	ՓՆՄ ԱՊՀ	ԿԲ ՌԴ	ՓՆՄ ԱՊՀ	ԿԲ ՌԴ	ՓՆՄ ԱՊՀ	ԿԲ ՌԴ	ՓՆՄ ԱՊՀ	ԿԲ ՌԴ	
Հայաստան	2.0	1.5	2.2	1.8	2.4	1.4	2.6	1.6	2.8	1.4	3.0	1.5	3.1	1.2	
Բելառուս	4.6	5.7	5.9	5.7	8.0	4.7	8.4	3.9	8.3	4.1	8.5	4.5	8.3	3.6	
Ղազախստան	9.7	1.7	9.3	2.0	10.1	2.6	10.2	2.5	8.7	2.8	8.8	2.7	7.1	2.4	
Ղրղզստան	0.4	0.1	0.6	0.1	0.6	0.1	0.7	0.2	0.7	0.2	0.7	0.2	0.8	0.2	
Ընդհանուր ԵՏՄ-ում	**16.7**	**9.5**	**18**	**9.6**	**21.1**	**8.8**	**21.9**	**8.2**	**20.5**	**8.5**	**21**	**8.9**	**19.3**	**7.4**	

[1] Կազմված է հեղինակի կողմից ՌԴ ԿԲ (www.cbr.ru) և Եվրասիական զարգացման բանկի կողմից հրապարակվող «Փոխադարձ ներդրումների մշտադիտարկումը ԱՊՀ երկրներում 2016 թվականին», տվյալների հիման վրա: Զեկույց № 39.

է ՌԴ ներդրողների կողմից ԵԱՏՄ-ի երկրներում իրականացվող օտարերկրյա ուղղակի ներդրումների պաշարների վերլուծությունը: Հատկանշական է, որ ՌԴ ԿԲ և Եվրասիական զարգացման բանկի կողմից իրականացվող նշված ցուցանիշի գնահատումները զգալիորեն տարբերվում են:

Չնայած, Եվրասիական զարգացման բանկից և ՌԴ ԿԲ-ից ստացված գնահատականների զգալի տարբերությանը, ուշագրավն այն է, որ 2015 թվականին ԵԱՏՄ երկրներում կուտակված օտարերկրյա ուղղակի ներդրումների ընդհանուր ծավալը նվազել է: Հատկանշական է նաև, որ, եթե մինչև 2014 թվականը ԵԶԲ-ի գնահատականները ունեն դրական միտում, ապա ՌԴ ԿԲ ցուցանիշը անընդհատ տատանվում է և չունի հստակ աճի միտում:

Չնայած այն հանգամանքին, որ ՌԴ-ն ԵԱՏՄ երկրների տնտեսություններում խոշորագույն ներդրողն է, իրականում ԵԱՏՄ-ում ներդրումների տեսակարար կշիռը ՌԴ-ից ներդրումների ընդհանուր ծավալում աննշան է: *Գծապատկեր 1*-ում ներկայացված է ՌԴ ներդրումների մասնաբաժնի դինամիկան ԵԱՏՄ երկրների ներդրումների ընդհանուր ծավալում:

Ինչպես պատկերված է նկարում, 2015թ. ամենահաջող տարին էր, որից հետո ԵԱՏՄ երկրներում ներդրումների մասնաբաժինը ներդրումների ընդհանուր ծավալում նվազեց 5.2%-ով: Ուսումնասիրության ընթացքում առավելագույն արժեքը եղել է 7,7% -ով:



Գծապատկեր 1. **2010-2017թթ. ԵԱՏՄ երկրներում ՌԴ ներդրումների մասնաբաժնի դինամիկան ներդրումների ընդհանուր ծավալում[47][9]**

[47] Կազմված է հեղինակի կողմից Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տվյալների բազայի հիման վրա, www.eurasiancommission.org.

Ինչ վերաբերում է ԵԱՏՄ երկրներից դեպի ՌԴ տնտեսություն ներդրումների մասնաբաժնին, պատկերն այստեղ նմանատիպ է (*գծապատկեր 2*):

ԵԱՏՄ երկրներից ներդրումների տեսակարար կշիռը չափազանց աննշան է, ինչը պայմանավորված է ինչպես ՌԴ տնտեսության մասշտաբով, որում շատ մեծ քանակությամբ օտարերկրյա ներդրումներ են գալիս, այնպես էլ ԵԱՏՄ մյուս երկրների ներդրումային փոքր ներուժով: Կարևոր է նշել, որ 2015 թվականին ցուցանիշի աճը մինչև 7,5% է, որը պայմանավորված է ոչ թե ներդրումների ծավալի նշանակալի աճով, այլ տարածաշրջանային ճգնաժամի և տնտեսական պատժամիջոցների կիրառման պատճառով ՌԴ արտահանումների կտրուկ անկմամբ:



Գծապատկեր 2. **ԵԱՏՄ երկրներից դեպի ՌԴ ներդրումների դինամիկան, 2010-2017թթ. [9]**

Ինչ վերաբերում է ԵԱՏՄ մյուս երկրների միջև փոխադարձ ներդրումներին, դրանց ծավալները փոքր են, ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական ցուցանիշներով: Դա պայմանավորված է նախնական թույլ տնտեսական հարաբերությունների և փոխադարձ ներդրումներ կատարելու՝ ներդրողների համար գրավիչ ոլորտների բացակայության պատճառով: *Աղյուսակ 2-ը* ցույց է տալիս, 2010 և 2016 թվականներին ԵԱՏՄ երկրներում փոխադարձ ներդրումների համեմատությունը՝ այս վարկածը հաստատելու համար:

Աղյուսակ 2. **ԵԱՏՄ անդամ երկրների փոխադարձ ներդրումները 2015 թվականին, մլն դոլար [8]**

Ռեցիպիենտ / Դոնոր	Հայաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղզստան	Ռուսաստան
Հայաստան	X	10	0	0	3
Բելառուս	0	X	34	0	204
Ղազախստան	8	53	X	695	3367
Ղրղզստան	0	4	0	X	0
Ռուսաստան	3056	8297	7095	811	X

Վերոնշյալ աղյուսակում ցույց է տրված, որ ԵԱՏՄ երկրների տնտեսություններում ամենաակտիվ ներդրողը ՌԴ է, կա նաև ներդրումային ակտիվություն Ղազախստանի և Ղրղզստանի միջև, որտեղ միակողմանի ուղղությամբ Ղրղզստանը հանդիսանում է ռեցիպիենտ: Ամենաթույլ փոխադարձ կապերը Հայաստանի և Ղրղզստանի, Հայաստանի և Ղազախստանի միջև են: Հաշվի առնելով մնացած ցուցանիշները, կարելի է ասել, որ ինտեգրման սկզբում միավորված երկրների միջև ներդրումների առումով որևէ նշանակալի փոխհարաբերություններ չեն եղել: Եթե մենք ուշադրություն դարձնենք 2016 թվականի տվյալներին, ապա պատկերը գրեթե չի փոխվել: Հայաստանի և Ղրղզստանի միջև չկան փոխադարձ ներդրումներ, Բելառուսից ներդրումներ չեն կատարվել, իսկ ինչ վերաբերվում է Ղազախստանին և Ռուսաստանի Դաշնությանը, զուտ պարտավորությունների ընդունման ցուցանիշը բացասական է, ինչը վկայում է երկրից կապիտալի արտահոսքի մասին:

Ինչ վերաբերում է Հայաստանի տնտեսությանը, որը բնութագրվում է որպես փոքր բաց տնտեսություն, այնուամենայնիվ փոքր է ներքին շուկայի սահմանափակ հնարավորությունների և ռեսուրսների ցածր առկայության պատճառով: Չնայած գործարարության հեշտացման բարձր վարկանիշային ցուցանիշներին, Հայաստանը բնութագրվում է երկրի բարձր ռիսկով: Տարածաշրջանում հիմնական ներդրողը շարունակում է մնալ ՌԴ-ն, սակայն ՕՈՒՆ-ը հիմնականում իրականացվում են ՌԴ խոշոր անդրազգային ընկերությունների կողմից միայն տնտեսության որոշ ոլորտներում, ինչպիսիք են՝ հեռահաղորդակցությունը, վառելիքաէներգետիկ համալիրը, երկաթուղային ծառայությունները, հանքանյութի արդյունահանումը և վերամշակումը (մասնավորապես՝ գունավոր

մետալուրգիան): Ինչպես երևում է *աղյուսակ 2*-ից, ԵԱՏՄ-ին անդամակցող այլ պետությունների հետ գործնական կապեր գոյություն չունեն: Բելառուսի և Ղազախստանի ուղղակի ներդրումները ներկայացված են միայն մեկ կամ երկու խոշոր նախագծերով, որոնց շահութաբերությունը և արդյունավետությունը պահանջում են լրացուցիչ հետազոտություն:

Վերոնշյալ պատճառներով Հայաստանից ներդրումների ծավալը նույնպես ցածր է: Դա պայմանավորված է խնայողությունների ցածր մակարդակով, ինչպես նաև այն հանգամանքով, որ տնտեսությունը չունի այնպիսի խոշոր ձեռնարկություններ, որոնք կարող են ներդրումներ կատարել արտասահմանյան ձեռնարկություններում:

Միավորված երկրների տնտեսությունները տարբեր են և բազմազանեցված չեն:

Հայաստանի ֆինանսական շուկաները փոքր ծավալներ ունեն և զարգացած չեն, ինչն էլ ավելի է բարդացնում ներդրումային գործընթացները:

Հայաստանի տնտեսությունը ունի բարձր ռիսկեր, և վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ դրանք բնութագրվում են արժութային ռիսկերի բարձր մակարդակով, որոնց հեջավորման մեխանիզմներ մշակել դեռ չի հաջողվել:

Հայաստանը բնութագրվում է նաև ներդրումների երաշխավորման և ապահովագրության թերզարգացած ինստիտուտներով, ինչը թույլ կտար մասնակիորեն չեզոքացնել երկրի ռիսկերը:

Գրականության ցանկ

1. Balassa, Bela. American Direct Investments in the Common Market // Banca Nazionale del Lavoro Quarterly Review, 77. 1966. pp. 121–146.
2. Dunning, J. H. Toward an eclectic theory of international production: some empirical tests // Journal of International Business Studies, 11. 1980. pp. 9–31.
3. Ietto-Gillies, G. Transnational Corporations and International Production: Concepts, Theories and Effects. // Cheltenham & Northampton: Edward Elgar Publishing. 2005. 288 pages.
4. Kojima, K.., Ozawa, T. Micro- and Macro-Economic Models of Direct Foreign Investment: Toward a Synthesis // In H. P. Gray (Ed.), Transnational Corporations and International Trade and Payments. New York: Routledge. 1993. pp. 63–85.

5. Kreinin, M. E., Plummer, M. G. Effects of regional integration on FDI: An empirical approach // Journal of Asian Economics, 19(5-6), 2008. pp. 447-454.
6. Мониторинг взаимных инвестиций в странах СНГ // Евразийский банк развития. Центр интеграционных исследований. 2016. Доклад №39. 71 стр.
7. Официальный сайт Всемирной торговой организации, www.wto.org
8. Официальный сайт Евразийского банка развития, www.eabr.org
9. Официальный сайт Евразийской экономической комиссии, www.eurasiancommission.org
10. Официальный сайт Центрального банка Российской Федерации, www.cbr.ru
11. Электронный ресурс «Doing Business», http://russian.doingbusiness.org/

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Էդուարդ Սանդոյան
ՀՌՀ տնտեսագիտության և բիզնեսի ինստիտուտի տնօրեն,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
edward.sandoyan@rau.am

Մարիամ Ոսկանյան
Էկոնոմիկայի և ֆինանսների ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
mariam.voskanyan@rau.am

Անի Գալստյան
Էկոնոմիկայի և ֆինանսների ամբիոնի հայցորդ
ani.galstyan@rau.am

Հայաստանում իրականացվող արժութային քաղաքականությունը, հատկապես 2014թ.-ից մինչ օրս, որը նպատակ ունի ապահովել ազգային արժույթի կայուն փոխարժեք՝ չնայած արտարժույթի ներհոսքի ու արտահոսքի կառուցվածքի և մեծության փոփոխություններին, հանգեցրել է երկրի տնտեսության արտահանման ներուժի զգալի կորստի: Մասնավորապես, ԵԱՏՄ մյուս երկրների արժույթների համեմատ հայկական դրամի առավել կայուն փոխարժեքի հասնելու հետևանքով հայրենական ապրանքներն ու ծառայությունները կորցրել են իրենց մրցակցային առավելություններն ընդհանուր եվրասիական շուկայում: Ընդ որում, համապատասխան արժութային քաղաքականությունը, հիմնված ազատ լողացող արժութային փոխարժեքի ռեժիմի վրա, կարող էր ապահովել դեպի ՌԴ արտահանման զգալի աճ, հատկապես Ռուսաստանի Դաշնության նկատմամբ Արևմուտքի կողմից կիրառվող էմբարգոյի քաղաքականության պայմաններում կարող էր հայկական ապրանքների համար նոր հնարավորություններ բացել ռուսական շուկայում, ինչն էլ իր հերթին թույլ կտար չեզոքացնել արժութային փոխարժեքի արժեզրկման բացասական հետևանքները (ինչպես սոցիալական, այնպես էլ ֆինանսական):

Անհրաժեշտ է նաև նշել, որ Հայաստանի Կենտրոնական բանկի անարդյունավետ դրամավարկային քաղաքականության և արժութային կարգավորման պատճառով չհաջողվեց հասնել բնակչության և

ֆինանսական շուկայի մասնակիցների կողմից ազգային արժույթի նկատմամբ վստահության ամրապնդման, ինչի մասին վկայում է բնակչության խնայողությունների, և, ընդհանուր առմամբ, դրամական զանգվածի դոլարացման բարձր մակարդակը:

Եվ, վերջապես, դրամական առաջարկի աճի զսպումը դրամավարկային քաղաքականության մեխանիզմներով, և ազգային արժույթի կայուն փոխարժեքի պահպանումը՝ բանկային արտարժութային պարտավորությունների պարտադիր պահուստավորման աննախադեպ բարձր դրույքների կիրառմամբ, պայմանավորել են տնտեսական աճի տեմպերի դանդաղումը վերջին 9 տարիների ընթացքում, ինչն էլ ավելի է խորացրել 2008-2009թթ. և 2014-2015թթ. համաշխարհային և տարածաշրջանային ճգնաժամերի բացասական հետևանքները Հայաստանի տնտեսության համար:

Ակնհայտ է, որ անհրաժեշտ է վերանայել Հայաստանի արժութային քաղաքականությունը, իսկ համապատասխան մոտեցման մշակման համար, առաջին հերթին, պետք է գնահատել արժութային փոխարժեքի ձևավորման հիմնական գործոնները:

Փոխարժեքի ձևավորման հիմնական գործոնները Հայաստանում

Գոյություն ունեն մի շարք գործոններ, որոնք ազդում են ազգային արժույթի փոխարժեքի ձևավորման վրա: Հայաստանը, լինելով փոքր բաց տնտեսությամբ երկիր, ենթակա է արտաքին գործոնների ազդեցության, այդ թվում նաև արժութային շուկայի տեսանկյունից: Հաշվի առնելով արտահանման գծով Հայաստանի բավականին թույլ դիրքերը, որն էլ, որպես կանոն, դեպի երկիր արտարժույթի ներհոսքի հիմնական ուղիներից մեկն է՝ արտարժույթի ներհոսքի մնացած նշանակալի ուղիներում կարելի է առանձնացնել հետևյալները՝ օտարերկրյա ուղղակի ներդրումներ, օտարերկրյա պաշտոնական և մասնավոր դրամական տրանսֆերտներ:

Հայաստանի տնտեսության առանձնահատկություններից է օտարերկրյա դրամական տրանսֆերտների բարձր նշանակալիությունը, որոնց տարեկան ծավալը միջինում ՀՆԱ-ի շուրջ 20%-ն է: Լինելով ամբողջովին արտածին գործոն՝ օտարերկրյա մասնավոր տրանսֆերտների ներհոսքը հիմնականում կախված է դոնոր երկրներում տիրող տնտեսական իրավիճակից, հետևաբար, զգալիորեն կրճատվում է դրանց ճգնաժամային ժամանակաշրջաններում՝ համապատասխանաբար արտացոլվելով Հայաստանում դրամական ագրեգատների արժութային կառուցվածքի վրա,

և հետևաբար, ուժեղ ազդեցություն ունենալով երկրում արժութային փոխարժեքի ձևավորման վրա:

***Նկ. 1.* Օտարերկրյա մասնավոր տրանսֆերտների ներհոսքն ու արտահոսքը Հայաստանում, եռամսյակային, մլն USD.**



Նկ. 1-ից երևում է, որ մինչև ճգնաժամային 2008թ.-ը դեպի ՀՀ դրամական փոխանցումների ծավալն անընդհատ աճում էր, ինչը բնակչության եկամուտների աճի շնորհիվ դրսևորվում է որպես գնաճային ճնշում սպառողական շուկայի վրա և ստեղծում է Հայաստանի համար ավանդական դարձած «հոլանդական հիվանդության» ռիսկեր: 2009թ.-ի սկզբին դրամական փոխանցումների ներհոսքը կտրուկ կրճատվեց, ինչն առաջին հերթին պայմանավորված էր դոնոր երկրներում տնտեսական ճգնաժամով: Տրանսֆերտների կրճատման ևս մի դեպք դիտարկվեց 2014թ.-ին, որն էլ առաջին հերթին պայմանավորված էր Ռուսաստանում տիրող ճգնաժամային իրավիճակով, որին բաժին է ընկնում դեպի Հայաստան դրամական փոխանցումների գերակշռող մասնաբաժինը: Սակայն օտարերկրյա մասնավոր դրամական տրանսֆերտների դինամիկան միշտ չէ, որ հետևողականորեն արտացոլվում է դրամի փոխարժեքի տատանողականության վրա, ինչը նույնպես վկայում է Հայաստանում արժութային փոխարժեքի ձևավորման արհեստական բնույթի մասին:

Ինչպես հայտնի է, վճարային հաշվեկշռի վիճակն անմիջական ազդեցություն ունի երկրի ազգային արժույթի փոխարժեքի տատանողականության վրա: Առաջին հերթին դա վերաբերում է հենց առևտրային հաշվեկշռին *(նկ.2):*

***Նկ. 2.* Արտահանում և ներմուծում, եռամսյակային, մլն USD**



Աղբյուր: ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների բազա - http://www.cba.am/

Հատկանշական է, որ առևտրային հաշվեկշռի ամենաբարձր պիկը գրանցվել է լավագույն մինչճգնաժամային տարում՝ 2008թ.-ին, որին է վերագրվում նաև մինչ օրս Հայաստանի ՀՆԱ-ի ամենաբարձր ցուցանիշը: Ընդ որում, 2008թ.-ին է գրանցվել նաև 2008-2018թթ. ընթացքում զուտ օտարերկրյա մասնավոր տրանսֆերտների և զուտ օտարերկրյա ուղղակի ներդրումների ամենաբարձր ծավալը: Այսպիսով, բնակչության եկամուտների աճը՝ ի շնորհիվ օտարերկրյա մասնավոր տրանսֆերտների ներհոսքի, կորելացվում է ներմուծման աճի հետ, և հակառակը, զուտ ներհոսքի կրճատումն արտացոլվում է ներմուծման կրճատման վրա (այդպես է եղել, օրինակ, 2009թ., 2015թ., 2016թ. ընթացքում): Հայաստանի տնտեսության արտաքին առևտրային առանձնահատկությունների մանրամասն մեկնաբանության մեջ չխորանալով՝ ընդգծենք առևտրային հաշվեկշռի խիստ կախվածությունը զուտ օտարերկրյա մասնավոր տրանսֆերտների և զուտ օտարերկրյա ուղղակի ներդրումների մեծությունից:

Այսպիսով, Ռուսաստանի Կենտրոնական բանկի կողմից իրականացվող բացահայտ շուկայական քաղաքականության պայմաններում, երբ Հայաստանում շարունակում են իրականացնել կայուն արժութային փոխարժեքի ավանդական ռեժիմը՝ չնայած արտարժույթի զուտ ներհոսքի բարձր տատանողականությանը՝ ձևավորվում է տնտեսական աճը զսպող մակրոտնտեսական միջավայր: Նման պայմաններում կրճատվում է Հայաստանի տնտեսության արտահանման ներուժը՝ ուղղված եվրասիական երկրների՝ առաջին հերթին ՌԴ շուկաներ:

Նույն ճգնաժամային տարիներին և նույն պատճառներով կրճատվեց նաև դեպի ՀՀ օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը *(նկ.3):*

***Նկ. 3.* Ներդրումների ներհոսք և արտահոսք, սալդո (կապիտալի փախուստ)**



Աղբյուր: ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների բազա - http://www.cba.am/

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել արտարժույթի արտահոսքի ավանդական ուղին՝ անօրինական ֆինանսական արտահոսքը, որի գծով Հայաստանից տարեկան արտահոսում է ՀՆԱ մոտ 11-12%[48]-ին հավասար արտարժույթ:

Դեպի երկիր արտարժույթի ներհոսքի կարևոր ուղի է նաև արտաքին պարտքը: Հայաստանում արտաքին ազգային պարտքի ավելի քան 50%-ը Կառավարության և Կենտրոնական բանկի համախառն պարտքն է: Ընդ որում, դրա սպասարկումն առաջիկա տարիներին զգալի բեռ է ներկայացնում, հատկապես երկրի պետական բյուջեի համար:

Ազգային արժույթի փոխարժեքի վրա ազդեցության տեսանկյունից ակնհայտ է, որ արտաքին փոխառությունների ծավալների զգալի ավելացումը 2008թ.-ից հետո, պետք է արտացոլվեր նաև արժութային քաղաքականության վրա:

Նկ. 4-ից երևում է, որ սկսած 2009թ.-ից Հայաստանի կառավարությունն անընդհատ մեծացնում է արտաքին փոխառությունների ներգրավումը: Ընդհանուր պետական պարտքը 2017թ.-ի վերջի դրությամբ մոտեցել է ՀՆԱ-ի նկատմամբ 60% կրիտիկական սահմանին: Ավելին, արտաքին պարտքն ունի աճի միտում *(Նկ.4),* ինչը դեպի երկիր արտարժույթի ներհոսքի նշանակալի ուղի է: Ընդ որում, 2015թ. հունվարից մինչև 2018թ. հունիսի վերջ հայկական դրամի փոխարժեքի տատանողականությունը եղել է զրոյի շուրջ 1 տոկոսի սահմաններում, ինչը նորից վկայում է երկրում իրականացվող արժութային փոխարժեքի նպատակադրման

[48] Global Financial Integrity: http://www.gfintegrity.org/report/illicit-financial-flows-from-developing-countries-2004-2013/

քաղաքականության մասին՝ չնայած դրամական ագրեգատների արժութային կառուցվածքի փոփոխության դինամիկային և միտումներին:

***Նկ. 4.* ՀՀ պետական պարտքը (ՀՆԱ-ի %)**



Աղբյուր: ՀՀ ֆինանսների նախարարություն, պետական պարտքի մասին հաշվետվություն

Հաշվի առնելով Հայաստանում դրամավարկային կարգավորման առանձնահատկությունը՝ դրամի արժութային փոխարժեքի վրա զգալի ազդեցություն ունեցող գործոնների շրջանում՝ անհրաժեշտ է նշել նաև հենց արժութային և դրամավարկային կարգավորումը, որն իրականացվում է ՀՀ ԿԲ-ի կողմից:

***Նկ. 5.* Արտարժութային բանկային պարտավորությունների պարտադիր պահուստավորման նորման ՀՀ-ում**



Աղբյուր: ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների բազա – http://www.cba.am

«Դրամական իշխանությունների» կողմից արժութային շուկայի վրա ազդեցության վառ օրինակ է արտարժութային բանկային պարտավորությունների պարտադիր պահուստավորման քաղաքականությունը, որը 2014թ.-ի դեկտեմբերին փաստացիորեն կանգնեցրեց արժութային ճգնաժամը, որն առաջացել էր արտաքին գործոնների ազդեցության ներքո՝ կապված ռուսական ռուբլու ցնցումային արժեզրկման հետ *(նկ. 5)*:

Ավելի վաղ, հատկապես սկսած 2005թ.-ի վերջից մինչև 2014թ.-ի վերջը երկարաժամկետում արժութային շուկայի վրա ազդեցության առավել գործուն գործիք էին արժութային ինտերվենցիաները, որոնք ՀՀ ԿԲ-ը պարբերաբար կիրառում էր դրամավարկային քաղաքականության իրականացման ամբողջ ընթացքում *(նկ.6)*:

***Նկ. 6.* ՀՀ ԿԲ-ի արժութային ինտերվենցիաները**



Աղբյուր: ՀՀ Կենտրոնական բանկի տվյալների բազա - http://www.cba.am/

Այսպես, ամփոփելով վերը գրվածը՝ կարելի է ասել, որ ՀՀ դրամի արժութային փոխարժեքի վրա անմիջական ազդեցություն ունեցող գործոններում կարելի է առանձնացնել ինչպես շուկայական ուղիներ, այնպես էլ «դրամական իշխանությունների» կողմից ազդեցության մեխանիզմներ, որոնք կրում են ոչ շուկայական բնույթ:

ՀՀ դրամի արժութային փոխարժեքի ձևավորման գործոնների գնահատման նպատակով հեղինակների կողմից կառուցվել է 2 լագով VAR մոդել:

***Նկ. 7.* ՀՀ դրամի արժութային փոխարժեքի փաստացի և գնահատված արժեքները**



Մոդելում ներառվել են հետևյալ ցուցանիշները՝ արտարժույթով ավանդներ, ներմուծման ծավալ, ՀՀ ԿԲ-ի միջազգային պահուստներ, օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսք, օտարերկրյա մասնավոր տրանսֆերտների ներհոսք և արտահոսք, ինչպես նաև բինար փոփոխական կենտրոնական բանկի կողմից արժութային շուկայում իրականացվող միջամտությունների համար: *Նկ. 7-ն* ամփոփում է կառուցված մոդելի միջոցով ստացված արդյունքները և ներկայացնում է ՀՀ դրամի արժութային փոխարժեքի փաստացի արժեքները (NER), կառուցված VAR(2) մոդելի միջոցով գնահատված արժեքները (VAR NER), ինչպես նաև սցենարը, որը ենթադրում է, որ կենտրոնական բանկը չի միջամտել արժութային շուկայում:

Այսպիսով, ակնհայտ է, որ կայուն փոխարժեքի քաղաքականությունն ստեղծում է խորը և դժվար հաղթահարելի խնդիրներ: Բացառապես ազգային արժույթի շուկայական փոխարժեքը թույլ կտա վերականգնել հայկական ապրանքների մրցունակության համարժեքությունը ռուսական շուկայում և բարելավել ներքին շուկայում ազգային արտադրողների համեմատական առավելությունները, ինչպես նաև գործի դնել ԵԱՏՄ-ին անդամակցման հետ կապված բոլոր առավելությունները[49]: Այս նպատակով անհրաժեշտ է.

1. Վերանայել իրականացվող դրամավարկային քաղաքականությունը, պահպանել երկրում իրական գնաճին համապատասխանող թիրախ՝ տնտեսական աճի խթանման նպատակով: Ընդ որում, անհրաժեշտ է նպատակադրել դրամի արժեզրկումից գնաճի զգալիորեն հետ մնալը,

[49] Э. М. Сандоян. Перспективы выбора альтернативных подходов к политике валютного регулирования в Армении. Журнал «Финансы: теория и практика», N 1-2017.

ինչը կապահովի արտահանման խթանում, ինչպես նաև տրանսֆերտներից կախվածություն ունեցող անձանց իրական եկամուտների աճ:

2. Հրաժարվել արժութային փոխարժեքի կայունության ապահովման ոչ շուկայական մեխանիզմներից և իրականացնել ազատ լողացող արժութային փոխարժեքի և չմիջամտության (արժութային ինտերվենցիաներ թույլ տալ միայն պիկային թռիչքների հարթեցման և արժութային շուկայում աժոտաժային պահանջարկ թույլ չտալու նպատակով) քաղաքականություն, ինչը թույլ կտա կարճաժամկետում ապահովել Հայաստանի ֆինանսական շուկաների պաշտպանություն արտաքին ռիսկերից և արտաքին շուկաներում, առաջին հերթին Ռուսաստանում, հայկական ապրանքների մրցունակության վերականգնում: Ընդ որում, անհրաժեշտ է իրականացնել համապատասխան հաշվարկներ «հարցի գինը» բացահայտելու համար, այսինքն, դրամի արժեզրկման ազդեցության ներքո գնաճի աճի հետևանքով հնարավոր կորուստների փոխհատուցմանն ուղղելու համար անհրաժեշտ ռեսուրսների ծավալների սահմանում:

ԻՆՉ ԱՆԵԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

գիտագործնական խորհրդաժողով

Խմբագիր՝ **Լուսյա Մեհրաբյան**

Հրատ. խմբագիր՝ Արքմենիկ Նիկողոսյան
Տեխն. խմբագիր՝ Արարատ Թովմասյան
Սրբագրիչ՝ Արփի Անտոնյան
Էջադրումը՝ Նարինե Հովհաննիսյանի
Կազմը՝ Վիտալի Ասրիևի

«Անտարես» հրատարակչատուն
ՀՀ, Երևան 0009, Մաշտոցի պող. 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 58 76 69
antares@antares.am
www.antares.am

9 789939 763323

Հայաստանի արդյունաբերողների
և գործարարների միություն

Երևանի պետական համալսարան
Տնտեսագիտության և
կառավարման ֆակուլտետ

ԿՀՏարեն